


Նորար ԶԱԼՅՄՅԱՆ



Լիբանանի հայ համայնքը
Երկրի սոցիալ-սուսական և
ժաղաժական կյանքում



9(47.925)
9-15

Նվիրում եմ
հորս աևանի հիշապակին

Nubar D. CHALEMIAN

*The Armenian community
in Lebanon in social-economic and
political life of the country
(in seventies)*

Նուբար Շալեմյան ԶԱԼՈՒՅԱՆ

Լիբանանի Հայ Համայնքը
Երկրի սոցիալ-տնտեսական
և քաղաքական կյանքում

(1970-ական թթ.)

Արդյունք շնորհած է Տէ՛ս
Կոչ Եղանգրության թանգառությ
Գրադարանից : Խնդիրներից :

Հ. Վահագին
06.03.06.

Իմ խորին նրախտագիտությունն եմ հայտնում
Սամվել Վանցիկի Դարբինյանին
գրքույկի հրատարակմանը Եյլիքական աջակցություն
ցացաբերելու համար:

YEREVAN 2002

ԵՐԵՎԱՆ 2002



ՀՏԴ 941 (479.25)

ԳՄԴ 63.3 (23)

Չ 151

Չալճյան Նուրար

- Չ 151 Լիբանանի հայ համայնքը Երկրի սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքում (1970-ական թթ.): Ուսումնասիրություն - Եր.: Սշակույթի հայկական ֆոնդ, 2002, 100 էջ:

Գիրքն առնչվում է լիբանանահայ համայնքի պատմությանը, ծագութին, տնտեսությանը, կրթական հարցերին, մշակութային ու քարեսիրական հաստատությունների գործունեությանը՝ կազմավորման շրջանից յոթանասունական թվականները ներառյալ: Աշխատության մեջ օգտագործված փաստագրական հարուստ նյութի հիման վրա հեղինակը լուսաբանում է լիբանանի հայ համայնքի ազգային կյանքի զարգացման կարևոր խնդիրները և նկարագրում դեպքերի ընթացքը:

ԳՄԴ 63.3 (23)

Չ 0503020913 2002
768 (01) 2002

ISBN 99930 - 815 - 5 - 8

Մշակույթի Հայկական Ֆոնդ

© Ն. ՉԱԼՃՅԱՆ 2002թ.

Լիբանանի Հայ Համայնքը Երկրի սոցիալ-տնտեսական և քաղաքական վայրերին

5

ԱՌԱՋԱԲԱՆ

Մեծ եղեռնի հետևանքով Հայ ժողովրդի արևմտահայ հատվածի տարրեր բեկորներ ապաստան գտան Մերձավոր Արևելքի արարական մի շարք երկրներում, մասնավորապես՝ Լիբանանում, Սիրիայում, Իրաքում, Եգիպտոսում և Հորդանանում: Արար ժողովուրդը բարեկամաբար ընդունեց իրենց Հայրական Հողերից բռնի կերպով քչված Հայերին, և պատահական չէ, որ վերջիններս վերոհիշյալ երկրներն ընդունեցին որպես Հարազատ միջավայր և իրենց երկրորդ Հայրենիք:

Աշխարհով մեկ ցրված Հայության մեջ նշանակալի դեր է ունեցել և այժմ էլ ունի սփյուռքի լիբանանյան հատվածը, որն իր Հարածուն կենսունակությամբ, կազմակերպվածությամբ իր գոյության շուրջ ություն տարիների ընթացքում չշշափելի կնիք է դրել Լիբանանի տնտեսական, քաղաքական, մշակութային, գիտության և արվեստի զարգացման վրա, ինչպես նաև նպաստել է տարրեր երկրների Հայկական Համայնքների գոյատեման դժվարին աշխատանքներին ու օժանդակել նրանց առաջընթացին:

Լիբանանում ապաստանած Հայության զարգացման գործընթացը և նրա Հանարավորությունները կախված են եղել Լիբանանի ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական պայմաններից: Հենց այդ կարևոր պայմաններից ենելով է, որ լիբանանահայությունը տարիների ընթացքում, աստիճանաբար կարողացավ ձեռք բերել սեփական դիմագիծ, ունեցավ զարգացման ու գործունեության ուրույն սահմաններ և 1970-ական թթ. սկզբներին արդեն կենտրոնական տեղ գրավեց Համայնքյուռքը:

Լիբանանում հաստատված Հայությունը սկզբից ևեթ ընդունել է ազգային մեկուսացված կյանքից հրաժարվելու, Լիբանանի ժողովուրդը կազմող կրոնական տարրեր Համայնքների ու էթնիկ խմբերի հետ փոխադարձ հասկացության գալու, նրանց հետ բարեկամություն հաստատելու և Համագործակցելու քաղաքականություն: Այսպիսի քաղաքականության ընդունումը իրատեսական ու ճիշտ քայլ էր, որովհետ լիբանանահայ կյանքի զարգացումը և ընդ անրապես Հայ տարրի գոյա-

ՆՈՒԲԱՐ ԶԱԼՀՄՅԱՆ

6

տևումն ու նրա գործունեության հեռանկարները երկրում պիտի երաշխավորվեին և ապահովեին վերը թվարկած գործուներով:

Լիրանանի քաղաքական հայ գործիչները, ենելով երկրում առկա պայմաններից, ընտրեցին քաղաքական մի ուղեգիծ, որի հիմքում ընկած էր հայերի ու տեղաբնակ արար ժողովրդի միասնությունը ապահովելու խնդիրը, այն է՝ հայությանը մասնակից դարձնել բոլոր այն շարժումներն, որոնք ուղղված են Հասարակության ընդհանուր շահերի պաշտպանությանը: Միմիայն արար ժողովրդին նեցուկ կանգնելու, նրա հետ գործակցելու և պայքարելու չնորհիվ պիտի ամրապնդվեր նրանց բարեկամությունը, որը, ինչպես հետագա տարիները վկայեցին, հանդիսացավ հայության ազգային ապահովության երաշխիքը և նրա քաղաքական, տնտեսական ու մշակութային կյանքի զարգացման գրավականը:

Հետևելով ընտրված քաղաքական ուղուն, լիրանանահայությունը տեղաբնակ արար ժողովրդի հետ միասին երկարամյա համառ պայքարով ձեռք բերեց ժողովրդավարական որոշակի աղատություններ, որոնց հիման վրա նա զարկ տվեց մշակույթի զարգացմանը, արձանագրեց զգալի առաջադիմություն տնտեսական կյանքում, մի երևույթ, որը, փաստորնն, չուներ իր նմանակը արարական հարեսան երկրներում, ուր ապաստան էին գտել բազմահաղար հայեր: Դրա պատճառներին անդրադարձել ու ճիշտ գնահատական է տվել լիրանանի հայ հայտնի գործիչ Հարություն Մաղեյանը, նշելով, որ «Հայ և արար միասնական պայքարով միայն ձեռք ճգված դեմոկրատական որոշ աղատություններուն չնորհիվ է, որ լիրանանահայ ժողովրդային զանգվածները արարին հետ միասին ստացած են ավելի նպաստավոր պայմաններ՝ առաջադրելու իրենց քաղաքական, տնտեսական և ընկերային խնդիրները և պահանջելու անոնց իրավործումը և վերջապես պաշտպանելու իրենց շահերը»:

Լիրանանի հայերը ութսուն տարիների ընթացքում ամրապնդեցին իրենց բարեկամությունը տեղի արար ժողովրդի հետ և այսօր էլ զորավիգ են կանգնում լիրանանի և Հայաստանի Հանրապետության միջև ստեղծված բազմարնույթի կապերի զարգացմանը:

Լիրանանահայերը տասնամյակների ընթացքում շոշափելի հաջողությունների հասան ոչ միայն իրենց, այլև լիրանանայան արար ժողովրդի մշակույթի զարգացման ասպարեզում: Նրանք նպաստեցին ու ներկայում էլ շարունակում են անգնահատելի օգուտ մատուցել նաև երկրի տնտեսության, առևտության, առևտության ու կյանքի բոլոր ոլորտների առաջընթացին:

Լրանանահայ համայնքի գարգացման վերընթաց ուղին շարունակվեց մինչև 1975 թ., երբ այս խաղաղ երկրում անդորրությանը փոխարինելու եկավ քաղաքացիական ներայրասպան պատերազմը, որը բացասական աղեցություն գործեց լիրանանահայության ձեռք բերած նվաճումների վրա:

Քաղաքացիական պատերազմի պատճառով լիրանանում առաջացած տագնաապը բազմաթիվ դժվարություններ ստեղծեց հայ համայնքի խաղաղ ու ապահով կյանքի համար: Այն հարցականի տակ դրեց և աննախաղեա փորձության ենթարկեց լիրանանահայ ագգային կյանքի կառույցը իր կրթական, մշակութային և տնտեսական բոլոր բաղկացուցիչ միավորներով:

Պատերազմի ժամանակ հայկական քաղաքական բոլոր հոսանքների կողմից մշակվեց ու որդեգրվեց դրական չեզոքության քաղաքականությունը: Այդ քաղաքականությունը ոչ միայն բխում էր լիրանանահայության շահերից, այլև, արտահայտելով այդ շահերը՝ հակաղորդվեց լիրանանը բաժան-բաժան անելու բոլոր ծրագրերին և պաշտպանեց միասնական, անկախ ու ժողովրդավարական լիրանանը:

Անվիճելի իրողություն է, որ հայ համայնքը լիրանանում ստեղծված ճգնաժամի շրջանից ի վեր առավելագույն ճիգեր գործադրեց և գտնեց միշտ ապրել ազգային կյանքով, քաղաքական դժնդակ պայմաններում նույնիսկ ներդրեց իր բոլոր հնարավոր միջոցները, որպեսզի ազգային կենտրոնները կարողանային շարունակել իրենց գործունեությունը, համախմբել հայության իրենց շուրջը և ավելի սերտացնել լիրանանահայության կապերը մայր Հայրենիքի հետ:

Հակառակ, որ լիրանանը ավելի քան տասնհինգ տարի գտնվեց քաղաքացիական պատերազմի թուրուրուի մեջ, այնուամենայնիվ, հայությունը կարողացավ մեծ աշխատամք տանել իր կրթական օջախները պահպանելու գործում, ապահովել իր թերթերի հրատարակությունները, կազմակերպությունների և բազմապիսի միությունների գործունեությունը: Բավական է հիշել, որ համայնքում կազմակերպվել են Հարյուրագոր բազմապիսի միջոցառումներ՝ զրական երեկոներ, հրատապ հարցերին նվիրված շահեկան դասախոսություններ, հավաքույթներ, Հորելյանական հանդիսություններ և այլն:

Այսօր, երբ Հետադար հայացք ենք նետում անցյալին ու ականատես լինում ներկա դրությանը, կարող ենք առանց վարանելու ասել, որ լիրանանահայը միշտ բաժնեկից է եղել լիրանանայան կյանքին: Նա բոլոր համայնքների նման հավասար իրավունքներ է վայելում և մնում է այդ

7

ՆՈՒԲԱՐ ԶԱԼՀՄՑԱՆ

8

Երկրի հարազատ քաղաքացին, նրա օրինական համայնքներից մեկի ներկայացուցիչը, որը պատրաստ է նույնիսկ երկրի ներքին ճգնաժամի պայմաններում իր անկեղծ ու հայրենասիրական կեցվածքով նպաստել երկրի ծաղկմանն ու վերելքին:

Նկատի ունենալով ի սփյուռ աշխարհի ցրված հայության կարևորագույն բեկորներից մեկը լինելու հանգամանքը, մեր առջև խնդիր ենք դուել ուսումնասիրել Լիրանանի հայկական համայնքը երկրի ընկերային-տնտեսական և քաղաքական կյանքում 1970-ական թվականներին, որին և նվիրված է սույն աշխատությունը:

Այս հարցուն ունի այժմեական գիտաքաղաքական կարևոր նշանակություն: Նախ, որ հիշյալ ժամանակահատվածում երկրում տեղի են ունեցել քաղաքական այնպիսի իրադարձություններ, որոնք խանգարեցին հայ համայնքի զարգացմանը և բացասական ազդեցություն գործեցին նրա՝ երկար տարիների ընթացքում ճեռք բերած նվաճումների վրա: Մյուս կողմից, երկրի քաղաքական ընդհանուր վիճակի լուսարանումը հնարավորություն կտա ճիշտ պատկերացում կազմել Լիրանանում առաջացած տագնապի և մասնավորապես հայ համայնքի խաղաղ կյանքի համար ստեղծված բազմաթիվ դժվարությունների ու խոշնդուների մասին:

Աշխատության նպատակն է փաստական նյութերի վերլուծման հիման վրա լուսարանել Լիրանանի հայ համայնքի ընկերային-տնտեսական վիճակը քաղաքացիական պատերազմի նախօրյակին և դրանից հետո ընկած ժամանակաշրջանում: Այս հարցը Լիրանանի հայ համայնքի նորագույն շրջանի պատմությանը անդրադարձ ուսումնասիրողների տեսադաշտից գրեթե դուրս է մնացել: Աշխատության մեջ որպես կենտրոնական հարցեր են դիտվում քաղաքացիական պատերազմի առաջացման պատճառների, լիրանանահայության որդեգրած դրական չեղորություն պահպանելու քաղաքականության լուսարանումը, այդ քաղաքականության հիմնական նպատակների բացահայտումը, անդրադարձ Լիրանանի ընդհանուր քաղաքական իրադրությանը և հայկական քաղաքական հարցերին: Եվ, վերջապես, կարևոր հարցերից մեկը, որը գտնվել է մեր ուշադրության կենտրոնում, վերաբերում է քաղաքա-

Աշխատության մեջ զգալի ուշադրություն է դարձված 1978 թ. սեպտեմբերին թերութիւն հայկական թաղամասերի ու շրջանների վրա Լիրանանի աջակողյան ուժերի հարձակումների ու հայերի ինքնապաշտպանության հարցերին: Եվ, վերջապես, կարևոր հարցերից մեկը, որը գտնվել է մեր ուշադրության կենտրոնում, վերաբերում է քաղաքա-

Լրացնաւ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԿՐՈՒ ԱՊԵՐԱ-
ՏԱՏԱՎԱԿԱՆ և ԲԱԴԱՅԱԿԱՆ ԿԱՍՏԵՐԻՆ

9

ցիական պատերազմի ու հայ համայնքի նկատմամբ Խորհրդային Միության ունեցած դիրքորոշմանը և լիրանանահայության ու մայր Հայրենիքի կապերի սերտացման անհրաժեշտության խնդիրներին:

Լիրանանի հայկական համայնքի մեր կողմից վերցված ժամանակահատվածի պատմությունը հատուկ ուսումնասիրության առարկա չի դարձել, և սփյուռքագիտության մեջ գիտական շրջանառությունում այդ մասին առանձին աշխատություններ տակավին չկան: Սակայն հարկ է նշել, որ որոշ հեղինակներ իրենց մենագրություններում և հատկապես հոդվածներում անդրադարձել են Լիրանանի հայ համայնքի պատմության առանձին ասպեկտներին: Նրանք, մշակելով իրենց հետաքրքրող բազմաթիվ հիմնախնդիրներ և պատասխան տալով շատ հարցերի, նպատակ չեն ունեցել մանրամասնորեն ներկայացնել և լուսարանել Լիրանանի հայկական համայնքի պատմությունը: Այդ հեղինակները անդրադարձել են համայնքի կյանքի գույտ այն կողմերին, որոնք անմիջականորեն կապված են եղել իրենց առջև դրված խնդրի հետագուտման հետ:

Սույն աշխատության տարրեր հատվածների լուսարանման համար օգտակար են եղել արևելագետներ Ն. Հովհաննիսյանի (1), Լ. Վոլոնովի (2.3), Ռ. Գորբատովի ու Զերկասկու (4), Պ. Սարացյանի (5), Լ. Մեդիկելոյի (6), Հ. Թոփուզյանի (7), և Ա. Դալլարյանի (8) մենագրությունները:

Հիշատակության արժանի է Ն. Հովհաննիսյանի «Լիրանանիան ճգնաժամը» և Լիրանանի հայ համայնքի դիրքորոշումը» գրքույկը, ուր հեղինակը գիտական բժանմնությամբ լուսարանում է Լիրանանում սանձազերծված քաղաքացիական պատերազմի պատճառները և բնույթը: Ցույց է տրվում հայ համայնքի դերը և նշանակությունը Լիրանանի հասարակական-քաղաքական և տնտեսական կյանքում:

Հետաքրքրի են նաև Լ. Վոլոնովի ուսումնասիրությունները՝ կապված լիրանանիան հակամարտության առաջացման հարցում Ամերիկայի Միացյալ Նահանգների ու Խորայելի խաղացած դերի բացահայտման հետ, քաղաքացիական պատերազմի ընթացքի նկարագրումը և այլն:

Ափուռքահայ պատմաբաններն ու հասարակական գործիչները իրենց հերթին ևս նշանակալի ավանդ են ներդրել լիրանանահայ համայնքի պատմության նորագույն շրջանի ուսումնասիրման ասպարեզում: Նրանց աշխատություններում և հոդվածներում պարունակվում է փաստական հարուստ նյութ: Այդ ուսումնասիրություններից որպես օրինակ հիշատակման արժանի է Ս. Վարժապետյանի «Հայերը Լիրանանի մեջ» (9) ընդհանուր խորագրով շորս հատորից բաղկացած աշխատությունը: Հեղինակի երկարամյա աշխատանքը առնչվում է լիրա-

նանահայ համայնքի պատմությանը, մշակույթին, տնտեսությանը, կրթական հարցերին, մշակությանը ու բարեսիրական հաստատությունների գործունեությանը՝ կազմավորման շրջանից մինչև յոթմանասունական թվականները։ Չնայած աշխատությունն ունի նկարագրական բնույթ, սակայն այն պարունակում է հարուստ փաստագրական տվյալներ ու ժամանակագրական տեղեկություններ։

Մեր աշխատությունը շարադրելիս օգտվել ենք Լիբանանի հայտնի գործիչ Հ. Մադեյանի «Հայության ազգային և գաղափարական հարցերու մասին» (10) ուսումնասիրության մեջ առաջ քաշված մի շարք տեսական մոտեցումներից։ Հեղինակը նրանում բարձրացրել է մի շարք հարցեր, օրինակ, լիբանանահայության և տեղի արար ժողովրդի միասնական պայքարի անհրաժեշտությունը, հայ համայնքը և լիբանանյան պայմանների բնորոշ առանձնահատկությունը և այլն։ Այնտեղ նա գտնում է, որ հայ և արար ժողովուների միասնական պայքարի քաղաքականությունը եղել է մեծապես բարերար թե՛ հայի և թե՛ արարի համար։ Հեղինակը պայքարի միասնական քաղաքականությամբ է պայմանագրում արար ժողովրդի մեջ ստեղծված վստահությունը հայության հանդեպ, ինչպես նաև Լիբանանում հայերի տնտեսական, քաղաքական ու ընկերային որոշ ագատությունների առկայությունը։

Վերջին տարիներին Լիբանանի նորագոյն պատմության և հայ համայնքի ուսումնասիրությամբ հանդես են եկել նաև արար պատմաբաններ։ Այս երևոյթը մեզ՝ Հայերին համար ուրախալի է, քանի որ արար ընթերցողը հնարավորություն է ունենում մոտիվից ծանոթանալու հայ ժողովրդի պատմությանը, նրա անցած ուղուն և ճիշտ ըմբռնելու արարական երկրներում նրա գոյության իրական պատճառները։

Հրատարակված գործերից հիշատակության արժանի է Սալեհ Զահր էլ Դինի «Հայերը-ժողովուրդ և հիմնահարց» (11) աշխատությունը, որը լուս է տանել թերյութում 1988 թ։ Ուսումնասիրությունը արժեքավոր է նրանով, որ Հեղինակը խոր վերլուծության է ենթարկում ու համակողմանիորեն քննում օսմանյան կայսրության շրջանում հայ ժողովրդի վիճակը, արծարծում հայկական ցեղասպանության և հայ ժողովրդի ի սփյուռ աշխարհի ցրված լինելու պատճառները։ Նա առանձին գլուխ է հատկացրել լիբանանահայ համայնքին ու փաստական նյութերի հիման վրա մանրամասնորեն լուսաբանում է Լիբանանում հայ համայնքի ձեռք բերած հաջողությունների պատճառները, նրա դերը երկրի տնտեսության, արդյունաբերության, առևտուրի և ազատ գործունեության ասպարեզներում։ Հեղինակը առանձին ուշադրություն է դարձ-

նում Լիբանանի քաղաքացիական պատերազմի ժամանակ հայ համայնքի որդեգրած դրական չեղոքության քաղաքանությանը և բարձր գնահատում Հայերի նման դիրքորոշումը։ Նա պատասխանում է այն Հարցին, թե ինչու Հայերը որոշեցին չմասնակցել եղայրասպան պատերազմին և որոնք էին հակամարտության մասնակից բոլոր քաղաքական ուժերի նպատակները Հայերին այդ պատերազմի մեջ ներագրավելու հարցում։ Դրվագանքի խոսքեր ուղղելով Հայ համայնքին, Հեղինակը մյուս կողմից դատապարտում է լիբանանյան աջերին իրենց սանձատվերած հականայիկական գործողությունների համար, որոնք, ինչպես հայտնի է, ողբերգական հետևանքներ ունեցան 1978 և 1979 թվականներին։ Սալեհ Զահր էլ Դինը իր աշխատության մեջ իրավացիորեն նշում է, որ Լիբանանի հայ համայնքը ձգտել է միշտ ապրել համերաշխորեն և հավասարապես համագործակցել բոլոր համայնքների հետ և հանդես գալիս Լիբանանի միասնականության, ինքնուրույնության և նրա տարածքային ամրողականության պաշտպանությամբ։

Արարական արևելքի ազգային փոքրամանությունների և, մասնագորապես, այդ երկրների քաղաքական կյանքում քրիստոնյա համայնքների ունեցած դերի և մասնակցության հարցերին անդրադարձել են արևմուտքի պատմաբաններն ու սոցիոլոգները։ Սակայն նրանց աշխատություններում շատ հարցեր դուրս են մնացել իրենց ուսումնասիրման տեսադաշտից և որոշ հարցեր էլ մակերեսային վերլուծության հետևանքով, փաստորեն, վեճերի տեղիք են տալիս։

Այդ տեսակետից կարելի է նշել Ռ. Բետսի (12) աշխատությունը և Ռ. Մակ-Լորինի (13) կողմից հրատարակված ժողովածուն։

Մերձավորարևելյան հիմնահարցերի մասնագետ Ռ. Բետսի «Քրիստոնյաները Արարական արևելքում-քաղաքական ուսումնասիրություն» աշխատությունը հրատարակվել է Լոնդոնում։

Իր աշխատության հատվածներից մեկը հեղինակը նվիրել է Սիրիայի և Լիբանանի քաղաքական կյանքում Հայերի մասնակցության, նրանց տնտեսական գործունեության, համայնքի կյանքում եկեղեցու խաղացած դերի և այլ Հարցերի պարզաբանմանը, սակայն այնտեղ բացակայում է բագարար լուսաբանությունը։ Հեղինակը, խոսելով Հայության կենտրոնացման, զարգացման ու բարգավաճման մասին, պարզապես չի խորացել պատճառների մեջ և այդ ամենը, ըստ նրա, կարծես կապվում է երկրի մեծամասնամբ քրիստոնյա ազգարնակցությունից կաղմամատ լինելու և, մասնավորապես, մարոնի համայնքի գերիշխանության հանգամանքների հետ։

Իսկապես Լիբանանում քրիստոնյա տարրի ունեցած գերակշռության պարագան ևս դարձավ օժանդակող գործոն, որպեսզի հայությունը արագորեն հասներ ինքնահաստատման: Բայց դա ընավ չէր կարող վճռական լինել: Եվ սխալ կլիներ հայության առաջադիմությունն ու ծաղկումը Լիբանանում պայմանավորել միմիայն քրիստոնյա տարրի առկայությամբ կամ ժամանակին նրա ունեցած գերակշռությամբ: Լիբանանում հայ համայնքի զարգացումը՝ քրիստոնյա, մահմեդական և այլ համայնքների կողմից հայության ներկայությունը ճիշտ ըմբռնելու արդյունք էր, որի շնորհիվ հայությունը ընկերային-տնտեսական և մշակույթի զարգացման ասպարեզներում կարճ ժամանակում արձանագրեց լուրջ առաջադիմություն:

Մեր աշխատության շարադրման համար հիմնական խարիսխ են հանդիսացել սկզբնաղյուրները:

Մեր կողմից զգալի նյութեր են վերցված Լիբանանում լույս տեսնող հայկական քաղաքական հոսանքներին պատկանող մամուլի նյութերից: Հատկապես Հետաքրքիր փաստական նյութերը քաղել ենք «Ազգակ» (14), «Կանչ» (15), «Արարատ» (16), «Զարթոնք» (17), «Կանչ» (18) (Հետաքայում վերանվանված «Ազգային մշակույթի») օրաթերթերից, ինչպես նաև «Ազգակ շաբաթօրյակի» (19) և «Հասկ» (20) հայագիտական տարեգրքի մեջ Լիբանանի հայ համայնքի մասին տպագրված բազմապիսի հոդվածներից, որոնք նշանակալի չափով օգնել են ուսումնասիրության մեջ առաջ քաշված Հարցերի մշակմանը:

Հարկ է նշել, որ լիբանանահայ մամուլի էջերում զետեղված են ոչ միայն հայ համայնքի ներքին մտահոգություններն արտահայտող գիտական-քննադատական Հոդվածներ ու մեկնարանություններ, այլև այն-տեղ չոչափում է երկրի ներքաղաքական իրադրությունը, հրապարակում են նաև պետական ու քաղաքական հայտնի գործիչների ելույթներ ու հայտարարություններ, բազմապիսի այլ փաստական նյութեր ու տվյալներ, որոնք անմիջականորեն առնչվում են մեր ուսումնասիրությանը:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Լիբանանի հայաբնակ կենտրոնները և հայ համայնքի թվաքանակը

Մեծ եղեռնից հետո, ինչպես Մերձավոր Արևելքի արարական երկրներում, Լիբանանում ևս ապաստան գտան թուրք ջարդարարներից հրաշքով փրկված բազմահազար հայեր:

1922 թ. հանդիսացավ նոր շրջան Լիբանանի հայ համայնքի ստվարցման համար: Հայտնի է, որ այս ժմկականին ֆրանսիան դիմեց թուրքիային Կիլիկիան: Ֆրանսիական իշխանությունների այդ քայլը պատճառ դարձավ, որ մեծ թվով հայ գաղթականներ իրենց Փիղիկական գոյությունը թուրքական հավանական վտանգից պահպանելու համար հարկադրված լինեն հեռանալ Կիլիկիայից ու հանգրվան գտնել Լիբանանում:

1920-ական թթ. Լիբանանում հայերի ընդհանուր թիվը կազմել է մոտավորապես 42.641 (1), նրանք տեղաբաշխված են եղել ինչպես մայրաքաղաք Բեյրութում, այնպես էլ Տրիպոլի, Սայդա, Սուր, Զահլե, Ալթիլիս և Լեռնային Լիբանանի շրջաններում:

Հայ գաղթականների նոր ալիք դեպի Լիբանան սկսվեց երկրորդ աշխարհամարտի նախօրեին: 1939 թ. ֆրանսիացիները կրկին գործարքի մեջ մտնելով թուրքիայի հետ և պատերազմի սկսման նախանշաններն զգալով, փորձեցին սիրաշահել նրան, զի՞նելով Սիրիայի տարածքի մեջ գտնվող Ալեքսանդրետի սանջակը:

Ալեքսանդրետի սանջակը կամ, ինչպես ընդունված է անվանել, Խակենդերունը, եղել է Սիրիայի հայահոծ շրջաններից մեկը: Սանջակի հայերը, որոնք հիմնականում մուսալեոցիներ են, կազմել են մոտավորապես 18.000 մարդ: Տարածքը թուրքիային կցվելուց հետո անմիջապես դատարկվեց հայ աղքարնակչությունից, և գաղթական հայերը եկան ընկույթուն հաստատելու Լիբանանում: Հայության գաղթը դեպի Լիբանան զգալի փոփոխություն առաջացրեց հայ համայնքի տեղաբաշխման մեջ:

ՆՈՒԲԱՐ ԶԱԼԸՄՅԱՆ

14

Կենտրոնանալով երկրի տարբեր քաղաքներում, մասնավորապես մայրաքաղաք Բեյրութում ու նրա արվարձաններում, հայությունը սկսեց հարմարվել նոր պայմաններին ու տեղի սովորություններին: Տարիների ընթացքում աստիճանաբար կազմակերպվում էր Համայնքային կյանքը, որը սկսեց նշանակալի տեղ գրավել ու կարևոր դեր խաղալ Իրանականի կյանքում:

Մինչև 1970-ական թթ. կեսերը, այսինքն, նախքան քաղաքացիական պատերազմի սկսվելը, նկատելիորեն աճում էր լիբանանահայության թիվը՝ ոչ միայն բնական աճի, այլև հարևան արարական երկրներից, հատկապես Սիրի այից, Եգիպտոսից և Իրաքից, զգալի թիվով հայ մտափորականների, առևտրականների, արհեստագորների և այլ խավերի ներկայացուցիչների շարունակական գաղթի չնորջիվ:

1950-60-ական թթ. վերոհիշյալ երկրներում բնորոշ քաղաքական վայրիվերումներն ու տնտեսական անբարենպաստ պայմանները պատճառ դարձան, որ Հայ Համայնքները այնտեղ Համեմատաբար նոսրանան, և դրանց Հաշվին ստվարանա լիբանանահայ Համայնքը:

Միրիայում, Եգիպտոսում և Իրաքում մի կողմից՝ Հակաժողովրդավարական միջոցառումները և առաջադիմական ու դեմոկրատական ուժերի դեմ ձեռնարկված հալածանքներն ու հետապնդումները, մյուս կողմից՝ տնտեսական դժվարությունները, առևտրի ասպարեզում մտցված կորուկ սահմանափակումներն ու ազատ տնտեսական գործունեություն ծավալելու արգելքները չէին կարող շատիպել Հայության շահագործող մասին Հարկադրաբար հեռանալ այդ երկրներից ու ապաստան գտնել ապահով և Համեմատաբար ազատություններ ունեցող Լիբանանում (2):

Բացի այդ, Հայության հոսքը դեպի Իրանան կապված էր նաև մեկ այլ կարևոր հանգամանքի հետ: Շատ երկրներում տարվող ազգայնացման քաղաքականություններ աստիճանաբար տարածվեց նաև կրթական Համակարգի վրա: Սա բավականին դժվարություններ ու խոչընդոտներ ստեղծեց տեղի Հայկական ամենօրյա գարժարանների կազմակերպման և ընդհանրապես, դրանց գործունեության համար, և դա պատճառ դարձավ, որ զգալի թիվով ուսուցիչներ տեղափոխվեն Իրանան: Եվ, ընականաբար, ուսուցչական կազմի նոսրացման հետ նվազեց նաև սովորող աշակերտության թիվը:

Հայության հոսքը Իրանան մինչև քաղաքացիական պատերազմի րոնկվել դարձավ տեսական ընթացք, որը մեծապես նպաստեց ազգային գործունեության աշխուժացմանը:

Լրասանման և Համայնքի լրականության սութեաւտեսասանն և բարեաւական կյանքում

15

1970-ական թվականներին հայ Համայնքի թիվը Լիբանանում անցնում էր 200 հազարից: Հայության հիմնական զանգվածը՝ շուրջ 80 տոկոսը, կենտրոնացված էր մայրաքաղաք Բեյրութում, իսկ մնացած հատվածը տեղաբաշխված էր Լեռնալիբանանում և երկրի զանազան շրջաններում:

Լիբանանահայության հիմնական կենտրոնը՝ Բեյրութը, բնակչության թիվով ու կազմակերպվածության տեսակետից առաջատար դեր է ունեցել և ներկայումս էլ ունի: Այն կազմում է Համայնքի կորիգը: Մայրաքաղաքում բնակվող Հայերը քաղաքի թիվ՝ արևելյան և թիվ՝ արևմտյան շրջաններում ունեն իրենց թաղամասերը, ինչպես Բուրջ Համուղը կամ Անդր Նահրը, Էշրեֆիյեն, Նահր Էլ Մոթը, Հայաշենը, Թրատը, Նոր Մարաշը, Նոր Հաճընը, Քարանդիխան, Ամանուր, Սին Էլ Ֆիլը, Նորալենը, Խալի Բաղավին կամ Բըմելյը, Թիրոն և այլն: Այս թաղամասերից շատերը գուտ հայարնակ են, սակայն կան նաև թաղամասեր, որոնք բնակեցված են Հայերով և այլ Համայնքներով:

Բեյրութի և նրա շրջակա արգարձաններում ապրող Հայության առավել հավանական թվաքանակի, ինչպես նաև Հայ ազգարնակչության տարիքային խմբավորումների և այլ տվյալների մասին ընդհանուր պատկերացում կազմելու նպատակով ստորև ներկայացնում ենք երկու աղյուսակ, որոնք կազմվել են 1979 թ. լիբանանահայ մի խումբ երիտասարդների նախաձեռնությամբ պատրաստված Հատուկ Հարցաթերթիկների արդյունքների հիման վրա: Այդ աղյուսակների տվյալները վերլուծության է ենթարկել սոցիոլոգ Զ. Հայկացյանը:

Աղյուսակ 1

**Հայարնակ կենտրոններում տարիքային խմբավորումները
արտահայտված թվերով (արական/իգական)**

Տարիքային խմբավորում	Շրջաններ						Ընդհանուր գումար	
	Արևմտյան բնակչություն	Եղանակից	Բուրջ	Նահր Էլ Մոթ	Աթուշա	Ա. Անձար	Արական իգական	
0-4	24/32	6/8	12/9	10/16	53/54	6/10	111	129
5-9	33/44	11/16	25/33	22/22	106/77	16/12	213	194
10-14	21/35	18/19	49/54	56/42	72/47	27/29	243	226
15-19	53/51	33/32	89/71	51/71	63/45	44/41	333	311
20-24	54/43	39/35	85/76	84/43	36/41	52/33	350	271
25-29	31/36	16/17	24/16	33/23	22/65	35/26	161	183
30-34	30/43	8/10	16/55	13/12	36/55	17/10	120	155
35-39	32/40	5/17	10/41	13/26	47/47	9/15	116	186
40-44	30/33	11/28	21/39	12/40	46/40	12/21	132	201
45-49	26/35	23/25	34/47	22/36	52/31	16/24	173	198

ՆՈՒԲԱՐ ԶԱԼՀՄՅԱՆ

16

Տարիքա- յին խմբավո- րում	Շրջաններ						Ընդհանուր գումար	
	Արևմտյան Քեյոռ	Եշտեֆիյէ	Բուլղ- րակուղ	Նարի Էլ Սոր	Աթրիյան	Այնձար	արական իգական	
50-54	36/35	20/16	49/29	40/17	38/15	20/23	203	135
55-59	21/24	21/9	27/17	25/10	18/10	27/10	139	80
60-64	36/20	13/5	25/3	17/4	7/12	8/2	106	46
65-69	23/21	8/1	5/12	8/4	10/9	7/7	61	54
70-74	11/16	0/3	6/1	0/0	3/4	4/4	24	28
75 և բարձ ընդամենց	11/20	4/3	5/4	2/3	5/3	7/14	34	47
	472/528	236/244	482/457	408/369	614/565	307/281	2519	2444
անձերի թիվ	1000	480	939	777	1179	588	4963	
ընտանիքների թիվ	260	107	204	152	251	120	1064	
ընտանիքների աճյամների միջին թիվը	3.9	4.5	4.6	5.1	4.7	4.9	4.7	
տարիքը	32	33	30	29	26.2	32	30.5	

Աղյուսակ 2

Հայաբնակ կենտրոններում տարիքային խմբավորումները
տոկոսային համեմատությամբ (արական/իգական)

Տարիքա- յին խմբավո- րում	Շրջաններ						Ընդհանուր գումար	
	Արևմտյան Քեյոռ	Եշտեֆիյէ	Բուլղ- րակուղ	Նարի Էլ Սոր	Աթրիյան	Այնձար	արական իգական	
0-4	2.4/3.2	1.3/1.7	1.3/1.0	1.2/2.1	4.5/4.6	1.0/1.7	2.25	2.6
5-9	3.3/4.4	2.3/3.3	2.7/2.5	2.8/2.8	9.0/6.5	2.7/2.0	4.30	3.9
10-14	2.1/3.5	3.8/4.0	5.2/5.7	7.2/5.4	6.1/4.0	4.6/5.0	4.9	4.6
15-19	5.3/5.1	6.9/6.7	9.5/7.6	6.6/9.1	5.3/3.8	7.5/7.0	6.7	6.3
20-24	5.4/4.3	8.1/7.3	9.0/8.0	10.8/5.5	3.1/3.5	8.8/5.6	7.1	5.5
25-29	3.1/3.6	3.3/3.5	2.6/1.7	4.3/3.0	1.9/5.5	6.0/4.4	3.3	3.7
30-34	3.0/4.3	1.7/2.1	1.7/1.6	1.7/1.5	3.1/5.5	2.9/1.7	2.4	3.1
35-39	3.2/4.0	1.0/3.5	1.1/4.4	1.7/2.4	4.0/4.0	1.5/2.6	2.3	3.8
40-44	3.0/3.3	2.3/5.8	2.2/4.1	1.5/5.2	3.9/3.4	2.0/3.6	2.7	4.1
45-49	2.6/3.5	4.8/5.2	3.6/5.3	2.8/4.6	4.4/2.6	2.7/4.1	3.5	4.0
50-54	3.6/3.5	4.2/3.3	5.2/3.1	5.1/2.2	3.2/1.3	3.4/3.9	4.1	2.7
55-59	2.1/2.4	4.4/1.9	2.9/1.8	3.2/1.2	1.5/0.8	4.6/1.7	2.8	1.6
60-64	3.6/2.0	2.7/1.0	2.7/0.3	2.2/0.5	0.6/1.0	1.4/0.3	2.1	0.9
65-69	2.3/2.1	1.7/0.2	0.5/1.3	1.0/0.5	0.8/0.8	1.2/1.2	1.2	1.1
70-74	1.1/1.6	0.0/0.6	0.6/0.1	0.0/0.0	0.3/0.33	0.7/0.7	0.5	0.6
75 և բարձ ընդամենց	1.1/2.0	0.8/0.6	0.5/0.4	0.3/0.5	0.4/0.25	1.2/2.4	0.7	0.95
	1000	480	939	777	1179	588	2519	2444
					Ընդհանուր	50.8%	49.2%	

Լրաբանակ ՀԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐՈՎԻ ԱՊԺԽՆ-
ՏԱՏԵԱՍԱԿԱՆ և Բարևաբանակ ՎԱՐԱՐՈՒԹ

17


Բերված երկու աղյուսակները (3) ՀԱՅԱՐԱՎՈՐ թերություններից ու
որոշակի անձակություններից զերծ չեն, քանի որ նկատի պետք է
ունենալ այն կարևոր հանգամանքը, որ ՀԱՅ ազգաբնակչության մար-
դահամարի կազմման աշխատանքները կատարվել են քաղաքացիական
պատերազմի ամենամեծ ժամանակներից մեկում:

Աղյուսակների ուսումնակրությունը պարզորոշ ցուց է տալիս տա-
րիքային խմբավորումների հիման վրա Հայաբնակ յուրաքանչյուր լրա-
նում ՀԱՅ ազգաբնակչության թվաքանակը, ինչպես նաև այդ խմբավո-
րումների տոկոսային համեմատությունը ըստ սեռի:

Հետևելով բերված թվերին և կատարելով Համեմատական վերլու-
ծություն տարրեր լրանակների ունեցած արդյունքների հետ, կարելի է
ենթադրել, որ դրամք անմիջականորեն առնչվում են ՀԱՅ Համայնքի
գոյապահպանմանը, ինչպես նաև կրթական, աշխատանքային գործու-
նեությանը և այլ Հարցերի:

Առաջին աղյուսակի առաջին երեք տարիքային խմբավորումները
ցուց են տալիս առաջիկա տարիներին նման շարունակության դեպ-
քում լրանականացյալության թվաքանակի հարավոր անկման միտում-
ները՝ ծնունդների սահմանափակման պատճառով: Եթե 1950 և 1960-
ական թթ. առաջին կեսին ծնված սերնդի աճը ուներ բնականոն զար-
գացման ընթացք և այդ երեսույթը բոլոր Հայաբնակ լրանների համար
գործել եղել է նույնը, ապա 1970-ական թթ. ծնված սերնդի ցուցանիշը,
համաձայն աղյուսակի տվյալների, զիջում է այդ աճի բնականոն ըն-
թացքին: Դա, ինչպես իրավացիորեն նշում է Զ. Հայկազյանը, առաջին
երեք տարիքային խմբավորումների թվական սակավությունը մեր ազ-
գային, կրթական և միութենական մարզերուն մեջ, թվական տեսակե-
տության մեջ անպատճեություններ պիտի ստեղծեն գալիք 10-15 տարի-
ներուն, պիտի ունենանք պատասխներու և երիտասարդներու պակաս
միություններուն մեջ (4):

Հետաքրքիր են նաև 25-50 տարիքային խմբավորումների Համեմա-
տական վերլուծության արդյունքները: Հիշալ խմբավորումների մեջ
ակնհայտ է, որ արական սեռին պատկանող Հայերի թվաքանակը զի-
ջում է իգական սեռին: Դա, ըստ երեսույթին, պետք է բացատրել քաղա-
քացիական պատերազմի տարիներին այս խմբավորումների արական
սեռին պատկանող անձանց արտագաղթի հանգամանքների հետ: Արա-
կան սեռի համեմատությամբ իգական սեռի գերակությունը կարող է
խաղը ամուսնությունների պատճառ դառնալ, որը, ցավոր, վերջին տարի-
ներին աստիճանաբար նկատելի է դառնում լրանակի ՀԱՅ Համայնքում:



Ըսդհանրապես, 1960-ական թթ. կեսերից լիբանանահայության ընական աճը նկատելիորեն նվազել է: Ավանդական բազմանդամ ընտանիքներին փոխարինելու եկան սակավանդամ ընտանիքները: Փաստորեն, համայնքում ընտանիքների անդամների միջին թիվը կազմել է 4,7, այսինքն՝ յուրաքանչյուր ընտանիք ունեցել է 2,7 երեխա:

1970-ական թթ. սկզբներին Լիբանանի հայ ազգաբնակչության ընական աճը ընդամենը կազմել է մեկ տոկոս: Այսպիսի ցուցանիշը չէր կարող ազգային իշխանությունների մտահոգության պատճառ չդառնալ:

1975 թ. քաղաքացիական պատերազմի սանձազերծումը և դրա հետևանքով առաջացած տնտեսական աննախադեպ տագնապն ու դժվարությունները նպաստեցին ինչպես հայության ընական աճի նվազեցմանը, այնպես էլ կյանքի անվտանգության բացակայության պատճառով ծայր առած արտագաղթի հոսանքի մեծացմանը:

Ինչպես նշեցինք վերևում, մայրաքաղաքից և նրա խիտ բնակեցված արվարձաններից բացի, զգալի թվով հայեր կենտրոնացած են նաև երկրի մյուս քաղաքներում, որոնք, ինչպես Բեյրութի համայնքը, ապրում են ազգային-մշակութային կյանքով:

Աղքաղաղնանք հատկապես Զահեյի, Տրիպոլի, Զունիի, Անթիլիասի և Այնձարի հայաբնակ կենտրոնների բնութագրմանը:

Լիբանանի քրիստոնյա մեծամասնություն կազմող քաղաքներից է Զահեն, որտեղ հայերը բնակություն են հաստատել դեռևս 19-րդ դարի սկզբներին՝ Տիգրանակերտից ու Եղեսիայի շրջաններից գաղթի հետևանքով:

Առաջին աշխարհամարտի ավարտից ու տեղահանություններից հետո, հայ գաղթականները ապաստան են գտնում Զահեյում: Հետագայում քաղաքի հայ ազգաբնակչության թիվը աստիճանաբար սկսում է ավելանալ: 1939 թ. Ալեքսանդրետի սանժակը Թուրքիայի ձեռքը անցնելուց հետո սանժակի շորջ երեսուն հայ ընտանիքներ հաստատվեցին այնտեղ, և այդ ժամանակաշրջանից ի վեր սկսեց կազմավորվել Զահեյի հայկական համայնքը, որը, թեև փոքրաթիվ լինելուն, ձեռք բերեց ուրույն ազգային դիմագիծ:

1981 թ. տվյալների համաձայն, Զահեն ունեցել է շորջ 200-250 ընտանիք (5): Որքան էլ, որ համայնքը մեծ չի եղել, համենայն դեպք իր հնարավորության սահմաններում կարևոր դեր է խաղացել և շարունակում է խաղալ ազգային կյանքում: Հայերի ճնշող մեծամասնությունը պատկանում է առաքելական եկեղեցուն: Կան նաև ավետարանական և կաթողիկե հարանվանություններին հետևող հայ ընտանիքներ:

Զահենայության հիմնական մասը կազմում են արհեստավորները,

կան նաև առևտրականներ, որոնք կապի մեջ են երկրի զանազան առևտրական կենտրոնների հետ:

Համայնքը զգալի ուշադրություն է դարձնում ազգային հաստատությունների գործունեությանը: Քաղաքում գործում է ազգային Բարգավաճան երկսեռ վարժարանը՝ իր մանկապարտեղով: Մեծ աշխատանք է ծավալում տեղի հայկական բարեգործական ընդհանուր միության մասնաճյուղը ազգային կյանքի կազմակերպման և աշխատացման խնդրում: Լիբանանահայ մշակութային բոլոր միությունները Զահենում ունեն իրենց ենթաճյուղերը:

Բեյրութից ու Զահենից հետո հայահոծ կենտրոններից է Տրիպոլի ծովափնյա քաղաքը, որը գտնվում է մայրաքաղաքից 85 կմ հեռավորության վրա: 1922 թ. Կիլիկիայի հայաթափումից հետո շորջ երկու հազար հայ տարագիրներ տեղավորվում են Տրիպոլի քաղաքում, որոնց թիվը հետագայում, ինչ-ինչ պատճառներով նվազում է:

1927 թ. տվյալներով հայերը Տրիպոլիում կազմել են 840 (6), իսկ 1970-ական թթ. 500-1000 մարդ (7):

Քաղաքում գործում է Հայկական եկեղեցի և Նուպարյան-Խրիմյան ազգային վարժարանը՝ նախակրթարանով ու մանկապարտեղով:

Լիբանանի քաղաքացիական պատերազմի թեժ շրջանում հարյուրավոր գաղթական հայ ընտանիքներ տեղավորվեցին Տրիպոլիում:

Լիբանանի հայաբնակ շրջաններից է նաև Զունի գուղաքաղաքը, որը գտնվում է Բեյրութից 15 կմ դեպի Հյուսիս-արևելք: 1921-23 թթ. այնտեղ հաստատվել են ավելի քան 600 ընտանիքներ, որոնք աստիճանաբար կազմակերպում են իրենց ազգային կյանքը, հիմնում եկեղեցի և դպրոց: Հետագայում հայերի թիվը այնտեղ սկսում է նոսրանալ և շատերը փոխադրվում են մայրաքաղաք և երկրի զանազան շրջաններ:

Մինչև 1947 թ. հայ համայնքը Զունիում հաշվվել է 80-100 ընտանիք (8), իսկ 1970-ական թթ. տվյալներով կազմել է մոտ 1000 հոգի (9):

Զգալի թվով հայեր ապրում են նաև Բեյրութի մոտ գտնվող Անթիլիասի շրջանում: 1971 թ. տվյալներով նվազագույնը երկու հազար հայ ընտանիք է եղել շրջանում (10): Չնայած որ Անթիլիասի հայությունը ցրված է եղել Զալայի, Ձել էլ Դիրի, Նակաչի և Զունիի շրջաններում, այնուամենայնիվ, նրան հաջողվել է ստեղծել Հայկական մթնոլորտ ու Համայնքել երիտասարդությանը իր ակումբների և մշակութային հաստատությունների շորջը:

Անթիլիասում գործում է «Համազգային» միությունը, Շգնության խաչը. Հայկական բարեգործական ընդհանուր միությունը և այլ կաղ-

մակերպություններ: Շրջանն ունի աղքային Մարտիկյան նախակրթա-
ռանը, ուր հաճախում են Հարյուրավոր Հայ երեխաններ:

Անթիլիասում է գտնվում Մեծի Տան Կիլիկիո կաթողիկոսությունը՝
Հաստատված 1931 թ., ուր տեղակայված է Անթիլիասի վանքը: Այստեղ
կառուցված է Նահատակաց մատուռը, Ս. Գրիգոր Լուսավորչի տաճա-
րը և Կյուլպենլյան թանգարանը: Կաթողիկոսությունն ունի իր դպրե-
վանքը, որը Հանդիսանում է Հայագիտական և կրոնագիտական ուսուց-
ման կենտրոն, տպարան, ուր 1932 թվականից հրատարակվում է կա-
թողիկոսության պաշտոնաթերթ «Հասկ»-ը:

Վերը հիշատակված կենտրոններից բացի զգալի թվով Հայեր ընակ-
վում են Այնձար պյուղավանում, որը ընկած է Բեկաայի դաշտավայրում:

1939 թ., երբ Ալեքսանդրեսի սանջակը բռնակցվեց Թուրքիային,
բազմահազար Հայ գաղթականներ Հարկադրված Հեռացան սանջակից
և ապաստան գտան Լիբանանում ու Սիրիայում: Շուրջ 6000 մուսալեռ-
ցիներ, Հաստատվելով Լիբանանի ամենամոռայլ ու չոր անկյուններից
մեկում՝ Այնձար ավանում, կարողացան կարճ ժամանակում համար
դժվարին աշխատանքով կառուցել գյուղը, որը Հետագայում ընդար-
ձակվելով՝ ստացավ փոքրիկ քաղաքի տեսք: «Գրեթե մերկ ու տկլոր,
երբ եկան այս ճաշճուտ և հիմանդրություններով լի անկյունը, գրում է
«Ալղդակը», - նրանք իրենց թիվին մեկ շորորորդն ալ զոհ տվին մալա-
րիայի: Այս չեր բավեր կարծեք, վրա հասավ թ աշխարհամարտը, 1939
թվադրությունը, մեծապես սաստկացնելով ժողովորդը հույժ տառա-
պեցավ: Անդադար աշխատեցավ ցերեկ թե գիշեր, Համբերեց ու հուսաց
և վերջապես Հասավ այսօրվա մակարդակին, ուրկե ետ նայելով կրնայ
արդարացիորեն Հպարտանալ...» (11):

Տարիների ընթացքում Այնձարի Հայ աղքարնակչությունը հիմնեց
իր աղքային Հաստատությունները՝ եկեղեցիներ, վարժարաններ
միություններ և այլն: Այն իր բարքերով, մշակովթով, ավանդութներով
ու աշխատանքային կյանքով դարձավ Հայկական ուրույն միջավայր:

Ավանում գործում է ժողովորդի օրինական ներկայացուցչական մար-
մինը՝ թանգական խորհուրդը, որը կազմված է չորս անդամներից՝ բո-
լորն էլ Հայեր են: Քաղաքապետի պաշտոնը 1963 թվականից զրադեց-
րել է Արթին Շերքեթյանը: Խորհրդի իրավասության մեջ մտնում է
Այնձարի բարեկարգման աշխատանքների կազմակերպումը:

Չնայած, որ մայրաքաղաքից գտնվում է բավականին Հեռավորության
վրա, այնձարաւայությունը կտրված չի եղել կենտրոնից, այլ կապված
է եղել նրա հետ, ունենալով իր միություններն ու ակումբները:

Աղքային կյանքի կազմակերպման գործում աշխատանք է
տանում Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցությունը, որն
ունի իր կենտրոնը՝ գրադարան-ակումբը: Ավանում գործում է Համագ-
գային Հայ մշակութային ընկերակցության Այնձարի մասնաճյուղը՝ հիմն-
ված 1970 թ.: Այդ մասնաճյուղի մեջ ընդգրկված են 150 հոգի: Մշակու-
թային կենտրոնը կազմակերպում է Հայկական ու արարական տոհմիկ
Հանդիսություններ ու զանազան թատերգություններ:

Այնձարում գործում է նաև Հայ մարմարական ընդհանուր
միության մասնաճյուղը, որը ավանի միակ մարզական կազմակեր-
պությունն է: Նրա ակումբում ընդգրկված են բազմաթիվ մարզիկներ,
որոնք իրենց մասնակցությունն են բերում ինչպես Լիբանանում, այն-
պես էլ արտասահմանում կազմակերպվող մարզական մրցումներին:
Ավանում կան Հայկական երկսեռ երկրորդական վարժարաններ, որոնք
ունեն ուսուցման բավականին լավ մակարդակ և գործում են պիտական
ուսումնական ծրագրերով: Վարժարաններ հաճախող աշակերտներին
Հայերենի կողքին ուսուցանում են արաբերեն, անգլերեն և ֆրանսերեն:
Երջանավարտները կարող են ընդունվել ամերիկյան համալսարան կամ
Հայկացյան բոլեց առանց ընդունելության քննությունների: Ուսումնա-
կան Հաստատություններին հովանավորում և օժանդակում են բարե-
սիրական կազմակերպությունները:

Այնձարում գործում են նաև Հայ պիտարանական ու կաթողիկե
Հարանվանություններին ենթակա վարժարաններ ու եկեղեցիներ:

Այնձարի կառուցման շրջանից ի վեր գյուղություն ունի Կարագյոյան
դարմանատունը: 1940-ական թթ. սկզբին, երբ ավանը նոր էր կառուց-
վում, այն դրկված էր տարրական առողջապահական հսկողությունից և
եղել է Հիմանդրությունների վայր: Ավանի կառուցմանը զուգահեռ հսկա-
յական դեր սկսեց խաղալ այդ Հաստատությունը: Այն սկսեց կանոնա-
վոր կերպով հետևել բնակչության առողջության պահպանմանը, տա-
րրեկան պատվաստումներ կատարել կանխարգելելու նպատակով շրջա-
նում տարածվող տարրեր Հիմանդրությունները:

Կարագյոյան Հաստատության մասին գիտեն շատերը: Այն իր մար-
դասիրական ծառայությունն է մասուցում նաև Այնձարի Հայկական
շրջանների ու գյուղերի արաբ մաշեղական բնակչությանը: Ունի նաև
իր առանձին բաժանմունքը Այնձարի մոտ, սիրիական սահմանի վրա
արաբներով բնակեցված Մամդալ գյուղում և զգալի աշխատանք է
տանում Հիմանդրությունները անվճար դեղորայքով ապա-
հովելու գործում:

Լիրանանի քաղաքացիական պատերազմի սոսկալի շրջանում, մասնավորապես 1978 թ., երր թեյրութի հայկական թաղամասերի վրա կատարվեցին հարձակումներ, չուրջ հինգ հազար հայ գաղթականներ հարկադրված եղան թողնել իրենց հարազատ վայրերը և ապաստան գտնել ապահով Այնձարում:

Փոքրաթիվ հայեր ապրում են նաև Լիրանանի մյուս քաղաքներում՝ Սայդայում, Շեմորայում, Ալեսում և այլ շրջաններում, որոնք երկրի քաղաքական անկայուն իրավիճակի պայմաններում ստիպված էին գտնվելու անընդհատ տեղաշարժերի մեջ:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Լիրանանի հայ համայնքի ընկերային-տնտեսական և իրավական վիճակը

Ա. Քաղաքաբնակ հայ աշխատավորության ընկերային-տնտեսական դրությունը

1970-ական թթ. Լիրանանը համարվում էր ի սկզբուս աշխարհի ցրված հայության ամենախոշոր կենտրոնը: Համայնքն աչքի էր ընկում երկրի տնտեսության ու արդյունաբերության բազմազան ոլորտների բարգավաճման մեջ իր անմիջական մասնակցությամբ, ինչպես նաև հասարակական ու քաղաքական կյանքում գրաված նշանակալի դիրքով:

Լիրանանահայ համայնքի, ինչպես և Մերձավոր Արևելքի մյուս հայած համայնքների սոցիալական կազմը միատարր չէ և կազմված է տարրեր խավերից ու շերտավորումներից, որոնցից յուրաքանչյուրն ունի իր ուրույն շահերը և ըմբռնումները: Հայ ազգաբնակչության բոլոր խավերի ընկերային-տնտեսական դրության մասին քիչ թե շատ փիճակագրական, սակայն ոչ գոհացուցիչ տվյալները քննելիս՝ նկատում ենք, որ նրա ընկերային-տնտեսական վիճակը, այսպես թե այնպես համապատասխանել է Լիրանանի բազմահամայնք հասարակության ընկերային և տնտեսական դրությանը և գոյություն ունեցող դասակարգային խայտարդետ շերտավորումներին: Եղնելով լիրանանյան իրականությունից, փորձել ենք քննել հայ համայնքի տնտեսական վիճակը երկրի ընկերային-քաղաքական կառուցվածքի ընդհանուր ֆոնի վրա:

Լիրանանը համարվում է ազատ տնտեսություն ունեցող երկր և տարիներ շարունակ առևտորական և ֆինանսական միջնորդի դեր է կատարել արևմտյան երկրների ու արարական պետությունների միջև: Նա այդ միջնորդությունից ստացված խոշոր եկամուտները ներդրել է Հատկապես սպասարկությունների ոլորտի (բանկեր, զրոսաշրջիկություն, առևտուր), զարգացման բնագավառներում, տալով ազգային եկամտի

մեծ մասը: Երկրում գերիշխող դիրքեր է գրավել արևմտյան կապիտալը, որը իր ենթակայության տակ է պահել սպասարկությունների ու ֆինանսների ոլորտները և հսկողություն սահմանել երկրի տնտեսության վրա:

Լիբանանի տնտեսական և ընկերային-քաղաքական կառուցվածքն ու վերնաշենքը իր զարչամեքենայով, գտնվելով իշխող դասակարգի և նրա գլխավոր ուժի՝ Փինանսական սակավապետության (օլիգարխիա) ենթակայության և անմիջական ազդեցության տակ, երկրի «ազատ տնտեսության» դրույթին տափանապի խորացման պատճառ դարձավ: 1970-ական թթ. սկզբներին տնտեսական տագնապը ավելի խորացավ կառավարող զարչակարգի տնտեսական անկարող քաղաքականության հետևանքով: Լիբանանը սկսեց ապրել կապիտալիստական տնտեսությանը բնորոշ խնդիրացիա, որի տեմպերը 1972, 1973, 1974 թթ. Համապատասխանաբար կազմեցին 14, 25 և 18 տոկոս: Դա պատճառ դարձավ լիբանանյան լիբայի արժեզրկմանը, սպառման առարկաների գների բարձրացմանը և ռեալ աշխատավարձի նվազմանը (1): Այս վիճակը, փաստորեն, շարունակական բնույթ է կրել և արձանագրել է ավելի բարձր ցուցանիշներ:

Լիբանանը արդյունաբերական թույլ զարգացած երկիր է և նրանից բխող եկամուտները կազմում են ազգային եկամտի փոքր տոկոսը: Լիբանանի արդյունաբերության հիմնական ուղղությունները՝ կաշեգործությունը, ծխախոտագործությունը, մետաղամշակման, հյուսվածքնենի, փայտամշակման, հագուստի, քիմիական և այլ նյուղերը սկսեցին զարգանալ մասնավորապես 1967 թ. արաբա-իսրայելական պատերազմից հետո, երբ Սուեդի ջրանցքի փակման հետևանքով արարական երկրների հանդեպ, նախապատվությունը տվեցին լիբանանյան շուկային և սկսեցին օգտվել նրա արտադրանքներից: Արդյունաբերության զարգացման հետևանքով աճեց նրա քամինը ազգային եկամտի մեջ: Եթե 1965 թ. այն տարին էր ազգային եկամտի 13 %-ը միայն, ապա 1973 թ. և 1974 թ.՝ Համապատասխանաբար 15 և 16,7 % (2):

Լիբանանի ազգային արդյունաբերության զարգացման ոլորտում իրենց անժիւտելի ու ծանրակշիռ տեղն ունեն Հայերը, որոնք զգալի ավանդ են ներդրել և ներկայիս շարունակում են ներդնել այդ բնագավառի զարգացման համար: Երկրի ծրագրավորման նախարարության կենտրոնական փաշության վիճակագրական տվյալների համաձայն, լիբանանում գործել են 2099 արդյունաբերական և արհեստավորական

ձեռնարկություններ, որոնցից 260-ը պատկանել է Հայերին, այսինքն՝ 12,38 %-ը (3):

Հայերի սեփականությունը հանդիսացող արդյունաբերական հաստատությունները, որոնց գերակշռող մասը «ընտանեկան» են, հաստատված են հիմնականում մայրաքաղաքում և Բուրջ Համուղ թաղամասում: Ընդհանրապես երկրի բոլոր գործարանների և Փարրիկանների կենտրոնացումը Բեյրութում և նրա արվարձաններում պայմանագործած է նախ և առաջ նավահանգստի առկայությամբ, ուր բնունաթափվում է արտասահմանից ստացվող անհրաժեշտ հումքը և տեղափոխվում ձեռնարկություններ՝ մշակման ենթարկվելով տեղում: Մայրաքաղաքում և արվարձաններում արդյունաբերական ձեռնարկությունների գտնվելը դյուրացնում էր դրանցից շատերի աշխատանքները և գերծ պաշում փոխադրական միջոցների վրա կատարվելիք ծախսերից: Եվ, վերջապես, մյուս կարևոր գործոնը բարձրորակ մասնագետների և հմուտ բանվորների կենտրոնացված լինեն էր մայրաքաղաքում:

Հայկական արդյունաբերական ձեռնարկությունների կենտրոնացման և թվաքանակի մասին համակողմանի պատկերացում է տալիս հետևյալ աղյուսակը (4):

Ձեռնարկությունների կենտրոնացումը	Ձեռնարկությունների թիվը	Ընդհանուր %-ով
Բեյրութ	136	52.3 %
Բուրջ Համուղ	96	36.92 %
Բաշշի	8	3.07 %
Սեղ Բաշշի	7	2.6 %
Զիլ Էլ Ղիր	1	0.38 %
Զդեյդի	2	0.76 %
Ղեկուան	4	1.53 %
Սկալե	3	1.15 %
Ֆըրն Շըբաք	2	0.76 %
Չկենտրոնացված ձեռնարկ.	1	0.38 %
Ընդհանուրը	260	

Լիրանանի արդյունաբերական ձեռնարկությունների 39,2 %-ը գտնվում էր մայրաքաղաքում, իսկ 28,8 %-ը՝ արվարձաններում: Այս ցուցանիշների մեջ հայկականը համապատասխանարար կազմում է 6,4 և 5,9 % (5):

Խնչեսի նշեցինք, հայերին պատկանող ձեռնարկությունների գերակշռող մասը՝ 94,22 %-ը, ուներ «ընտանեկան» մեջ: Արդյունաբերության մեջ ընդգրկված լիբանանցի աշխատավորության 18-20 %-ը կազմում էին հայերը, որոնց թիվը հասնում էր 7-8 հազարի (6):

Հայկական արդյունաբերությունը ներկայանում էր հիմնականում կաշեգործության (Գ. Ջաթալբայան), հյուսվածքեղենի (Չելերի եղայրներ), երկաթագործության (Գ. Տանձիլյան), կահուքի արտադրության (Ա. Գրիգորյան) և այլ բնագավառներում: Այս ձեռնարկությունների արտադրանքները հայտնի էին իրենց որակով և մրցակցության մեջ են եղել և վրոպական արտադրանքների հետ: Բացի վերը հիշատակվածից, կային նաև հայերին պատկանող բազմաթիվ մանր ու միջին ձեռնարկություններ, որոնք արտադրում էին ոգելից խմիչքներ, սննդամթերք, մետաքսյա գործվածքներ, կոշիկ, երկաթից ու այսումինից պատրաստված առարկաներ և այլն: Քաղաքային և արվարձանային հայքանշությունը զգալի ներդրումներ է կատարել այս ոլորտների զարգացման մեջ: Բեյրութի և նրա արվարձանների թաղամասները հայտնի էին իրենց արտադրանքներով և ունեին մասնագիտական որոշակի ուղղվածություն: Այսպես, Բուրջ Համուղը հանդիսանում էր հայ արհեստագորական խավի ամենախոշոր կենտրոններից մեկը: Թաղամասի հայկական դիմագիծը ակնհայտորեն զգացնել էր տալիս իրեն: Հայերն այստեղ բնակություն են հաստատել դեռևս 1929 թվականից: Թաղամասում կենտրոնացած են անվանի կոչկակարներ, ոսկերիչներ, դերձակներ, դարձիններ, ատաղձագործներ, հացագործներ և այլն:

Լիրանանահայերի մոտ կեսը պատկանում է արհեստագորական խավին, որի ունեցած մասնագիտական հմտությունն ու բնածին ընդունակությունները քաջ հայտնի են Լիրանանի արար ժողովրդին: Հայ արհեստագորներն աշքի են ընկել բոլոր արհեստների մեջ՝ մասնագորապես ոսկերչության, արծաթագործության, դերձակության, կողկակարության, ավտոմեքենաների վերանորոգման և ուրիշ շատ բնագավառներում:

Կոշիկի արտադրության ասպարեզում գոյություն ունեցող շուրջ 80 ձեռնարկություններից 61-ը պատկանել են հայ ձեռնարկատերերին, որը կազմում է ընդհանոր թվի երեք քառորդը: Մնացած ոչ հայկական

ձեռնարկությունների մեջ նույնական դգալի թիվ են կազմել հայ աշխատավորները, որոնց համարարված աշխատանքը պահանջել է որոշակի հմտություն:

Ոսկերչությունը, որպես արհեստների արհեստ կամ արվեստի բնագավառ, ժառանագարար անցել է արևմտահայությանը: Պատահական չէ, որ այդ բնագավառում հայերը տիրապետող դիրքեր են զրավել և հայտնի դարձել ամրող Մերձավոր ու Միջին Արևելքում: Լիրանանի ոսկերիչների արհեստակցական միության մեջ արձանագրված 125 վարպետներից 84-ը եղել են հայերը, այսինքն՝ 67,2 % (7): Հայերի ձեռքին է գտնվել թեյրութիւն ոսկերչական արհեստանոցների գերակշռող մասը:

Երկրում մեծ համբավ էին ձեռք բերել նաև հայ կարող դերձակները: Արհեստի այս ասպարեզի վատաշության մենաշնորհը պատկանել է հայերին: Արհեստակցական միության տվյալներով Լիրանանի 159 գրանցված դերձակներից 42-ը եղել են հայերը, որը կազմում է շուրջ 26,42 %: Այս պաշտոնական թվերը ներկայացված են բավականին նվազ, քանի որ մեծ թվով հայ վարպետներ շահագրգոված չեն եղել ներգրավվելու արհեստակցական միությունների մեջ: Բուրջ Համուղի դերձակների արհեստանոցները մեծամասնությամբ պատկանել են հայերին: Նրանց աշխատանքը եղել է թե անհատական և թե միավորված ձևով: Փոքրիկ արհեստանոցներից բացի եղել են նաև ավելի խոշոր կարի ձեռնարկություններ:

1960-ական թթ. վերջերից Լիրանանում խոչոր ձեռնարկությունները աստիճանաբար սկսեցին ընդլայնել իրենց գործունեության լընակաները և իրենց ենթարկել մանր «ընտանեկան» տնտեսություններին: Նախկինում անհատական գործունեություն ծավալող և առանձին «արթիզանական» ձեռք աշխատադիր բազմաթիվ արար և հայ աշխատագորներ սկսեցին կենտրոնանալ խոչոր ձեռնարկությունների մեջ:

Կապիտալիզմի զարգացմանը ընորոշ ընդհանուր օրենք է մրցակցային պայմանը: Խոչոր ձեռնարկությունների ու գործարանների առաջացումով հետզետե սկսեցին քայլայվել մանր տնտեսությունները, որոնք այլևս ի վիճակի չեն մտնելու մրցակցային պայմանը մեջ խոչոր ձեռնարկությունների արտադրության քանակի և նրանց կողմից սահմանված գների առկայության պայմաններում: Աստիճանաբար խոչոր ձեռնարկությունների արտադրանքը, իշխելով շուկաների վրա, սկսեց հարգածել մանր արտադրողներին: Կենտրոնացման համակարգի զարգացմանը զուգընթաց մրցակցային պայմանը ստանում էր ավելի սուր բնույթ և պատճառ դառնում մանր արտադրողների աստիճանական քայլայմանը:

Թրինակ՝ կոչիկի արտադրության ասպարեզը: 70-ական թթ. սկզբներին Հայ և արար ձեռնարկատերերի կողմից ստեղծված կոչիկի արտադրության 22 ֆարրիկաներում աշխատում էին 517 բանվորներ, որոնցից 293-ը Հայեր էին (8): Սա նշանակում էր, որ նվազագույնը երկու հարյուր Հայ աշխատող վարպետներ պատկանել են նախկինում գոյություն ունեցած «ընտանեկան» կամ «արթիգանական» ձևին: Այս երեսում թը առավել կամ նվազ չափով ընդհանուր բնույթ էր կրում Լիրանանի արդյունաբերական ձեռնարկությունների բոլոր ոլորտների համար:

Լիրանանահայ համայնքում մեծ տոկոս են կազմում առևտորի և սպասարկման ոլորտում աշխատողները: Նրանք հիմնականում ներկայացնում են Համայնքի միջին դասակարգը: Հայ առևտրականների թիվը զգալիորեն ստվարացագ մասնավորապես երկրորդ աշխարհամարտից հետո, երբ Նրանք սկսեցին ընկություն հաստատել մայրաքաղաքի կենտրոնական թաղամասերում: Ներդնելով իրենց կապիտալները առևտորի ու սպասարկման ընազավառում, Հայ առևտրականներն աստիճանաբար ընդարձակեցին իրենց գործունեության շոջանակները: Վիճակագրական տվյալներով առևտորի ոլորտում ընդգրկված էին Հայ ազգարնակչության չուրջ 43,8 %-ը: Նրանց էին պատկանում թեթև արդյունաբերության՝ կոչկեղենի, հագուստեղենի, ապակեղենի, պարենային մթերքների արդիական ոճով ձեռավորված խանությունները: Բնյութի կենտրոնական թաղամասերում Հայերի սեփականությունն են Հանդիսացել նաև մի շարք Հյուրանոցներ, բազմաթիվ սրճարաններ, ռեստորաններ, վարսավիրանոցներ, դեղատներ, լարորատորիաններ, փոեր և այլ սպասարկման հաստատություններ:

70-ական թթ. Լիրանանում մեծացել էր նաև ազատ ասպարեզի աշխատողների թիվը: Այդ ոլորտի մեջ մտնում են բժիշկներ, դեղագործներ, ինժեներներ, ուսուցիչներ, փաստաբաններ և մտավորականությունը ներկայացնող այլ մասնագիտությունների տեր մարդիկ:

Վիճակագրական տվյալների համաձայն, երկրի 1800-ի հասնող բժիշկներից 110-ը, 400 ատամարույժներից 90-ը, 300 դեղագործներից 70-ը և 3000 ինժեներներից 300-ը Հայեր էին (9):

Եթե նկատի ունենանք այն Հանգամանքը, որ Հայերը կազմում են Լիրանանի ընդհանուր բնակչության ուժ տոկոսը, ապա բերված թվերը, առանց մեկնարանությունների, պարծանք են բերում Հայությանը:

Լիրանանում, քաղաքացիական պատերազմից առաջ, Հայ բժիշկների թիվը համեմատարար ավելի շատ է եղել: Նրանցից շատերը, որոնք ունեցել են արևմտյան բժշկագիտության փորձ, աշխատել են երկրի

խոշոր հիվանդանոցներում, ինչպես նաև Հայկական դարմանատներում՝ ՀՔԸՄ-ի. Լիրանանահանակ օգնության խաչի, Կարագյողյան հիմնարկության, Ճիխիչյան հաստատության մեջ և այլուր:

Հարկ է նշել նաև, որ Բնյութի ամերիկան հիվանդանոցի սպասարկող հիվանդապահության հիմների մեկ երրորդը եղել են Հայեր: Քաղաքացիական պատերազմից առաջ Լիրանանում աշխատել են չուրջ 200 Հայ բրւեգույրեր և դայակներ (10):

Լիրանանում ազատ ասպարեզում ընդգրկված Հայ մասնագետների մեջ տոկոսային հարաբերությամբ ավելի նվազ թվով Հանդես են գալիս իրավաբաններն ու փաստաբանները: Ըստ վիճակագրական տվյալների, երկրի 1500 իրավաբաններից միայն 20-ը կազմել են Հայերը (11): Սա, ըստ երեսույթին, պետք է բացատրել տարիներ առաջ երկրի Հայկական վարժարաններում արաբերնեն լեզվի ուսուցման ցածր ճակարդակի և, ընդհանրապես, այդ լեզվի նկատմամբ լիրանանահայերի ունեցած նվազ ուշադրության հանգամանքի հետ: Սակայն 70-ական թթ. սկզբին, երբ արաբերներ բարձրորիայի քննությունների մաս կազմեց, այն արդեն Հայկական վարժարաններում դրվեց բավարար հիմքերի վրա, նպաստեց լեզվական դժվարությունների հաղթաշարմանը և դրա իմացությունը պահանջող որոշ մասնագիտությունների մեջ Հայերի թվաքանակի ավելացմանը:

Ինչպես շատ երկրներում, Լիրանանում ևս Հայ կանայք, տնային տնտեսությամբ զրագվելով Հանդերձ, ընդգրկված էին արտադրության, առևտորի ու սպասարկման ոլորտներում: Հայ կանայք հմտացած էին Հատկապես հիվանդապահի, մանկաբարձուհու, դեղագործի, ատամնաբույժի, մանկավարժի, դերձակուհու, վարսավիրի մասնագիտությունների մեջ: Վիճակագրական տվյալների համաձայն, 1970-ական թթ. աշխատող Հայ կանանց մոտ 79 %-ի օրական աշխատանքային տեղությունը կազմել է ութ և երթեամ էլ ավելի ժամ:

Համեմատելով երկրի Հայաշատ շոջաների հետ, աշխատող Հայ կանանց թիվը ավելի գերազանցող է եղել մայրաքաղաքում, կազմելով 34 %, որը բաղդատությամբ մինչև 70-ական թթ. նվազել է: Նույն նվազումը, կարելի է ասել, ունեցել է Բնյութ Համուդը, որտեղ աշխատանքի մեջ ընդգրկված են եղել կանանց 17 %-ը: Բնյութում և նրա արվարձաններում աշխատող Հայ կանանց հետ անցկացված Հարցագրույցների արդյունքները ցույց են տվել, որ Նրանց աշխատելու պատճառները երեքն ևս՝ նյութական անհրաժեշտությունը, հոգևոր բավարարությունը և, վերջապես, զրադմունքը: Վերոհիշյալ պատճառները տոկոսային թվերի

վերածելիս, կարող ենք ստանալ հետևյալ պատկերը. նյութական կարիքներից դրդված աշխատող կանայք կազմել են 37,5 %, գրադարձների համար՝ 26,5 %, իսկ հոգևոր բավարարության համար՝ կանանց ընդամենը 36 %-ը: Ուշադրություն դարձնելով այս թվերին, կարող ենք նկատել, որ աշխատելու դրդապատճառները սերտորեն կապված են մասնագիտության տեսակի հետ: Եթե դերձակի կամ գործակատարի մասնագիտություն ունեցող հայ բանվորուհին աշխատում է առավելապես նյութական կարիքներից ելնելով, ապա գրասենյակային աշխատանքի մեջ ընդգրկված կնոջ համար տվյալ աշխատանքը հանդիսացել է զուտ գրադարձների միջոց:

Վերջին ավելի քան երեսում տարիներին Լիբանանի կամ ընդհանուրապես Արևելքի որևէ երկրի պայմաններում հայ կնոջ աշխատանքը սկսեց դրական դեր խաղալ իր ընտանիքի ավանդական մտայնության փոփոխության մեջ: Հայ ընտանիքի պահպանողական դաստիարակությունը աստիճանաբար սկսեց փոփոխություն կրել, ի հայտ եկան ընտանեկան և ընկերական հարաբերությունները: Եթե 1920-ական թթ.՝ Լիբանանում կենտրոնանալու սկզբնական տարիներին հայությունը խուս էր տալիս տեղի արար ժողովրդի հետ շփվելուց և կառչած էր մնում Արևմտյան Հայաստանից իր բերած հին բարբերից ու սովորություններից, ապա 60-ական թթ. և Հատկապես 70-ական թթ. սկսած, նոր կյանքը թելադրում էր ձերբագատվել իր դարն ապրած ավանդույթներից և ավելի իրատեսորեն նայել իրականությանը:

Մինչև 1975 թ. քաղաքացիական պատերազմի սկզբելը, Լիբանանի արդյունաբերության զարգացման հետ մեկտեղ, զգալի տեղաշարժեր արձանագրվեցին աշխատավոր խավի քանակական և որակական կառուցվածքի մեջ: Երկրի աշխատավորության, ներառյալ հայ աշխատավորների, թվական աճի հետ միասին աստիճանաբար տեղի՝ ունեցող որակական փոփոխություններն զգացվում էին նրանց կազմակերպվածության մեջ:

Լիբանանի աշխատավոր դասակարգի կառուցվածքի մասին գործություն ունեցող միակ պաշտոնական վիճակագրությունը կազմված է 1972 թ.՝ թեյրութիվ վիճակագրության կենտրոնական գրասենյակի կողմէց: Համաձայն այդ ծառայության տվյալների, երկրում բանվոր դասակարգի թիվը համար այդ ժամանակակից էր 390,139-ի, որից մշտական գործադրությունը՝ 203,265, օրավարձով աշխատողներ՝ 18,680, ընտանիքի օժանդակ անդամներ՝ 35,670, գործադրուկներ՝ 20,940, ուրիշներ՝ 11,584: Այս թվերին

պետք է ավելացնենք 100,000 շրջիկ և սեղոնային շինարարության, երկուագործության և տրամսապրոտի աշխատողներ (12):

Լիբանանում բանվոր դասակարգի տարեկան ընդհանուր աճը կազմում էր 20,000 մարդ: Լիբանանահայ աշխատավորությունը, երկրի աշխատավոր խավի անրաժման մասը կազմելով, տարեկան աճում էր մոտ 1200 հոգով (13):

Ինչպես նշել ենք վերևում, 70-ական թթ. ժամանակահատվածում Լիբանանի առևտորա-րուրժուական և կալվածատիրական վերնախավի վարած քաղաքականության հետևանքով, սրվում էր ընկերային-տնտեսական տագնապը: Լիբանանի աշխատավորական զանգվածները հանդիս էին գալիս իրենց տնտեսական և ընկերային վիճակը բարելավելու ու պաշտպանելու պահանջով՝ կազմակերպում գործադրությունները, ցուցեր ու հանրահավաքները: Լիբանանայն իշխանությունները գործնականում ոչ մի քայլ չէին ձեռնարկում՝ բարելավելու աշխատավոր զանգվածների տնտեսական վիճակը և դարձանելու նրանց կենսատագնապը: Նրանք, ընդհակառակը, անտեսելով երկրում ծայր առած չարաշահումներն ու կամայականությունները, պաշտպանում էին խոչոր ձեռնարկատերերի և օտարերկրյա մենաշնորհային ընկերությունների շահերը:

Տեղական արարական և հայկական մամուլը շատ հաճախ անդրադառնուում էր թանկության աճին և ժողովրդի կենսամակարդակի օրըստօրե վատթարացմանը: Այսպես, «Կանչ» շաբաթաթերթը գրում է. «Գիներու խելակորոյս աճը Լիբանանի մեջ էր համակէ գրեթե բոլոր կառուածները: Մննդամթերքի գիները կը բարձրանան, ըլլան անոնք ներմուծված թե տեղական: Հագուստեղենի գիները կը բարձրանան, ընակարանային գիները կը բարձրանան: Դեղորայքը երկար ժամանակ շուկայէն կտրվելն ետք, կը սղին: Սեփական դպրոցներու կրթաթոշակները կավելնան: Պետական դպրոցներու հարկերը կը բազմանան և կաճին (14): Հարկ է նշել, որ Լիբանանում ներմուծման և արտահանման մենաշնորհը գտնվում էր խոչոր առևտրականների ձեռքին, որոնք, երկրի ազատ տնտեսության քաղաքականության վրա հենվելով, կամայական և քմահաճ ձևով բարձրացնում էին շուկայական գները:

Վիճակագրական տվյալների համաձայն, 1939 թ. Համեմատությամբ 70-ական թթ. սկզբին Լիբանանում թանկությունն աճել էր ուժ անգամ: Միայն 1969-1972 թթ. միջն ընկած ժամանակաշրջանում կենսադրությունը կազմել էր 16 %: 1966 թ. Համեմատությամբ սննդամթերքի գները բարձրացել էին 30,7 %-ով, Հագուստեղենինը՝ 24,4 %-ով, իսկ անցնող տարեշրջանին մայիսի գները բարձրացել էր 19 %-ով, բանջարեղենինը՝ 57

%-ով, կաթնեղենինը՝ 26 %-ով, մրգեղենինը՝ 29 %-ով, ձիթնը՝ 13,6 %-ով, մանկական և կանանց հագուստնեղենինը՝ 12 %-ով (15):

Լիբանանի աշխատավոր ընտանիքների ապրուստի կենսամակարդակը ուսումնասիրելիս պարզվում է, որ յուրաքանչյուր ընտանիք միջին հաշվով սննդամթերքին հատկացնում էր իր ընդհանուր ծախսների 26,63 %-ը, բնակարանային վարձերին՝ 19,21 %-ը, հագուստեղենին՝ 12,84 %-ը, բժշկական խնամքին և դեղորայքին՝ 6,06 %-ը, ուսմանը՝ 5,87 %-ը, զրուանքին և վայելքներին՝ 7,97 %-ը, տրանսպորտային ծախսներին՝ 11,23 %-ը:

1973 թ. սննդամթերքի և արդյունարերական ապրանքների գներն էլ ավելի բարձրացան: Եթե մինչ այդ մսի մեկ կգ-ն արժեր ընդհանուր 800 դաշեկան, ապա նոր գինը հասավ մինչև 1200 դաշեկանի, իսկ տարեկերջին գներն աճեցին մինչև 300 % (16):

Այս պայմաններում շափազանց ցածր էին աշխատավորների ամսական աշխատավարձերը: Բանվորի նվազագույն աշխատավարձը կազմում էր 225 լիր. լիրա, որը չէր համապատասխանում գների հարածունարարացմանը և նրա նվազագույն պահանջների բավարարմանը:

Լիբանանյան «Ալ-Հավադես» շարաթաթերթի տվյալներով, տարեկան 6000 լիր. լիրայից նվազ եկամուտ ունեցող ընտանիքը ընդեղենի, պտղի և մսի համար «կը տրամադրէ իր ըյուջնի 6,67 %-ը, իսկ տարեկան 10.000 լիր. լիրային ավելի եկամուտ ունեցող ընտանիքները նույն բաների համար կը տրամադրէն իրենց ապրուստի 1,46 %-ը» (17): Սա նշանակում է, որ եթե համեստ եկամուտ ունեցող ընտանիքը իր ծախսների 6,67 %-ը հատկացնում էր անհրաժեշտ սննդամթերքների հայթայթմանը, ապա հարուստ ընտանիքների համար նման ծախսները կազմում էին ընդհանուր 1,46 %: Այսինքն, թանկությունը զիլսավորաբար աղում էր սահմանափակ եկամուտ ունեցող խավի վրա:

Լիբանանի թե՛ արար և թե՛ հայ աշխատավորության գերակռող մասը իր ունեցած ցածր եկամուտների պատճառով հարկադրված էր անդուռ պայքար մղել իր ամենօրյա ապրուստը հայթայթելու համար: Վերը բերված թվերը ինքնին վկայում են աշխատավոր դանդվածի ապրուստի ծանր պայմանների մասին:

Լիբանանում բարձր էին նաև բնակարանային վարձերը, որոնք կազմում էին բանվորների ամսական աշխատավարձի մոտ 40 %-ը: Երկրում բարձրացել էին ուսման վարձերը, որը պատճառ էր դառնում դպրոցականների թվաքանակի չեղտակի նվազեցման: Այսպես, օրինակ, բաղադրներում 6-14 տարեկան երեխաների 12,4%-ը և գյուղարնակների

17%-ը ուսման վարձերի բարձր լինելու պատճառով չէին կարողանում հաճախել դպրոց (18): Դրան նպաստում էր նաև այն հանգամանքը, որ ուսումնական բյուջեին հատկացվում էր Լիբանանի աղգային եկամտի 2,1-2,5%-ը: Զարմանալի չէ, որ մոտ 3 մին. բնակչություն ունեցող երկրում անգրագետների թիվը միջին հաշվով կազմում էր բնակչության 35%-ը (19):

Լիբանանի բաղադրական կուսակցությունների, արհմիութենական ու բանվորական կազմակերպությունների ուշադրության կենտրոնում եղել է երկրում ծայր առած թանկության պատճառով աշխատավոր ժողովրդի ծանր վիճակի փաստը: Այդ ուժեղը հանդես էին գալիս ստեղծված դրությունից գուրս գալու գործնական լուրջ պահանջներով ու արդարացի որոշումներով: Դրանք մասնավորապես վերաբերում էին սպառման ապրանքների գների վրա հսկողություն սահմանելու, սահմանափակ եկամուտ ունեցողների աշխատավարձը բարձրացնելու, աշխատանքային ժամեր սահմանելու, ուսման վարձները պակասեցնելու, դեղորայքի և բժշկական սպասարկման գներ սահմանելու, բնակարանային տագնապը բարելավելու, վարձերը իջնեցնելու և այլ անհրաժեշտ հարցերի:

Թանկության դեմ պայքարի և ժողովրդի կենսապայմանները բարելավելու պահանջով հանդես եկան Լիբանանի մի շարք կուսակցություններ և բաղադրական հոսանքներ: 1973 թ. փետրվարին Լիբանանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեն իր գումարած նիստում, քննելով երկրի բնակչության մեծամասնությունը կազմող բանվորների, ծառայողների, ուսուցիչների և ուսանողների դժգոհությունը, առաջարկում էր գորավիգ կանգնել նրանց մղած արդարացի պայքարին:

1973-1974 թթ. Լիբանանի մի շարք քաղաքներում ծայր առան գործությին ու համաժողովրդական խոչըր շարժումներ՝ ուղղված շահագործման, կենսասաղության և իշխանությունների վարած ընկերային-տնտեսական բաղադրականության դեմ:

Բնյութում և նրա արվարձաններում տեղի էին ունենում հրապարակային հանրահավաքներ, որոնց մասնակցում էին նաև հայ աշխատավորական զանգվածները: Նոր Հաճընի, Խալի Բաղավիի, Բուրջ Համուդի շրջաններում տեղի ունեցած հանրահավաքների ժամանակ հայ աշխատավորներն արտահայտում էին իրենց բողոքները հայտառ պատառներով: «Հայերը և հայկական հառաջադիմական կուսակցությունները կը դատապարտեն գիներու բարձրացումը», «Բուրջ Համուդի Հայությունը բուռնորն կը բողոքէ կյանքի սղության դեմ» և այլու

1974 թ. փետրվարի 3-ին Լիբանանի կոմկուսի և սոցիալ-դեմոկրատ Հնչակյան կուսակցության նախաձեռնությամբ Բեյրութի Խայիլ Բաղավի և նոր Հաճըն Հայկական շրջանում կազմակերպվեց խոշոր Հանրահավաք՝ կենսասղության դեմ: Մասնակցում էին Լիբանանի կոմկուսի և սոցիալ-դեմոկրատ Հնչակյան կուսակցության ներկայացուցիչներ՝ Գ. Տեր-Նիկողոսյանը, Հ. Գանգրունին, Գ. Մուրյանը, Լիբանանի սոցիալիստական-առաջադիմական կուսակցության անդամ և երկրի խորհրդարանի պատգամավոր Զ. Խաթիպը: Նրանք իրենց ելույթներում նշեցին Հայ աշխատավորների ու երկրի ժողովրդական զանգվածների ընկերային-տնտեսական կյանքի նույնության մասին: Այստեղ ուղղակի շեշտվեց, որ «Հառաջադիմական ուժերը կը նկատեն թե ժողովրդական պահանջներուն կենսագործման համար մղվող ու մղվելիք պայքարը ժողովրդական բոլոր խավերուն կենսական պարտականությունն է: Մենք Համոզված ենք, թե սոցիալ-դեմոկրատ Հնչակյան և կոմունիստ կուսակցություններու միջև կատարվող գործակցությունը ի խնդիր ժողովրդին կենսական շահերուն պաշտպանության՝ ունի մեծ նշանակությունը Հայ աշխատավոր ժողովրդը իր պահանջներուն չուրջ բոլոր տեսակետով: Թող առավել ևս ամրապնդի զույգ կուսակցություններու միջև Համագործակցությունը՝ ի խնդիր Հայ և արարականական պանդիկաներու բարորության» (20):

Լիբանանի աշխատավորության իրավունքների պաշտպանության համար տեղի ունեցած Համբենհանուր գործադրությունն ու ցուցերը, իրենց մասնակից դարձնելով նաև Հայերին, կրում էին Համաժողովրդակարական բնույթ և կարենոր նշանակություն ունեցան երկրի բանվորական շարժման պատմության մեջ: Այդ շարժումները, ուղղված լինելով երկրի խոշոր բուժուազիայի և իշխող վերնախավի շահերի դեմ, որոշակիորեն նպաստեցին աշխատավորության պահանջների իրագործմանը:

1975 թ. Լիբանանում բռնկված քաղաքացիական պատերազմը էլ ավելի խորացրեց երկրի տնտեսական տագնապը և իր նախաղեապը չունեցող ծանր վիճակ ստեղծեց ժողովրդի համար: Բոլոր ողբերգությունների կողքին, պատերազմի պատճառած աշավոր բեռը հիմնականում ընկափ նրա ուսերին, բերելով նոր դժվարություններ ու զրկանքներ:

Պատերազմի առաջին հինգ տարիներին աշխատավորության տնտեսական ծանր պայմանների մասին ընդհանուր պատկերացում է տալիս լիբանանյան «Ան-Նիդա» շաբաթթերթում լուս տեսած տեղեկագիրը, ուր նշված է: «Աշխատավոր և պատճոնյա ընտանիքների 89 %-ը ընակարանների համար նոր ապրանքներ գնելու հնարավորություն չի

ունեցել, 86 %-ը զրկված է եղել անձնական հաճույքներից և հոգևոր բավականությունից, 78 %-ը կրօնատեղի է հագուստեղենի վրա կատարվելիք ծախսերը, 71 %-ը հարավորություն չի ունեցել լրացուցիչ մննդամեթերք գնելու, 57 %-ը զրկված է եղել բուժխնամքից, 50 %-ը ստիպված է եղել ամենօրյա աշխատանքից բացի հավելյալ գործ փնտրել, 44 %-ը իր զավակներից մեկին հարկադրված հանել է դպրոցից, 15 %-ը վաճառել է ունեցվածքի որոշ մասը, 9 %-ը կազմում են այն ընտանիքները, որոնց մեկից ավելի անդամները գաղթել են արտասահման (21):

Նախորդ տարիների համեմատությամբ, քաղաքացիական պատերազմի ժամանակ զգալիորեն բարձրացան ինչպես սննդամթերքի, այնպես էլ արդյունաբերական ապրանքների գները ու բնակարանային վարձերը: Սղության դեմ պայքարը դարձավ աշխատավոր ժողովրդի կարևոր պահանջի արտահայտությունը:

1979 թ. կեսերին Լիբանանի արհմիութենական ու բանվորական կազմակերպությունները աշխատացրին իրենց գործունեությունը երկրում: Նրանք կազմակերպում էին գործադրությունը ու հանրահավաքներ՝ ուղղված չարաշահումների դեմ, պահանջելով աշխատավարձերի բարձրացում և անհրաժեշտ միջոցների ձեռնարկում ժողովրդի կենսամակարդակը բարեկավելու համար:

Նույն թվականի վերջերին ժողովրդական շարժումները կրեցին ավելի զանգվածային բնույթ, իրենց մեջ ընդգրկելով նաև Հայ աշխատավորությանը: Դեկտեմբերին Զարիֆ, Վաթվաթ և Այն Մրեյս թաղերի Հայ բնակչության մասնակցությամբ տեղի ունեցավ մի ժողով, որը քննարկվեցին երկրի տնտեսական ծանր վիճակն ու թանկության պատճառները: Ժողովի մասնակիցներն ընտրեցին Հանձնաժողով՝ ստեղծված ճգնաժամային պայմաններու նշուակչության պահանջները և դրանք վերադաս մարմիններին ներկայացնելու նպատակով: Այդ պահանջներն էին:

ա) ճշտել ապրանքների գները, հսկել և ապահովել անոր հարգումը առօրյային մեջ,

բ) քաջալերել համագործակցություններու (կոռպերատիվ) ցանցը,

գ) աշխատավարձերու աստիճանական հավելում,

դ) բնակարանային վարձերը նվազեցնել 50 %-ով (22):

Մայրաքաղաքի Հայաշատ թաղամասերում կազմակերպվում էին Հայ աշխատավորության հավաքներ և հանդիպումներ, որոնց ժամանակ կարծիքներ էին փոխանակվում թանկության չորջ ելքեր փնտրվում

ստեղծված վիճակից դուրս գալու համար: Հավաքների մասնակիցները, ինչպես գրում է «Վանշլո», «միաձայնությամբ իրենց պատրաստակամությունը կը հայտնեն նեցուկ կանգնելու սենդիկաներու պահանջերուն և հայ աշխատավորներն ալ մասնակից դարձնելու կատարվելիք շարժումներուն» (23):

1980 թ. սկզբին Լիրանանի արհմիությունների ընդհանուր համադաշնակցության ջանքերով բարձրացան աշխատավորության ամսական աշխատավարձերը 29 %-ով, և նվազագույն աշխատավարձը 525 լիր. լիրայից բարձրացավ մինչև 675 լիրա: Այդ հավելումը կարևոր նվաճում էր և գործություն ունեցող գների պայմաններում որոշակիորեն խոստանում էր բարեկավել սահմանափակ եկամուռ ունեցողների գնողունակության մակարդակը:

Սակայն շարունակվող քաղաքացիական պատերազմը և իշխող վարչակարգի անկարողությունը տնտեսական քաղաքականության մեջ նպաստում էին գների շարունակական աճին և ծայրաստիճան վատթարացնում աշխատավորության տնտեսական վիճակը: Երկրում տիրող անրնական պայմանները մեծապես ազդում էին ժողովրդի վրա: Գործազրկությունը դարձավ սովորական երևույթ և շատերին ստիպեց աշխատանք որոնելու համար արտագործել երկրից:

Հայտնի է, որ պատերազմի տարիներին դադարեցին գործել մայրաքաղաքի և նրա արվարձաններում գտնվող բազմաթիվ ձեռնարկություններ: Դրանց որոշ մասը ամբողջությամբ քանդված էր, կային նաև մասամբ վնասված և վերականգնման անկարողության պատճառով անգործության մատնված շատ գործարաններ: Տիրող կացության պատճառով փլատակների վերածված ձեռնարկությունների աշխատողները զանգվածարար ազատվում էին գործից: Կյանքի անապահովության և անկայունության պայմաններում բազմաթիվ աշխատավորներ՝ նրանց թվում նաև հայեր, անկարող լինելով ներկայանալ իրենց գործատեղերում, նախընտրում էին անգործ մնալ: Անգործությունը զանգվածային արտագաղթի պատճառ դարձավ: Արդեն 1977 թ. վերջերին, պատերազմից երկու տարի անց, Լիրանանից արտագաղթածների ընդհանուր թիվը հասել էր մոտ 80.000-ի (24):

1978 և 1979 թթ. բերութիւն հայկական թաղամասերի վրա փաղանգավորների կատարած Հարձակումները բացասարար անդրադարձան հայ աշխատավորության վրա: Հատկապես հայերին պատկանող հյուսվածքների և կոչիկի ձեռնարկություններում աշխատող բանվորները հարկադրված էին մնալ իրենց տներում, քանի որ անցումը մեկ շրջանից

մյուսը անհնարին էր: Հայկական թաղամասերում նման ձեռնարկությունների բացակայությունը և ընդհանուր անապահովության մթնոլորտը պատճառ դարձան, որ շատ հայեր մատնվեն անգործության և, ի վերջո, հարկադրված լինեն բռնելու արտագաղթի ճանապարհը: Հայ համայնքի զանգվածային արտագաղթը լուրջ բռնույթ կրեց և մտահոգեց ազգային իշխանություններին: Սակայն, ցավոր սրտի, պատերազմի պատճառով ստեղծված քաղաքական անրութեալ տագնապը անկարող էր կասեցնել պարտադրված ադրագաղթը, որի հիմնական ալիքն ուղղված էր Պարսից ծոցի երկրներ, ԱՄՆ, Կանադա և Ավստրալիա:

Բ. Լիրանանի Հայ գյուղացիությունը

Ինչպես լիրանանահանայ աշխատավորությունը Լիրանանի բանվոր դասակարգի մի մասնիկն է, այնպես էլ լիրանանահանայ գյուղացիությունը Համարվում է երկրի գյուղացիության անրաժանական տարրը: Հայ գյուղացիության խնդիրներն ու գյուղատնտեսության զարգացման հարցերը սերտորեն կապված են Լիրանանի գյուղատնտեսության ընդհանուր գոյավիճակի հետ:

Լիրանանի տնտեսությունը տարիներ ի վեր հիմնված է եղել գյուղատնտեսության վրա: Լինելով ազգարային երկիր, այնտեղ հիմնականում մշակվում է ցորեն, գարի, եղիպատացորեն, ծիսախոտ, արևադարձային գյուղմթերքներ և այլն: Բավականին ուշադրություն է դարձվում նաև անասնապահության զարգացման վրա:

Գիտատեխնիկական մեթոդների կիրառման բացակայության պատճառով, երկրում գյուղատնտեսության զարգացման խնդիրը կանգնած էր որոշակի խոշընդուների և դժվարությունների առջև: Գյուղատնտեսության զարգացման գլխավոր խոշընդուներից մեկը հանդիսանում էր Հողատարածությունների կենտրոնացումը խոշոր ավատեր կալվածատերերի ձեռքում:

Տարեցտարի կրճատվում էր գյուղատնտեսությունից ստացվող ագգային եկամտի բաժինը: Եթե 1950-ական թթ. այն կազմում էր ազգային եկամտի 30 %-ը, ապա 70-ական թթ. նվազելով՝ դարձել էր 10 %-ից էլ պակաս (1): Խիստ նվազել էր նաև տեղական գյուղատնտեսական մթերքների արտադրության բաժինը ներքին շուկայի մատակարարման մեջ: Այսպես, 70-ական թթ. Լիրանանը ներմուծում էր իր սպառման հացահատիկի 75 %-ը, մսի 80 %-ը և կաթնամթերքի 60 %-ը (2), իսկ

բանջարեղենի և մրգերի պահանջարկի միայն մեկ երրորդ մասն էր ապահովում ներքին չուկայում:

Զնայած Լիրանանի ընդհանուր տարածքի փոքրությանը (10,400 քառ. կմ), կամ 1,007,201 հեկտար, մշակվող տարածքը կազմում էր 273,890 հեկտար: 70-ական թթ. երկրի մշակելի հողերը ընդհայնվելու փոխարեն նվազել էին: Գրեթե 170,000 հեկտար հողատարածություն գտնվում էր անմշակ վիճակում, այսինքն այնքան, որքան կազմում էին անմշակ հողերը:

Գյուղատնտեսական մթերքների արտադրության գործընթացում սակավահող, մանր ու միջակ գյուղացին ենթարկվում էր շահագործման: Լիրանանի պայմաններում սակավահող գյուղացի էր համարվում 1-10 դոնում, մանր՝ 10-30, միջակ՝ 30-50, հարուստ՝ 50-200, խոշոր կալվածատեր՝ 200-ից ավելի դոնում ունեցողը (3):

Շահագործումն արտահայտվում էր հատկապես կալվածատերերի կողմից պարտադրված հողավարձերի թանկության, փոխառությունների ստացման դժվարությունների, սերմերի հայթայթման, գյուղատնտեսական մեքենաների վարձակալման կամ գնման, անհրաժեշտ պարարտանյութերի և բազմազան այլ ծախսերի կատարման ժամանակ: Դրան ավելացնենք նաև գյուղատնտեսական մթերքների արտադրության տարեկան թերքի մոտավորապես 20 %-ի ոչնչացումը բնության պատճառած վնասների հետևանքով և այդ ուղղությամբ կիրառվելիք միջոցառումների կամ դիտական մեթոդների օգտագործման բացակայության հանգամանքը:

Գյուղատնտեսության ոլորտում տիրող անիշխանությունն ու ագրարյին ծրագրի բացակայությունը էլ ավելի էին դժվարացնում առկա խոշընդուների լուծման հնարավորությունները: Այս պայմաններում մանր ու միջակ գյուղացիության, ինչպես նաև գյուղատնտեսության բնագավառում աշխատող բանվորների վիճակը օրըստորք վատմարանում էր:

Գյուղական վայրերում ուշադրությունից դուրս էր մնում նաև հողի մարդկանց ընկերային պայմանների բարելավման՝ հատկապես դպրոցների, հիվանդանոցների, բժշկական խնամքի, հանրային ծառայությունների և սպասարկման ցածր մակարդակը բարելավելու խնդիրը: Այս ամենը իրար գումարվելով՝ պատճառ դարձան բազմաթիվ աղքատ, մանր ու միջակ գյուղացիական տնտեսությունների քայրայմանը, որոնք պարտքերից ազատվելու համար հաճախ իրենց հողակտորները դիմում էին կարգածատերերին, վաճառում վաշխառուներին և դառնում կիսապրոլետարներ (4): Միաժամանակ, շղիմանալով գյություն ունե-

ցող դժվարություններին, բազմաթիվ գյուղացիներ դիմում էին դանգվածային արտագաղթերի՝ մեկնելով մայրաքաղաք կամ արտասահմանյան երկրներ:

Լիրանանան իշխանությունները երկրի գյուղարնակ շրջաններում արմատական բարեկիսություններ կատարելու ուղղությամբ ոչ մի միջոց չէին ձեռնարկում: Երկրում գյություն չուներ որևէ օրենք, որը սահմաներ շահագործվող գյուղացիության և շահագործող պավատեր-կալվածագործերի փոխարարերությունները: Դեռևս կիրառվում էին վարձակալման այնպիսի ձեռք, ինչպիսիք էին մուրարան՝ բառորդային, երբ գյուղացին ստանում է բերքի 1/4-ը, իսկ հողատերը՝ 3/4-ը, և մունասափան՝ կիրարությունը (5):

Լիրանանի կառավարության քաղաքականությունը, փաստորեն, դրված էր երկրի խոշոր կալվածատերերի ու կապիտալիստների ծառայության տակ՝ ինպատ նրանց շահերի պաշտպանության:

Լիրանանի տնտեսության զարգացման խնդիրը որպես տնտեսական, քաղաքական, ընկերային և ազգային առաջնահերթ հարց, միշտ գտնվել է տարրեր բաղաքական ուժերի ուշադրության կենտրոնում:

1971 թ. առաջադիմական ուժերից մեկի՝ Լիրանանի կոմկուսի կողմից մշակվել էր ազգարային մի ծրագիր, որը հաշվի առնելով երկրի առանձնահատկություններն ու պայմանները, գիտական ուսումնասիրության էր ենթարկել գյուղատնտեսական վիճակը, ինչպես նաև նրա դարձացմանը խոշընդուռող հանգամանքները և առաջ քաշել հողային հարցը լուծելու վճռական պահանջը, ճշտելով անհրաժեշտ բայլերի և ձեռնարկվելիք միջոցառումների ուղիները:

Վերոհիշյալ ծրագիրը, որի մասին կանոնադատությանը գյուղացիությանը, որի ճնշող մեծամասնությունը կազմված էր մանր գյուղացիներից, որոնք գլխավորաբար գրադարձ էին խնձորի մշակությամբ, այգեգործությամբ, մասամբ նաև՝ անասնապահությամբ:

Փոքր-ինչ առաջ անցնելով՝ կանգ առնենք լիրանանահայ գյուղացիության վրա:

Լիրանանահայ գյուղացիությունը հիմնականում կենտրոնացած է Այնձար ավանում, որը գտնվում է Թեկեայի դաշտավայրում՝ Թեյրութ-Դամակոս ճանապարհաեղթի վրա: Խնչպես արդեն նշել ենք վերևում, 1939 թ. բազմահաղաքար հայեր (մուսալեռցիներ), Ալեքսանդրեան սան-ջակը թուրքային բռնի կցվելուց հետո, ստիպված են լինում հեռանալ այնտեղից և գրադեցնում են Այնձարի տարածքը:

Մինչև 1940-ական թթ. վերջերը Այնձարում հաստատված մուսալեռցիները շէին կարողանում համակերպվել նոր միջավայրի պայմաններին և գտնվում էին անորոշ վիճակում: Նրանք հույս ունեին և անհամբեր սպասում էին այն օրգան, երբ պատերազմի ավարտից հետո հնարավոր կիմներ կրկին վերադառնալ իրենց հարազատ լեռնաշխարհը: Մուսա յետ և կամ մեկնել Խորհրդային Հայաստան և միանալ Մայր Հայրենիքի ժողովրդին:

Երկրորդ աշխարհամարտի ավարտից հետո ընկած ժամանակաշրջանը համընկավ Հայրենադարձության հետ: 1946-1947 թթ. Այնձարի հայ ազգաբնակչության չուրջ կեսը՝ 548 ընտանիք, ներգաղթեց Հայրենիք, իսկ մնացածը, Հաշտվելով տեղում մնալու գաղափարի հետ, վերջնականապես կապվեց հողին, օգտագործելով նաև Հայաստան գաղթած իրենց Հայրենակիցների կալվածքները:

1950-ական թթ., այնձարահայության ջանքերով, երկրի ամենամոռյու ու ամայի շրջանը վերածվեց գյուղատնտեսության համար մշակելի տարածքի և ծածկվեց տասնյակ հազարավոր պտղատու ծառերով: Փաստորեն, Հայարնակ այս ավանը տարիների ընթացքում դարձավ երկրի գյուղատնտեսության զարգացման կարևոր կենտրոններից մեկը:

1970-ական թթ. սկզբին այնձարահայության թիվը Հաշվվում էր չուրջ 4000 հոգի: Ցուրաքանչյուր ընտանիքի եկամտի հիմնական աղբյուրը Հանդիսանում էր 1,5 հա (կամ 15 դոնում) հողատարածությունը, որը Հավասարապես բաժանվել էր Հայությանը դեռևս 1939 թ.:

Անդրադառնալով Այնձարի գյուղացիության սոցիալական կառուցվածքին, Նրանց ընդհանուր առմամբ կարելի է դասել մանր գյուղացիների շարքին, որոնց ընդհանուր թիվը Լիրանանում կազմում էր չուրջ 91.000: Սակայն, եթե Համեմատելու լինենք Լիրանանի գյուղական այլ շրջանների հետ, կտևանենք, որ պատկերը Այնձարում գրեթե նույնը չէ, ինչպես մյուս շրջաններում: Երկրի գյուղական մյուս շրջաններում ակնառու էր ֆեռադական ու կապիտալիստական արտադրահարերությունների գյուղությունը, և պահպանվում էին թե՛ Հողագուրկ և թե՛ մանր, միջակ գյուղացիներ ու Հարուստ կալվածատերեր:

Բեյրութում հրատարակվող «Էսանչ» շաբաթաթերթի աշխատակից Պ. Թութունյանը բավականին Հարուստ տեղեկություններ է Հավաքել Այնձարի գյուղատնտեսության զարգացման և հայ գյուղացիության պայմանների ու գոյագիծակի մասին: Նրա Հաղորդած տեղեկությունների համաձայն, Այնձարում բնակվող յուրաքանչյուր Հայ գյուղացի իր հողամասը ծառայեցրել է երկու նպատակի՝ բնակարանին և դրան կից

այգու ու ավելի մեծ մաս կազմող մշակելի տարածքին: Ցուրաքանչյուր ընտանիք իր ունեցած մշակելի հողը համարյա ամրողջովին ծածկել է խնձորենիներով: Հայ գյուղացին մեկ դոնումից առավելագույնը ստացել է 700-1000 կգ խնձոր, այսինքն՝ տարեկան ստացել է մոտ 12 տոննա բերք (6): Այնձարի մշակելի ու ոռոգվող հողերի մասին խոսելիս, պետք է նկատի ունենալ, որ դրանց 85%-ը դրահեցնում են խնձորենիները, որոնք բավականին եկամտարեր են գյուղացիության համար: Սակայն անխուսափելի են նաև կիմայական անբարենպաստ պայմանները, ցուրտը կամ երաշտը, որոնք վնասակար աղղեցություն են գործում գյուղատնտեսական մթերքների տարենկան ընդհանուր արտադրության չուրջ 20%-ի վրա:

Հայ աշխատավոր մարդու շինարար բաղուկի հետ մեկտեղ մեծ դեր է խաղացել նաև ջուրը: Մշակելի հողերի ոռոգումը հիմնականում կատարվում էր Այնձարի և Շեմսինի գետերից, որոնք ամրողջովին բավարում էին ոռոգման պահանջը:

Հիմնականում խնձորի մշակությամբ գրավվող Այնձարի Հայությանը կարելի է խմբավորել երեք ստորաբաժանումների: առաջին խումբը գրեթե ամրողջապես կապված է իր հողին, և նրա Համար խնձորի արտադրությունը ապրուստի հիմնական միջոցն է: Երկրորդ ստորաբաժանման մեջ ընդգրկված են նրանք, ում Համար խնձորի մշակումը Հաճույքի կամ գրադաւուքի միջոց է, նաև՝ Հավելյալ եկամտի աղբյուրը: Այս Հատվածի ապրուստի հիմնական միջոցը կամ գյուղում է կամ էլ նրա սահմաններից դուրս: Եվ, վերջապես, փոքր տոկոս կազմող երրորդ խումբը առնչություն չունի այգեգործության հետ և, իր ունեցած մշակելի տարածքը վաճառած լինելով ուրիշներին, ապրուստի ու եկամտի աղբյուրը գտնել է այլ ասպարեզներում: Ի դեպ, պետք է նշել այն Հանգամանքը, որ Այնձարում գյուղատնտեսական աշխատանքների մեջ ավելի շատ ընդգրկված են երիտասարդները, քան տարեց մարդիկ:

Խնձորը, որպես գյուղատնտեսական հիմնական արտադրատնտեսակ, արտահանվում է Այնձար ժամանած առևտրականների միջոցով: Վաճառքը կապված է որոշակի դժվարությունների հետ: Եթե Հայ գյուղացին խնձորի վաճառքից կարողացավ ապահովել 2400 լիր. լիրա (մեկ կգ խնձորը վաճառելով 20 դաշեկանով), ապա 400 լիրա նա կվճարի 12 դոնում չողի Համար գնելիք պարարտանյութեր, ծառերին սրսկումներ կատարելու, ջրելու, հերկելու և այլ ծախսերի համար: Խման պարագայում, եթե ամեն ինչ ընթանա բնականոն հունով, ապա նա կարող է տարեկան ապահովել 2000 լիրայի եկամտութ, որի մեջ ներդրված է իր և

ընտանիքի որոշ անդամների աշխատանքը: Հիշյալ գումարը չի կարող ապահովել իր տարեկան բնդհանուր ծախսերի գոնե կեսը (7):

Խնձորի սպառման մոտահաջությունը ինչպես Այնձարի, այնպես էլ Իիրանանի բոլոր գյուղացիների և Հատկապես մանր ու միջակ գյուղացիների Համար մշտական մղմագանջ է: Այդ խողիրը թողնվել է խոշոր առևտրականների կամ միջնորդների քմահաճույքին, որոնք որոշչի դեր են խաղում գների սահմանման գործում և ապահովում են Հսկայական եկամուտներ:

Խնձորի և պտղատու այլ մրգերի մշակումից բացի, Այնձարի Հայերի որոշ մասը զրադկում է նաև անասնապահությամբ, բնակչությանն ապահովելով մսով, կաթով և այլ մննդամթերքներով:

«Այդ» օրամերթի թղթակից Շահանդուխտը, այցելելով Այնձար և ծանոթանալով Հայարնակ գյուղերի կանքի բոլոր կողմերին գրում է. «Խոպան դաշտի կտոր մը իսկ չկա: Բոլորն ալ մշակված: Ամերիկյան Համալսարաննեն շրջանավարտ հայ գյուղատնտեսներ հու են: Կան աղարատերեր, որոնք կապ կը պահեն Հողանդիայի հետ և նույնիսկ կը բերեն Հողանդական կովեր, կաթնատնտեսությունը զարգացնելու Համար: Եկ ասիկա միայն ու միայն սեփական նիգով, Հողին ու քարին մեջ եղունգ մաշեցնելով, ժամանակեն շատ կանուխ ծերանալով» (8):

Այնձարում անասնապահությամբ զրադկում էր բնակչության մոտ 25%-ը: Միջին Հաշվով կաթի օրական արտադրությունը կազմում էր 1000-1500 լիտր, որի «ամեկ մասը կապահի ներքին չուկայի վրա, իսկ մնացած մեծ տոկոսը կիրոն 45 լիտ. դահեկանեն կը վաճառվի Այնձարի Գարակոյան Հաստատության կամ այլ մնաքանակ սպառողներու» (9):

1970-ական թթ. սկզբին Այնձարն ուներ երկու կամսատուն, որոնցից մեկը Համարվում էր անձնական սեփականություն, իսկ մյուսը Հովանավորում և ղեկավարում էր Գարակոյան բարեսիրական Հաստատությունը:

Անասնապահությամբ զրադկող յուրաքանչյուր ընտանիք կաթի արտադրությունից միջին Հաշվով օրական ապահովում էր չուրջ 600 լիտ. դահեկանի եկամուտ: Սակայն այդ գումարի մոտ 50%-ը ծախսվում էր ինչպես անասունների խնամքի, այնպես էլ անասնակերի Հայթայթման վրա: Այդ Հաշվարկով, ընտանիքի տարեկան ընդհանուր եկամուտը կարող էր կազմել չուրջ 1000 լիտ. լիրա: Նման պարագայում, անասնապահությամբ զրադկող հայ գյուղացին չէր կարող ունենալ իր տնտեսությունը ընդարձակելու և զարգացնելու հարավորություն և, հանդիպելով նյութական որոշակի դժվարությունների, ինչպես նաև շահա-

գործման և տեղայլի, Հարկադրված էր (Հատկապես գյուղի երիատասարդ սերունդը) լքել գյուղական միջավայրը և գաղթել մայրաքաղաք Բեյրութ:

Մենք արդեն նշել ենք վերսում, որ 1971 թ. Լիրանանի կոմկուսը մշակել ու առաջ էր քաշել գյուղատնտեսության զարգացման ծրագիր, որը արտահայտում էր նաև լիրանանահանաց և, մասնավորապես, Այնձարի գյուղացիության անմիջական պահանջները: Այդ ծրագիրը անհամար էր Համարում արմատական ագրարային բարեփոխություններ իրականացնել, հիմնական ուշագրությունը դարձնելով Հետեւյալ խողիրների վրա:

1. Սահմանել Հողի սեփականության առավելագույն շափ:

2. Բնագրավել բոլոր Հողերը, որոնք գտնվում էին տեղական և օտարերկրյա կապիտալի տնօրինության ներքո և որոնք խվել էին գյուղացիներից՝ պարտքերի բարձր տոկոսների դիմաց:

3. Բնագրավել այն Հողատարածությունները, որոնց շափը գերազանցում էր Հողի սեփականության սահմանված առավելագույն տարածությունը, և դրանք անվճար բաժնել Հողագուրեկ, սակավաճող գյուղացիներին ու գյուղատնտեսական բանվորներին սեփականատիրական իրավունքով և այն պայմանով, որ Հող ստացող գյուղացին առաջին տարին այն շմշակելու դեպքում ենթակա կլինի տուգանքների վճարման, իսկ երկրորդ տարում արդեն, նույնը կրկնվելու դեպքում, կդրկի իրեն տրված Հողատարածությունից:

Ագրարային բարեփոխությունների իրականացման ճանապարհին Հիշյալ ծրագրում կարենոր տեղ է Հատկացված Հող ստացող գյուղացիներին փոխառություններ, սերմացու, ոռոգման միջոցներ, արդիական սարքավորումներ և մասնագետներ տրամադրելու հարցին, որի ապահովման պարագայում կրաքրանար աշխատանքի արտադրողականությունը: Այդ ծրագրի Համաձայն, «պաշտպանվում էր մանր ու միջակ Հողատերերի սեփականությունը, վերանում էին խոշոր Հողատերերի մնչումները և առավել ընդունելի պայմաններ էին ստեղծվում Հողի արդյունավետ օգտագործման ու գյուղացու կենսամակարդակի բարձրացման Համար» (10):

Լիրանանի կոմկուսի կողմից առաջ քաշված ագրարային արմատական բարեփոխությունների հիմնական խողիրների մեջ կային կետեր, որոնք անմիջականորեն կապված էին լիրանանահանաց գյուղացիության պահանջների հետ և արտահայտում էին նրա կենսական շահերը: Գրանք էին.

1. Լիակատար աղատություններ տալ մանր ու միջակ հողատեր գյուղացիներին՝ ստեղծելու համար արհեստակցական միություններ, շրջանային և ազգային կազմակերպություններ:

2. Ապահովել գյուղերում ժողովրդավարական ընդհանուր աղատությունների միջնորոր և ստեղծել անհրաժեշտ պայմաններ՝ քաջալերելու համար կոռպերատիվ շարժումը գյուղերում, որը գործնականում կարող էր նպաստել մանր ու միջակ գյուղացիների շահերին և ձերբագանել նրանց խոշոր հողատերերի ազդեցություննեց:

3. Յուրաքանչյուր կոռպերատիվ մարմնի անհրաժեշտ է տրամադրել վարկեր, աջակցել մասնագետներով և տալ նրան լիազորություններ՝ ներմուծելու գյուղատնտեսական տեխնիկա և նվազ տուրքերով բիմիական նյութեր:

4. Փոխադրական միջոցներ տալ կոռպերատիվ հաստատություններին՝ գյուղմթերքները դեպի սպառման չուկաներ փոխադրելու խնդիրը դյուրացնելու նպատակով: Միաժամանակ այդ հաստատություններին անհրաժեշտ է օժանդակել, որպեսզի յուրաքանչյուրն ունենա իր կենտրոնը քաղաքներում՝ արտադրանքը ժամանակին իրացնելու համար: Դրանով կոռպերատիվ հաստատությունների կենտրոնները կարող էին դառնալ կապի միջոց արտադրողի և սպառողի միջն (11):

Լիբանանահայ գյուղացիության համար կարևոր նշանակություն ուներ մանր ու միջակ հողատերերին տուրքերից աղատելու խնդիրը: Փաստորեն, նրանց գերծ պահելով տուրքերից և սահմանելով տուրքեր խոշոր հողատերերի եկամուտների վրա, հնարավոր կլիներ այդ տուրքերի հաշվին մեծացնել սոցիալական ապահովությունը և հոգալ մանր ու միջին հողատերերի մշակելի տարածությունների յուրացման վրա արվող ծախսերը:

Ենելով իր անմիջական շահերից, լիբանանահայ գյուղացիությունը Այնձարում, կոռպերատիվ հաստատություններ ստեղծելով, կարող էր նպաստել ագրարային արմատական բարեփոխությունների իրականացմանը և, համագործակցելով մարդի շրջակա գյուղերի արար գյուղացիական դանդաղածների հետ, կապահովեր նաև գյուղատնտեսության հետագա զարգացումը և իր կյանքի կենսամակարդակի բարձրացումը:

**Գ. Լիբանանի աղգային իշխանությունը,
նրա գործունեությունը և Հայ համայնքի
իրավական դրությունը**

Լիբանանը կրոնական էթնիկ բազմաթիվ համայնքներից ու խմբավորումներից կազմված երկիր է, որոնք պաշտոնապես ճանաչում են գտել լիբանանյան կառավարության կողմից:

Երկրի մաշմեղական (սունի և լիա նյուղավորումների) և դրուգ աղգարնակչության կողքին զգալի թիվ են կազմում քրիստոնյա համայնքի ներկայացուցիչները՝ մարոնիները, ինչպես նաև Հույն ուղղափառ, Հույն կաթողիկե, նեստորական և յակորիտ դավանանքի հետնորդները, Հայ առաքելական, Հայ կաթողիկե և ավետարանական հարանվանությունները:

Լիբանանի վերջին՝ 1932 թ. մարդահամարի համաձայն, քրիստոնյաները կազմել են բնակչության մեծամասնությունը՝ 53 %, մաշմեղականները՝ 40 %, դրուգները՝ 6 % և մնացած փոքրամասնությունները՝ 1 % (1): Սակայն տարիների ընթացքում երկրի բնակչության կոֆեսիոնալ համակարգի հավասարակշռությունը սկսում է խախտվել, քրիստոնյաների հետ համեմատած մաշմեղական աղգարնակչության չելտակի աճի հետևանքով:

Հայ համայնքը լիբանանում ներկայանում է կրոնական երեք հարանվանություններով՝ Հայ առաքելական, կաթողիկե և ավետարանական: Այս հարանվանություններին պատկանող եկեղեցիները աղդեցիկ և մեծ դեր են խաղացել ու շարունակում են խաղալ լիբանանի Հայ համայնքի աղգային կյանքում: Առաքելական եկեղեցին համախմբել է իր շորջը Հայ աղգարնակչության մոտ 80 %-ը, կաթողիկե համայնքը ներկայացնում է Հայության ընդհանության 15 %-ը՝ մոտ 30.000 մարդ և, վերջապես, 5 %-ը՝ (2) 10.000 հոգի հետևում է ավետարանական եկեղեցուն:

Հայ առաքելական և կաթողիկե եկեղեցիները պաշտոնապես ճանաչված են լիբանանյան իշխանությունների կողմից և ունեն անկախ գործունեություն ծավալելու կարգավիճակ: Մինչդեռ Հայ ավետարանական եկեղեցին լիբանանի ընդհանուր ավետարանական եկեղեցիների միության մաս է կազմում և չունի անկախ կարգավիճակ: Այն անդամակցում է Մերձավոր Արևելքի ավետարանական եկեղեցիների միությանը:

Կիրանանահայ Համայնքն առաջնորդվում ու ղեկավարվում է երեք՝ անձնական ու ղատական իրավունքների և ազգային սահմանադրության օրինագրքերով, որոնք փակերացված են լիրանանյան կառավարության կողմից: Ի տարրերություն սփյուռքի մյուս Հայաշատ կենտրոնների՝ ԱՄՆ-ի կամ Եվրոպական Հայկական Համայնքների, լիրանանահայությունը, ըստ երևույթին, բացառություն է կազմում պետական նման իրավասություններ վայելելու մեջ:

Լիրանանի Հայ առաքելական Համայնքի ազգային, կրոնական, եկեղեցական, կրթական և վարչական գործերը ամբողջապես ղեկավարվում են 1863 թ. Հողակած Ազգային սահմանադրության սկզբունքներով: Այդ սկզբունքներով է առաջնորդվում ու գործում ինչպես Մեծի Տան Կիլիկիո կաթողիկոսությունը, այնպես էլ լիրանանյան թեմը (3):

Մեծի Տան Կիլիկիո կաթողիկոսության օրենսդիր մարմինը Հանդիսանում է Ազգային ընդհանուր ժողովը, որի հիմնական խնդիրն է՝

1. Անխախտ պահել Ազգային սահմանադրության հիմնական սկզբունքները:

2. Ծնտրել Ազգային կենտրոնական վարչության կրոնական ու քաղաքական ժողովներ և մշակել դրանց գործունեության ընդհանուր ուղղեգիծը:

Ազգային ընդհանուր ժողովի և կենտրոնական վարչությունների (կրոնական և քաղաքական) նախագահը Հանդիսանում է կաթողիկոսը: Ազգային ընդհանուր ժողովի անդամները ընտրվում են թեմների գավառական կամ թեմական ժողովների կողմից՝ յուրաքանչյուր 10.000 չնչին մեկ անդամ: Այն թեմները, որոնց ընակչության թիվը պակաս է տասը Հայարդից, իրավունք ունեն մեկ հոգևորական և մեկ աշխարհիկ անդամ ունենալու: Այստեղ ավելացնենք նաև, որ Ազգային ընդհանուր ժողովի անդամների թվի մեկ յոթերորդը բաղկացած է Հոգևորականներից, իսկ վեց յոթերորդը՝ աշխարհիկ տարրերից: Ի պաշտոնե Եկեղեցական անդամները թեմակալ առաջնորդներ են, սակայն նրանց կողքին կամ այլ Եկեղեցականներ, որոնք ընտրվում են թեմների Եկեղեցական Համագումարների կողմից: Ցուրաքանչյուր թեմ առնվազն մեկ Եկեղեցական անդամով պետք է մասնակցի Ազգային ընդհանուր ժողովին: Լիրանանի թեմն ունի 15 ներկայացուցիչ անդամներ Ազգային ընդհանուր ժողովում:

Ազգային ընդհանուր ժողովը գումարվում է երկու տարին մեկ անգամ՝ կաթողիկոսի և տեղապահի հրավերով: Արտակարգ Ազգային ընդհանուր ժողովներ կարող են գումարվել Ազգային սահմանադրության նախատեսած պայմաններով:

Ինչպես Մեծի Տան Կիլիկիոյ կաթողիկոսությունն ունի իր Ազգային

ընդհանուր ժողովը և կենտրոնական՝ կրոնական ու քաղաքական վարչությունները, այնպես էլ Լիրանանի թեմը (4) ունի իր սահմանադրական՝ գավառական, քաղաքական և կրոնական ժողովները, որոնց նախագահում է թեմի առաջնորդը:

Լիրանանյան թեմի կրոնական ու քաղաքական ժողովները բաղկացած են յոթ քահանաներից և նույնքան աշխարհիկ անդամներից, որոնք ընտրվում են Ազգային գավառական ժողովի կողմից երկու տարին մեկ անգամ:

Կրոնական ժողովը զբաղվում է կրոնական ու Եկեղեցական խնդիրներով: Աշխատում է կազմակերպել թեմի Եկեղեցիների ու քահանաների գործունեությունը, Հակել Հայաստանյաց Եկեղեցու կանոնների կատարմանը, ծեսերի և կրոնական արարողությունների անցկացմանը:

Քաղաքական ժողովն ընտրում է թեմի առաջնորդին: Այդ մարմնի Հիմնական խնդիրն է Հետևել Ազգային գավառական ժողովի որոշումների գործադրմանը, Հաստատել Թաղական ընտրությունները, վարել զուտ ընտրական ընույթ կրող գործեր: Քաղաքական ժողովը երկու տարվա ժամանակաշրջանի համար նշանակում է տնտեսական և ուսումնական խորհուրդներ, ինչպես նաև կալվածքների տեսչություն:

Տնտեսական խորհուրդը հիմնականում զբաղվում է Ազգային տուրքի գանձումներով և ապահովում է ազգային առաջնորդարանի բյուջեն: Նրա իրավասության մեջ մտնում է վարժարանների, բյուջեների, ինչպես նաև Եկեղեցիների և Թաղական մարմինների Հաշվապահական գործերի վրա Հսկողություն սահմանելը:

Ինչ վերաբերում է ուսումնական խորհրդի պարտականություններին, ապա նրա իրավասության մեջ մտնում է թեմի բոլոր վարժարանների կրթական գործի Հսկողությունը: Այն մշակում է կրթական ծրագիր և կատարում է դասագրքերի ընտրություններ: Ուսումնական խորհրդը ղեկավարում է ազգային վարժարանների գործունեությունը Հաստուկ կանոնադրությամբ, որը Հաստատված է թեմի Ազգային գավառական ժողովի կողմից:

Քաղաքական ժողովի կողմից նշանակված կալվածքների տեսչությունը զբաղվում է թեմի մեջ գտնվող ազգային կալվածքներով, դրանց սեփականաթղթերով և գանազան կալվածախնդիրներով:

Ազգային առաջնորդարանի Եկամուտները գոյանում են նրա կողմից տրված քաղաքացիների վկայագրերի, Հաստատագրերի, ինչպես նաև ամուսնական ու պասակի արտոնագրերի տուրքերից և Եկեղեցիների ծախսարամիններից:

Հարյուր տարուց ավելի է, որ Հայ ժողովրդի արևմտահայ Հատկածի

աղքային-եկեղեցական կյանքը ղեկավարվում է 1863 թ. Հոչակված Աղքային սահմանադրությամբ: Խրանով են ճշտվել Հայ ազգի և նրա յուրաքանչյուր անդամի պարտականություններն ու պարտավորությունները՝ առաջնորդվելով «իրավանց և պարտյաց» հիմնական սկզբունքով:

Աղքային սահմանադրության մեջ տուրքի մասին սկզբունքը ձևակերպված է Հետևյալ կերպ: «Աղքայնոց պարտականությունն է Աղքային պիտոյիտը պահանջաց ծախքերուն մասնակից ըլլալ՝ յուրաքանչյուրը իր կարողության շափով: Աղքին խնդրած ծառայությանցը հոժարակամ հանձնառու ըլլալ և անոր ըրած տնօրինությանց սիրով հասպանդի» (5):

Աղքային սահմանադրության Հոչակումից ու գործադրության մեջ մտնելուց ի վեր աղքային տուրքը առաջ է քերել նյութական պատասխանատվության գիտակցություն աղքային կարիքները Հոգալու Համար: Աղքային տուրքի գանձումը կարևոր դեր է խաղում առաջնորդարանի բյուջեի կազմման մեջ:

Լիրանանի թեմի գավառական ժողովի որոշումով, 1965 թ. ի վեր աղքային տուրքից ստացված Հասույթը բաժանվել է Հետևյալ կերպ: «80%-ը Հատկացվել է ուսումնական և 10%-ը՝ տնտեսական խորհուրդներին, 5%-ը՝ Կրոնական ժողովին և մնացած 5%-ը թողնվել է առաջնորդարանի տրամադրության տակ որպես անձնունմիսելի Փոնդ» (6):

Ինչպես երեսում է տոկոսներից, կրթական գործին արդարացիորեն Հատկացվել է աղքային տուրքի բյուջեի առավելագույն շափը, որը Հաստատում է աղքային վարժարանների պահպանության կարևորության ու դրանց կենսարար դերը: Ուսումնական խորհուրդը աղքային տուրքից գոյացած իր գումարների Հաշվին մեծապես օժանդակում է փոքրաթիվ աշակերտություն ունեցող այն վարժարաններին, որոնց եկամուտները, լինելով սահմանափակ, ի վիճակի չեն ուսուցչական անձնակազմի աշխատավարձերը վճարել ամբողջովին: Միևնուն ժամանակ նույն խորհուրդը ունեցած գումարներով փինանսավորում է նաև օտարահապատակ ուսուցիչներին տրվող Հատկացումների 30%-ը (7):

Աղքային սահմանադրության Համաձայն, թեմի մեջ մտնող Հայաստանյաց եկեղեցուն Հետևող յուրաքանչյուր անդամ պարտավոր է մասնակցություն ունենալ աղքային տուրքի վճարմանը իր ունեցած եկամուտների կարողության շափով: Աղքային տուրքի գանձման շափը բոլորի Համար Հավասար չէ և կապված է յուրաքանչյուր Հայ աշխատավորի եկամատի շափից: Ան ճշտվում և նշանակվում է աղքային վարչության տնտեսական խորհուրդի կողմից՝ տվյալ շրջանի թաղակական հումանագույն համար:

1960-ական թթ. վերջերին և 1970-ականների սկզբին Լիրանանում աղքային տուրքի վճարումների ուղղությամբ տարվող աշխատանքները կազմակերպված ընույթ չեն կրել՝ աղքային իշխանությունների ունեցած թերացումների և ցուցաբերած պատկիւթյան պատճառով: Տնտեսական խորհուրդը, որի վրա դրված է եղել տուրքերի գանձման կանոնավոր աշխատանքներ կատարելու պատասխանատվությունը, չի կատարել վիճակագրական աշխատանքներ և նույնիսկ չի կազմել Հայ առաքելական եկեղեցուն պատկանող Հայության թվական պատկերի շուրջ ճշտական վիճակագրական ցուցակներ:

Լիրանանայն թեմի տնտեսական խորհուրդի ատենապետ Նշան Թյույսուցանը, անդրադառնալով աղքային տուրքի գանձման թերացումներին և դժվարություններին նշում է. «Լիրանանի թեմի աղքային իշխանությունները տեղքայի դատապարտված կացության մեջ կը գտնվին: Աղքային վարժարաններու ցանցը ղեկավարող ուսումնական խորհուրդներ բացի, Աղքային վարչության մյուս բոլոր խորհուրդներն ու ժողովները դարձած են անվանական ներկայություններ: Աղքային իշխանությունները պարզապես Փոլկորիկ նշանակություն մը ստացած են և կը հիշվին եկեղեցական արարողություններու և ընտանելիքան վեճերու առիթով միայն: Իսկ ինչ կը վերաբերի աղքային տուրքին, ապա Հանրային կարծիքը ոչ միայն ծանոթ չէ աղքային դատախարակության գործին մեջ անոր վաստակած դերին, այլև իրեն չի դիմվիր մինչև իսկ գանձումներու Համար» (8):

Աղքային տուրքի գանձման անարդյունավետության պատճառոր պետք է փնտրել ոչ միայն Հայ առաքելական եկեղեցուն պատկանող զանգվածների աղքային պարտականության թերացումների մեջ, այլև, ինչպես ճիշտ է Նկատել ատենապետ Ն. Թյույսուցանը, պետք է բացատրել այդ տուրքի կարևորության ու նպատակի մասին Համայնքի Հետ տարվելիք անհրաժեշտ բացատրական աշխատանքների բացակայությամբ:

Եթե Հետևենք 70-ական թթ. սկզբներին լիրանանայն թեմի աղքային իշխանությունների կողմից Հրապարակված տվյալներին, ապա «160.000 Հայություն Հաշվով երկրում, որից 135.000 պատկանում են առաքելական եկեղեցուն, տոմարներում Հաշվառման մեջ գտնվել են շուրջ 19.000 Հայ, որից ընդամենը 7395 Հոգի է վերաբեր աղքային տուրքը» (9), այսինքն՝ 40%-ը:

Ըսդհանուր պատկերացում կազմելու Համար ստորև ներկայացնում ենք աղքային տուրք վճարողների Համեմատական ցուցակ, որը ցուց է տալիս Լիրանանի տարբեր բաղաբներում ու շրջաններում ապրող Հայության մասնակցությունը (10):

Ծրջաններ	Ամժերի թիվը ըստ տոմարների	Վճարող- թիվը	%-ային հարաբ.
Քերութ	3302	1515	46
Նոր Սարաշ	3406	1272	55
Նոր Սղանա	1765	452	26
Եշրեֆիյե	1528	738	48
Ռզմելլ	1158	238	21
Քարանքինա	1090	434	40
Նոր Շաճըն	1062	164	15
Այնձար	917	506	55
Նոր Սիս	777	231	30
Շայաշեն	712	288	41
Փոքր շրջան (Զունի, Անթիլիաս)	576	279	50
Զահլե	472	286	66
Նոր Ամանոս	435	293	67
Տիդպոլի	347	205	60
Տիրո	1515	494	32

Ինչպես ցույց է տալիս վերոհիշյալ արդյուսակը, Լիբանանի բոլոր հայա-
չատ կենտրոններում ազգային տուրք վճարողների թիվը միջին հաշվով
կազմել է տոմարներում ներկայացված քաղաքացիների կեսից էլ պակաս:

Ազգային տուրքի գանձման արդյունավետ կազմակերպման հարցը
միշտ մտաշոգել է տնտեսական խորհրդին և գտնվել է նրա ուշադ-
րության կենտրոնում:

1972 թ. Լիբանանի թեմի ազգային վարչության տնտեսական խոր-
հրդը մշակել է տուրքերի գանձման նոր եղանակ՝ հենվելով թաղային
բաժանումների վրա: Նկատի ունենալով Լիբանանի հայոց թեմի ութ-
գլխավոր շրջանների բաժանվածության հանգամանքը, որոնցից յուրա-
քանչյուրն ընդունվում է մեկ կամ ավելի թաղական խորհրդներ (ամեն
ծիսի թվական կազմին համապատասխան), յուրաքանչյուր գլխավոր
շրջանի համար նշանակվում էր հատուկ գանձիչ՝ տուրքի գանձումները
կատարելու համար: Եթե նախկինում այդ աշխատանքի պատասխա-
նատվությունն ընկած էր թաղական խորհրդների վրա, նոր կարգով
այն կենտրոնանում էր տնտեսական խորհրդի ձեռքում, որը որպես
հիմնական աշխատանք պարտավորվում էր մոտավոր ճշտությամբ կազ-
մել ազգային տուրք վճարելու ենթակա հայերի անվանացանկը, նրանց
հասցեներն ու կեցության տվյալները, ինչպես նաև մանրամասներ աշ-
խատանքի և ունեցած եկամտի մասին:

Բացի այդ, «վերոհիշյալ գործի արդյունավետությունից ելնելով, յու-

րաքանչյուր լիբանանահայ որևէ հարցով առաջնորդարան դիմելիս,
ունեցած խնդրանքը ընթացքի մեջ էր գրփում այն ժամանակ, եթե նրա
մոտ բացակայում էր ազգային տուրքի վճարման պարտքը:

Անշուշտ, տնտեսական խորհրդի կողմից ձեռնարկված ամեն մի քայլ
արփում էր միմիայն ազգային իշխանությունների գործունեությունը
համայնքում աշխատացնելու նպատակով և բարձրացնելու համայնքի
ներսում ազգային տուրքի գաղափարի իմաստը: Այսինքն, ստեղծել այն
գաղափարը, որ տուրքերի գանձման չնորհիվ է Հնարավոր ապահովել
ազգային կրթական օջախների գոյատեսումը և բարելավել դրանց մա-
կարդակը:

Ինչպես արդեն նշել ենք վերևում, Լիբանանի ժողովուրդը բաղկա-
ցած է տարրեր կրոնական հարանվանություններից ու համայնքներից:
Երկրի անկախության նվաճումից ի վեր հասարակությունը ներկայաց-
նող համայնքները սկսեցին կարևոր դեր խաղալ ինչպես կրոնական,
այնպես էլ քաղաքական կյանքում:

Կոնֆեսիոնալ կարգավիճակի գոյությունը դարձավ Լիբանանի քա-
ղաքական կառուցվածքի հիմքը, որը հաստատվել է լիբանանյան սահ-
մանադրության կողմից:

Լիբանանում գոյություն ունեցող օրենսդրությունը և գործող օ-
րենքները հավասարապես տարածվում են բոլոր համայնքների վրա, և
համայնքների իրավունքները հարգվում են պետության կողմից այդ
օրենքների համաձայն:

Երկրում արդարադատության մեխանիզմը և հիմնական օրենքները
գործում են ընդհանուր ձևով: Սակայն, ամուսնության կամ ամուսնա-
լությության, մասանգական իրավունքի, ինչպես նաև կրոնական հար-
ցերի հետ կապված խորհրդներ քննվում են և հաստատվում համայնքա-
յին կրոնական դատարանների կողմից: Յուրաքանչյուր լիբանանցի,
պատկանելով այս կամ այն համայնքին, պարտավոր է ենթարկվել իր
համայնքում գործող օրենքներին: Ինչպես, օրինակ, Հայ համայնքի ազ-
գային, եկեղեցական, կրթական և վարչական բոլոր գործերը դեկավար-
վում են Ազգային սահմանդրության սկզբունքներով:

Լիբանանում կողքի կողքի ապրող Համայնքների հարաբերություն-
ները հիմնված են փոխադարձ հարգանքի ու հանդուրժողականության
վրա: Երկրի սահմանադրության 24-րդ Հոդվածի համաձայն, «Համայնք-
ները ներկայացվում են խորհրդարանում թվական ընդհանուր կազմին
համապատասխան» (11): Առողջարանը Համայնքային շահերի բախ-
ման հետևանքով առաջացող Հակասությունների գլխավոր հավասա-

րակշռող ուժն է Հանդիսանում: Այն կազմված է 99 անդամներից և գումարվում է շորս տարին մեկ անգամ: Խորհրդարանի անդամները ընտրվում են ոչ միայն Համայնքի, այլև իրենց ընտրաշրջանի ողջ բնակչության կողմից: Ընտրաշրջանները բաժանված են այնպես, որ «կարելի ըլլայ առավելագույն չափով հրմնվել բաղկացուցիչ բնակչության Համայնքային պատկանելության վրա» (12):

Տեղ-տեղ բնակչության բաշխումն այնպիսին է, որ տվյալ շրջանից ընտրվող մեկ կամ երկու և երեքն էլ ավելի պատգամավորներ պատկանում են նույն Համայնքին: Քվեարկողների Համար կարենոր նշանակություն ունի ոչ միայն պատգամավորների Համայնքային պատկանելությունը, այլև իրենց Համայնքում գոյություն ունեցող քաղաքական տրամադրություններն ու զանազան քաղաքական հոսանքներին Հարելու գործունը:

Խնչած Լիրանանի մյուս Համայնքները (13), լիրանանահայությունը ևս ունի պատգամավորական տեղերի բաշխման մշտական ձև: Այսպես, Հայ առաքելական եկեղեցուն հետևողները իրավունք ունեն խորհրդարանում ունենալու չորս պատգամավոր, իսկ կաթողիկե և ավետարանական Համայնքները՝ մեկական:

1972 թ. տեղի ունեցած պատգամավորական ընտրություններին Հայ Համայնքի չորս ներկայացուցիչները՝ մեթր Խ. Պապիկյանը, Ս. Խանամիրյանը, դոկտ. Ա. Մանուկյանը և դոկտ. Մ. Էպիփանյանը տեղ գրավեցին Լիրանանի խորհրդարանում:

Լինելով Հասարակական ու քաղաքական գործիչներ, Հայ Համայնքի պատգամավորները աշխույժ մասնակցություն են ունենում երկրի կառավարմանը և Հանդես են գալիս լիրանանահայության շահերի պաշտպանությամբ: Այդ պատգամավորներից ոմանք Լիրանանում վերջին տասնամյակներին զրադեցրել են նախարարական պաշտոններ:

1969 թ. կազմված Խեցիդի Քարամեի կառավարության մեջ պատգամավոր Խ. Պապիկյանը նշանակվել է առողջապահության նախարար, իսկ ավելի ուշ, 1973-1974 թթ. Ս. Խանամիրյանը զրադեցրել է զրոսաշրջության նախարարի պաշտոնը:

Խնչած մյուս Համայնքների, այնպես էլ Հայ Համայնքի կողմից ընտրված պատգամավորները աշքի են ընկել երկրի քաղաքական անցուղարձերին իրենց խաղացած դերով, Հատկապես քաղաքացիական պատերազմի տարիներին:

Քաղաքական կյանքին նրանց մասնակցության և ակտիվություն Հանդես բերելու գործում որպես գլխավոր միջոց նպաստել են Հայկական քաղաքական կուսակցությունները:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

1975 թ. քաղաքացիական պատերազմը Լիրանանում և հայ համայնքը

1970-ական թթ. կեսերից միջերկրածովյան խաղաղ Լիրանանը դարձավ արյունալի ու ողբերգական իրադարձությունների թատերաբն: Սկսված քաղաքացիական պատերազմը վերածվեց միջազգային հարցի, որին անդրադան աշխարհի զանգվածային լրատվության բոլոր միջոցները:

Շուրջ տասնհինգ տարի շարունակվող այդ կոնֆլիկտը խլեց տասնյակ Հազարավոր մարդկային կյանք, թողեց Հազարավոր վիրավորներ ու անօթևան քաղաքացիներ, ավերեց երկրի տնտեսությունն ու ահռելի նյութական վնասների պատճառ դարձավ: Եվ այդ ժանր տարիներին տառապանքների ու արհավիրքների ենթարկվեց նաև Լիրանանի Հայ Համայնքը:

Լիրանանի քաղաքացիական պատերազմի սկիզբը Համարում են 1975 թվականի ապրիլի 13-ը: Այդ օրը, Բեյրութի արևելյան Հատվածում, Այն էլ Ռումմանայում, որը ընակեցված է քրիստոնյաներով, տեղի էր ունենում նոր եկեղեցու բացման արարողություն: Հանդիսադրյան ժամանակ, որին ներկա էին Լիրանանի այդ ժամանակվա ամենաազեցիկ փաղանգներ (ալ Քաթարի) կուսակցության ղեկավարները, լսկեցին կրակոցներ, որոնց արդյունքում սպանվեցին կուսակցության առաջնորդ Պիեռ Ժմայելի թիկնապահները: Նույն օրը Բեյրութի արևմտյան Հատվածից մի խումբ պաղեստինցիներ ափորուսով վերադառնում էին մայրաքաղաքի արևելյան շրջանում գտնվող պաղեստինյան թել Զաաթար կոչվող իրենց ճամբարը: Անցնելով Այն էլ Ռումմանայի ճանապարհով, փաղանգավորների զինված ջոկատները գնդակոծում են պատորուար, որի հետևանքով զոհվում են տասնյոթ պաղեստինցի գաղթականներ:

Այս միջադեպը ահազանգ դարձավ քաղաքացիական պատերազմի սկսման Համար: Անմիջապես Բեյրութի արևելյան և արևմտյան Հատ-

վածներում, որոնցից յուրաքանչյուրը գտնվում էր կրոնական ու էթնիկական տարրեր համայնքների ու քաղաքական հոսանքների ազդեցության տակ, սկսվեցին արյունալի բախումներ, որոնք հետագայում տարածվեցին ամբողջ երկրով մեկ, անցնելով բազմաթիվ փուլերով ու շարունակելով մինչև 90-ականների սկզբը:

Սակայն, 1975 թ. Լիբանանում սկսված քաղաքացիական պատերազմը ուներ մի շարք պատճառներ: Կարենորագովոյն պատճառներից մեկը երկրում անկախության նվաճման ժամանակ (1943 թ. նոյեմբեր) հասարակության ընկերույթին-քաղաքական ու պետական կառուցվածքի հիմքում դրված կրոնա-համայնքային կամ, այսպես կոչված, կոնֆեսիոնալիզմի սկզբունքի ընդունումն է: Լիբանանի անկախությունը հռչակելու ժամանակ երկրի ամենասպազմագիր համայնքի՝ բրիստոնյա մարոնիների և մահմեդական սուննի համայնքի ներկայացուցիչների միջև կնքեց մի համաձայնագրի «Ալզային ուխտը» (1), ըստ որի որոշվում էր պետական իշխանության կարգը կրոնական տարրեր համայնքների միջև: Կրոնա-համայնքային սկզբունքի համաձայն, երկրի կառավարման ու պետական բարձր մարմիններում քրիստոնյա մարոնի համայնքի ներկայացուցիչները տիրապետող դիրքեր էին գրավում: Փաստորեն, կոնֆեսիոնալիզմը իր արտահայտությունը գտավ ոչ միայն Լիբանասի պետական ու քաղաքական համակարգում, այլև «ամենօրյա կյանքում» առևտորի ու աշխատանքի թուլլության, մաքսային, գործարքների արտոնության և այլ «արցերում» (2): «Ալզային ուխտը» քրիստոնյա մարոնիներին հնարավորություն ընձեռեց դեկավար դեր խաղալու երկրի կառավարման ամբողջ համակարգում և, ամեն ջանք ու միջոց օգտագործելով, նրանք ձգտում էին պահպանել կոնֆեսիոնալիզմի սկզբունքը:

Անդրադառնալով կրոնա-համայնքային սկզբունքին, արևելագետ Նիկոլայ Հովհաննիսյանն իր «Ալիբանանյան ճնշամակը և Լիբանանի հայ համայնքի դիրքորոշումը» գրքումկի մեջ իրավացիորեն նշում է, որ «Ալիբանանում անկախության նվաճումից հետո հաստատվեց քրիստոնյա-մարոնի համայնքի վերնախավի յուրատեսակ դիկտատորա: Դրա հետևանքով, փաստորեն, երկրի կառավարման ընագավառում և հասարակական-քաղաքական հարաբերությունների ոլորտում ստորադաս վիճակում են գտնվում ոչ միայն մուսուլմանական համայնքները, այլև մյուս քրիստոնյա համայնքները, ինչպես ուղղափառ, կաթոլիկ, բողոքական և Հայք» (3):

Կրոնա-համայնքային սկզբունքը ավելի քան երեսուն տարի շարու-

նակ ծառայում էր միմիայն մարոնի համայնքին, պաշտպանում նրա մենատիրական իրավունքները և շահերը երկրում: Եվ պատահական չէ, որ այն այլևս չէր կարող համապատասխանել լիրանանյան իրականությանը և տարեցտարի նորանոր դժվարություններ էր ծնում միջնամայնքային հարաբերությունների մեջ, որը, ինչպես հայտնի է, հետագայում ճնշամայնքային իրավիճակի ստեղծման պատճառ հանդիսացավ: Արդեն 1970-ական թթ. սկզբներին, ինչպես մանրամասնորեն հիշատակված է առաջին գլխում, Լիբանանի ժողովրդավարական և ազգային հայրենասիրական ուժերը, որոնց դիրքերը գգալիորեն ամրապնդվել էին երկրում, սկսեցին հանդես գալ երկրում հասարակական-քաղաքական արմատական վերափոխումների պահանջով և պայքար սկսեցին քրիստոնյա-մարոնի վերնախավի մենատիրական իշխանության դեմ: Նրանց հիմնական խնդիրը երկրում կրոնա-համայնքային իր դարն ապրած համակարգի վերացումն էր և պետական կառուցվածքի մեջ անհրաժշտ փոփոխություններ մտցնելը:

Քաղաքացիական պատերազմի նախօրյակին սրվեցին ընկերային կոնֆլիկտները երկրում: Լիբանանի աշխատավորական կազմակերպությունները հանդես էին գալիս իրենց հիմնական իրավունքների պաշտպանությամբ, ինչպես նաև ընկերային անարդարության և կրոնական խորականության դեմ: Ժողովրդական զանգվածները կառավարությունից պահանջում էին բարեկավել իրենց տնտեսական վիճակը, աշխատանքի պայմանները և բարձրացնել աշխատավարձերը:

Այս շրջանում աշխատանում էին բանվորական կազմակերպությունների շարժումները: Ինչպես անդրադարձել ենք առաջին գլխում, աշխատավորական կազմակերպությունները անցկացնում էին գործադուլու, խաղաղ ցույցեր և հանրահավաքներ երկրի մի շարք քաղաքներում: Ի դեպ, լիբանանյան իշխանությունները մտադրություն չունեին երկրում անցկացնել արմատական վերափոխումներ և բավարարել աշխատավորության արդար պահանջները: Իրենց տրամադրության տակ պահելով պետական իշխանության բոլոր մարմինները, նրանք սկսեցին ուժի և բռնության դիմել՝ կանխելու նպատակով ընկերային բարեփոխումների համար պայքարող աշխատավորության ակտիվությունը և հարգած հասցնելու վերջինիս շահերը պաշտպանող հայրենասիրական ու առաջադիմական ուժերին:

Լիբանանի կոմկուսի հայտնի գործիչ Հ. Մադեյանը, անդրադառնալով երկրի տագնապայի վիճակի ստեղծման պատճառներին, գրում է: «Իրականությունը այն է, որ Լիբանանին ներս հասունացած և անհե-

տաձգելի դաձած է անհրաժեշտությունը քաղաքական, տնտեսական, ընկերային և վարչական դեմոկրատական բարենորոգումների իրագործման, ինչպես նաև Համայնքային իրական Հավասարության հաստատման պետության բոլոր աստիճանի մարմիններէն և Հաստատություններէն ներս, վերացումը քաղաքական Հարանվանության և ավատապետության, պահպանումն ու ընդլայնումը դեմոկրատական ազատությանց, բարեփոխությունը ընտրական օրենքներու՝ Համեմատականի հիման վրա, բարեկավումը բանվորներու և բոլոր ժողովրդական խավերու կյանքի պայմաններուն և Հարգումը պաղեստիյան ազատական շարժման հետ օրինավորապես գոյացած բոլոր Համաձայնություններուն» (4):

Լիրանանում քաղաքական իրադրության բարդացման կարևոր պայմաններից մեկն էլ կապված էր երկրում պաղեստինցի գաղթականության ներկայության և նրա մարտական ջոկատների գործողությունների նկատմամբ քրիստոնյա մարոնի վերնախավի թշնամական վերաբերունքի հետ: Հայտնի է, որ 1967 թ. արարա-իսրայելական պատերազմից հետո, Հարյուր Հազարավոր պաղեստինցի գաղթականներ Հարկադրված մուտք գործեցին Լիրանան: 1969 թ. Կահիրեի Հայտնի Համաձայնագրով պաղեստինցիներին թույլատրվեց բնակություն Հաստատել և աշխատել Լիրանանում և երկրի Հարավային շրջաններում կենտրոնացնել իրենց հիմնական ուժերը՝ մարտական ջոկատները իսրայելի դեմ ռազմական գործողություններ ծավալելու Համար:

1970-ական թթ. սկզբներին Լիրանանի ազգային Հայրենասիրական ուժերի և պաղեստինյան մարտական ջոկատների միջև Հաստատվեցին սերտ Հարաբերություններ, Հիմք Հանդիսանալով Համատեղ գործողությունների մշակման Համար: Այս շրջանում աստիճանաբար ամրապնդվում էին պաղեստինցիների դիրքերը միջադրային ասպարեզում: Հատկապես այն բանից հետո, երբ 1974 թ. ՄԱԿ-ը ճանաչեց Պաղեստինի ազատազրական կազմակերպությունը (ՊԱԿ) որպես պաղեստինցի ժողովրդի օրինական ներկայացուցիչ՝ նրանց հեղինակությունը նկատվելիրեն մեծացավ:

Այս ամենը դուր չէր գալիս Լիրանանի քրիստոնյա մարոնի դեկավարությանը: Նրա թշնամական վերաբերմունքը պաղեստինցիների ազատ գործողությունների նկատմամբ օրեցօր սուր բնույթ էր կրում: Մարոնիները, պաղեստինցի մաշնեղականների ներկայությունը Համարելով սպառնալիք Լիրանանի կրոնա-Համայնքային Համակարգի գոյությանը, սկսեցին գործի լծվել, Հաշվեարդար տեսնելու երկրի աղգային Հայրե-

նասիրական ուժերի և մահմեղական բնակչության աջակցությունը վայելող պաղեստինցիների հետ և նրանց երկրից վտարելու համար:

Պաղեստինյան դեկավարությունն իր հերթին քննադատության էր ենթարկում Լիրանանի մարոնի դեկավարությանը և Հետադիմական ուժերին այն բանի Համար, որ նրանք երկրի քաղաքական լարվածության խկական պատճառը փորձում էն տեսնել ոչ թե ընկերային-տնտեսական ու քաղաքական գործոնների մեջ, այլ ձգտում էին այն ներկայացնել որպես լիրանանա-պաղեստինյան Հակամարտություն:

Պաղեստինյան դեկավարությունը, նկատի ունենալով երկրում ստեղծված վտանգավոր իրավիճակը, Հանդես էր գալիս մի շարք Հայտարարություններով, ուր շետքում էր, որ «Լիրանանում պաղեստինցիների մուտքը կրում է ժամանակավոր բնույթ, որ պաղեստինյան դեկավարությունը լիովին Հարգում է Լիրանանի ինքնուրույնությունն ու ամբողջականությունը և շի պատրաստվում ոչ մի կերպ միջամտել նրա ներքին գործերին» (5):

Լիրանանյան Հակամարտության սկզբնական շրջանը և Հետագա տարիներին իրար Հաջորդած բուռն իրադարձությունները ցույց տվեցին, որ առաջացած բարդ ու լարված կացությունը ոչ միայն ներքին Հակասությունների արդյունք էր, այլ, որ այդ իրադարձությունների ետևում կանգնած են եղել նաև արևմտյան ուժերը և ՆԱՏՕ-ի անդամ երկրները, որոնք օգտվելով երկրի լարված իրավիճակից, աշխատում էին պաղեստինցիների և աշակողմյան ուժերի միջև բախումներ ստեղծելու: Գործակցելով Լիրանանի ներքին Հետադիմության հետ, արևմտյան երկրների, Հատկապես իսրայելի հիմնական խնդիրն էր շեղել արարների ուղարկությունը արաբական բռնագրավված տարածքների ազատագրման Համար մղվող պայքարից և ջախջախնել Լիրանանի աղգային Հայրենասիրական ուժերը և Պաղեստինի դիմադրության շարժումը, որոնք Հանդես են գալիս իսրայելյան շարունակվող նախաՀարձակման դեմ:

Ահա ներքին ու արտաքին այն հիմնական գործոնները, որոնք պատճառ դարձան Լիրանանում քաղաքացիական պատերազմի սկսմանը:

Ներքաղաքական լարված իրադրության ժամանակ Լիրանանում ստեղծվեցին երկու Հակադիմի ճակատներ: Առաջինը աղգային առաջադիմական ճակատն էր, որը միավորում էր երկրի բոլոր Հայրենասիրական ուժերին և կուսակցություններին, իսկ երկրորդը՝ «Աղգային ճակատը», որը Համախմբել էր աջ ուժերին:

Աղգային առաջադիմական ճակատն ուներ աղգային Հայրենասիրա-

կան ուժերի կենտրոնական խորհուրդ, որը որոշում էր առաջադիմական ուժերի ընդհանուր դիրքորոշումը երկրի ներքաղաքական կյանքի տարբեր հարցերում: Այդ ճակատի մեջ մտնում էին հետևյալ ուժերը. Առաջադիմական սոցիալիստական կուսակցությունը, որը հիմնադրվել է 1949 թ. Լիբանանի քաղաքական ու հասարակական հայտնի գործիչ Քամալ Ջունըրատի կողմից: Քաղաքացիական պատերազմի թիվ շրջանում, նրա սպանությունից հետո, կուսակցությունը սկսեց զլիափորել նրա որդին՝ Ռաւիդ Ջունըրատը: Այս կուսակցության անդամները հիմնականում դրույներ են: Ճակատի մեջ մտնում էին նաև Լիբանանի կոմունիստական կուսակցությունը և նրան հարող կոմունիստական գործողության կազմակեպությունը: Այս ուժերի մեջ մտնող անդամների երկու երրորդը մահմեդականներ էին, իսկ մեկ երրորդը՝ քրիստոնյաներ: Առաջադիմական ճակատի մեջ միավորված էին Արարական սոցիալիստական վերածության կուսակցության (ԲԱԱՍ)-ի լիբանանյան մասնաճյուղը, որի մեջ ընդգրկված էին թե՛ մահմեդականները, թե՛ քրիստոնյանները, ինչպես նաև սիրիական Ազգային-սոցիալիստական կուսակցությունը՝ զլիափորապես կազմված քրիստոնյաններից: Այս բոլոր կազմակերպությունների մեջ Հանդես էին գալիս ինչպես մահմեդականները, այնպես էլ քրիստոնյանները, որոնք միավորվելով մեկ բրոկի մեջ, խնդիր էին դնում պայքարել Լիբանանի պառակտման փորձների դեմ, պահպանել նրա միասնականությունը և պահանջվող ժամանակին համապատասխան իրականացնել անհրաժեշտ ժողովրդավարական վերափոխումներ: Ազգային առաջադիմական ճակատի մեջ մտնող կուսակցությունները և կազմակերպությունները միավորված չէին մահմեդական կամ քրիստոնյա սկզբունքի հիման վրա, ինչպես փորձում էին լիբանանցի և արևմտյան որոշ տեսաբաններ հակամարտության պատճառները ներկայացնել որպես կրոնա-համայնքային թշնամության դրսուրում: Այսպիսի մոտեցումը չէր կարող համապատասխանել իրականությանը, քանզի ուժերի միավորումը փաստորեն խարսխված էր ինչպես գաղափարական, այնպես էլ քաղաքական ու դասակարգային սկզբունքների վրա:

Գալով լիբանանյան աջերին, ապա նրանք համախմբվեցին այսպես կոչված «Լիբանանյան ճակատի» մեջ: Նրանում ընդգրկված էին մի շարք կուսակցություններ, սակայն ամենազդեցիկը՝ փաղանդներ (Քաթոլիկ) կուսակցությունն էր՝ հիմնված 1936 թ. Պիեռ Ժմայելի կողմից: Լինելով մանրուրժուական կուսակցություն, այն Հանդես էր գալիս որպես քրիստոնեական քաղաքական կուսակցություն: Նրանում ընդգրկ-

ված էին հիմնականում Լիբանանի քրիստոնյա մարոնի աղքայնամոլները և ուրիշ այլ քրիստոնյաներ: Կուսակցությունն ուներ արևմտամեծ զիրքորոշում և ֆինանսավորվում էր ինչպես նրա քաղմահազար անդամների կողմից, այնպես էլ արարական հետադիմության ու արևմտությի հատկացրած միջոցներով: Այս ուներ լավ կազմակերպված զինվորական միավորումներ և ուազմական հատուկ ճամբարներ: Կուսակցության ղեկավարությունը բազմից Հանդես է եկել «Լիբանանը լիբանանցիներին պատկանելու» կարգախոսով և պահանջել է անհապաղ վտարել պաղեսատինցիներին լիբանանից: Ներկայացնելով իրենց որպես Լիբանանի գոյության պաշտպաններ, փաղանդավոր կուսակցության ղեկավարները նշել են, որ «Լիբանանը ի վիճակի չէ լուծելու պաղեսատինցիների խնդիրը: Արարական աշխարհը, որը զգալի աջակցություն է ցույց տալիս պաղեսատինցիների հարցին, պետք է տեղ գտնի պաղեսատինցիների համար լիբանանից դուրս» (6):

Մարոնի քրիստոնեական երկրորդ կուսակցությունը, որն ընդգրկված էր «Ալիբանանյան ճակատի» մեջ, «Ազգային լիբերալ» կուսակցությունն է՝ Քամիլ Շամունի ղլիսավորությամբ: Ի տարրերություն փաղանգներ կուսակցության, լիբերալներն իրենց շարքերում միավորում էին խոշոր և միջին բուրժուազիան, ինչպես նաև ավատատիրական արիստոկրատիան: Փաղանգներ կուսակցության նման այն ուներ մարտական իր ջոկատները, որոնց շատ հաճախ կոչում էին Քամիլ Շամունի «Ավագըրեր»:

Մինչև 1970-ական թթ. կեսերը «Ալզգային լիբերալ» և փաղանգներ կուսակցությունները հանդես էին գալիս միասնաբար և համակարգում էին իրենց աշխատանքները որպես «Ալիբանանյան ճակատի» ղաշնակիցներ: Սակայն քաղաքացիական պատերազմի թիվ շրջանում նրանց միջև առաջացած բավականին լուրջ տարածայնություններ և պայքար սկսվեց «Ճակատը» ղեկավարելու համար: Փաղանգներ կուսակցությունը, լինելով ավելի կազմակերպված և ուժեղ, համեմատած «Ազգային լիբերալ» կուսակցության, կարողացավ պարտության մատնել շամունականներին և «Ճակատի» ղեկն իր ձեռքը վերցնել:

Հարկ է նշել, որ «Ալիբանանյան ճակատում», բացի վերոհիշյալ երկու ազգեցիկ կուսակցություններից, ընդգրկված էին նաև ուրիշ քրիստոնեական կազմակերպություններ, ինչպես օրինակ, «Հարես էլ Ըրդ» (մայրի պաշտպանության) կազմակերպությունը, որի ընկերային կազմը, ինչպես և փաղանգներինը, հիմնականում քաղաքացած էր մանրուրժուական տարրերից: Լինելով ծայրահեղական կազմակերպություն, նրա

ՆՈՒԲԱՐ ԶԱԼՀՄՅԱՆ

60

կողմնակիցները նույնպես հանդես էին գալիս Լիրանանում պաղեստինյան ներկայության և Պաղեստինի դիմադրական շարժման գործողությունների դեմ:

1975 թ. ապրիլ ամսին տեղի ունեցած հայտնի միջադեպից հետո փաղանգների կողմից սկսվեցին հարձակումները ազգային առաջադիմական ուժերի և պաղեստինցիների դեմ: Ռազմական գործողությունների թատերաբեմ դարձավ մայրաքաղաք Բեյրութը, ինչպես նաև նրա մերձակա արվարձանները: Աջակողմյան ուժերի հարձակումները ուղղվեցին հատկապես մայրաքաղաքի մահմետարներ շրջանների վրա, որոնց ընակիչները համարանք ունեին պաղեստինցիների հանդեպ և պաշտպանում էին նրանց շարժումը: Արյունալի բախումների յուրաքանչյուր օր նոր ողբերգություններ էր բերում Լիրանանի բազմահամայնք ժողովրդին: Ռմբակոծությունների հետևանքով զոհվում էին բազմաթիվ անմեր քաղաքացիներ, իսկ մայրաքաղաքի առանձին թաղամասերում փլատակների էին վերածվում ընակելի շենքեր, առևտրական հաստատություններ և խանություններ:

Աջակողմյան ուժերի կողմից սանձազերծված պատերազմը վտանգի ենթարկեց Լիրանանի ժողովրդի կյանքը և դժվարին կացություն ստեղծեց բոլոր համայնքների՝ այդ թվում նաև հայկական համայնքի խաղաղ կյանքի և նրա գոյության համար:

Քաղաքացիական պատերազմի սկսման շրջանից լիրանանահայությունն իր բոլոր քաղաքական հոսանքներով ու կազմակերպություններով ուղիղուղով հետևում էր երկրում ստեղծված բարդ ու լարված իրադրությանը: Նրան մտահոգություն էր պատճառում հայ համայնքի անվտանգությունն ապահովելու խնդիրը, որի իրականացման համար հայերը չպետք է մասնակցեին կործանարար պատերազմին և չպետք է ընկնեին հակամարտությանը մասնակից քաղաքական ուժերի ազդեցության տակ:

Նկատի ունենալով այս հանգամանքը և խուսափելով 1958 թ. Լիրանանի քաղաքացիական պատերազմի ժամանակ թույլ տված սխալների կրկնությունից, լիրանանահայության քաղաքական չորս հոսանքները՝ հայ հեղափոխական դաշնակցությունը, Սոցիալ-դեմոկրատական հայակյան, Ռամկավար ազատական կուսակցությունները և Լիրանանի կոմկուսի հայկական մասնայուղի կազմակերպությունը, ստեղծված քաղաքական բարդ իրադրության պայմաններում ընդունեցին միակ ու ճիշտ պաշտոնական դիրքորոշումը՝ դրական չեղոքության քաղաքականությունը:

Լիրանանի Հայությանը առաջարկու երկրությունը և բարեկանացնելու այսական վարչության առաջարկությանը կողմէ կարելի ուղին» Հոդվածում իրավացիորեն նշում է. «Լիրանանէն ներս այս զարհուրանքի ողբերգական շրջանին, լիրանանահայության որդեգրած ներկա միասնական ու ողջամիտ ընթացքը ամենանշյալ ազգասիրական ուղին էր՝ ճշմարտապես և լավագույն ծառայելու համար հայության ազգային հիմնական շահերուն ու ապահովության, և նաև այդ ընթացքը, նույնպես լավագույն և ճշմարիտ հայրենասիրական ուղին էր ծառայելու համար լիրանանյան հայրենիքին և բարձր պահելու հայության անունը ամբողջ արարական աշխարհի առջև» (7):

Լիրանանում ծագած եղայրասպան պատերազմի նկատմամբ հայ համայնքի ընդունած դրական չեղոքության քաղաքականությունը համապատասխանում էր լիրանանահայության շահերին: Այն նաև կանխում էր հայության պառակտումը և քաղաքական իրադրության բարդացման հնարավորությունները, ինչպես նաև իրական պայմաններ էր ստեղծում հայության համերաշխությունն ամրապնդելու և միասնական գործողություններ մշակելու համար: Բացի այդ, ինչպես նշում է իր աշխատության մեջ ն. Հովհաննիսյանը, «Հայ համայնքի կողմից ընդունած դրական չեղոքության քաղաքականությունն օրիեկտիվորեն նպաստում էր զինված առնակատման շառավղի կրծատմանը և լիրանանյան կոնֆլիկտի շրջանակների որոշակի սահմանափակմանը: Մյուս կողմից այն հնարավորություն էր տալիս հայ համայնքին՝ ծավալելու ակտիվ գործունեություն կոնֆլիկտի կարգավորման համար, հաշվի առնելով կոնֆլիկտին մասնակից բոլոր կողմերի օրինական շահերը, ելակետ և հիմք ունենալով լիրանանի անկախության, սուվերենության և տերիտորիալ ամբողջականության պահպանումը» (8):

Լիրանանի քաղաքական իրադրությունների մասնակից ուժերը տարրեր վերաբերմունք ունեցան երկրի ընդհանուր շահերի և համայնքի ապահովությունը պաշտպանելու նպատակով հայկական քաղաքական հոսանքների ընդունած դրական չեղոքության նկատմամբ:

Երկրի առաջադիմական կուսակցությունները և Պաղեստինի դիմադրական շարժումը անմիջապես ողջունեցին հայերի դրական չեղոքությունը: Լիրանանի Առաջադիմական սոցիալիստական կուսակցության առաջնորդ Քամալ Ջունրաւը բարձր գնահատեց հայության խոհեմ դիրքորոշումը, այն համարելով «ընդհանուր իրավիճակին նպաս-

տող և միջամայնքային հակամարտություններից նրանց (Հայերին - Ն. Ջ.) հեռու տանող որոշում» (9):

Անդրադառնալով Լիրանանի աշակողման ուժերին, ապա նրանք անթաքույց դժգություն արտահայտեցին Հայերի որդեգրած դրական չեղորության նկատմամբ, քանի որ նրանց նպատակը Հայերին ներգրավելն էր հակամարտության մեջ և միավորելը «Լիրանանյան ճակատին»: Փաղանգավորները Հայ Համայնքի դիրքորոշումը բնութագրեցին որպես «բացահայտ դավաճանություն տասնամյակների ընթացքում ունեցած վստահության հանդեպ և սկսեցին անընդհատ ճնշում գործադրել Հայերի վրա, որպեսզի նրանք իրենց բախտը կապեն քրիստոնյաների հետ» (10):

«Լիրանանյան ճակատին» պատկանող թերթերում ու ամսագրերում առաջին անգամ սկսեցին Հայտնիքի ոչ Հայանպատ որոշ հոդվածներ՝ «Հայերի ներկայությունը որպես խնդիր», «Չեղորությունը արդյո՞ք օգնում է Լիրանանի ճակատագրին» և այլ փերնագրերով, ուր կասկածի տակ էր առնվում Հայության քաղաքացիական արժանապատվությունը և Հայերն անհիմ մեղադրություն էին «անկայունության, վախիկության և դավաճանության մեջ, քանի որ նրանք հարժարկում են կուել լիրանանյան ուժերի կողքին» (11): Նմանօրինակ Հայտարարությունները, ինչպես մենք ցույց կտանք հետագայում, ավելի Հաճախակի և առավել վտանգավոր բնույթ կրեցին Հատկապես 1978 թ. և 1979 թ. ցավալի դեպքերի նախօրյակին, երբ թեյրութիւն Հայկական թաղամասերի շենքերի պատերին սկսեցին երևալ սպառնալից Հայտարարությունները «Հայ քաղաքացիները լիրանանից հեռանալու և Հայատան վերադառնալու» (12) բովանդակությամբ:

Սակայն, Հաշվի չառնելով աջ ուժերի անհիմ ամրաստանություններն ու սպառնալիքները, լիրանանահայությունը պատերազմի բռնկման հենց սկզբից կտրականապես հրաժարվեց հետևել ու նեթարկվել նրանց քաղաքականությանը: Հարկ է նշել, որ որպես պաշտոնական դիրքորոշում, դրական չեղորությունը ընդունելուց հետո, Հայ Համայնքը կանգնեց որոշակի դժվարությունների առջև, սակայն կարողացավ մնալ իր դիրքերի վրա ու պահպանել դրանք:

1975 թ. կեսերին ամբողջ Լիրանանում կատաղի մարտեր էին մղվում մի կողմից՝ փաղանգավորների, իսկ մյուս կողմից՝ ազգային-Հայրենասիրական ուժերի և Պահեստինի դիմադրական շարժման միջն: Մաստիկ կոփմեր էին գնում մայրաքաղաք Թեյրութիւն կենտրոնում, ինչպես նաև Շիահի և Թել Զաաթարի շրջաններում:

Թեյրութիւնի արևմտյան հատվածը, որտեղ բացարձակ մեծամասնություն են կազմում մաշմեղականները, դարձավ փաղանգավորների կատաղի հարձակումների թիրախ: Այստեղ մաշմեղականների հետ տարիներ շարունակ հաշտ ու խաղաղ ապրող Հայերը, որոնց մեծ մասը կենտրոնացած է էյն Մրեյսեյի, Քանթարիի, Զոկակ էլ Բլաթի և Զարիֆի շրջաններում, անակնկալի եկավ աշակողման ուժերի Հարձակումներից: Էյն Մրեյսեյի և Քանթարիի Հայ ընտանիքները ամենաածանը ձևով ենթարկվեցին փաղանգավորների ու մարոնի ծայրահեղականների ոտնագություններին: Շատերը, երկյուղի մեջ գտնվելով, անմիջապես թողնում էին իրենց ընակավայրերը և խուճապահար դիմում փախուտի: Զոկակ էլ Բլաթի և Զարիֆի հայությունը, գտնվելով ավելի խիտ մաշմեղական մեծամասնություն ունեցող շրջանում, դեպքերի ամենաածանը օրերին Համեմատարար ավելի ապահով վիճակում էր:

Աջ ուժերի Հարձակումների հետևանքով վերոհիշյալ շրջանների Հայությունը նյութական մեծ վնասներ կրեց: Կիսաբանդ ու ավերված ընակարաններում սկսվեց սանձարձակ կողոպուտ ու թալան: Միջին ու բարեկեցիկ կյանք ունեցող Հայ ընտանիքներից շատերը, զգալով շրջանի անապահով վիճակը, Հարկադրված էին թողնել և հեռանալ այլ շրջաններ կամ քաղաքներ, իսկ որոշ ընտանիքներ էլ վերջնականապես մեկնեցին արտասահման:

1976 թ. սկզբին փաղանգավորների ու ազգային լիրերալների զինված ուժերը Հարձակումներ ձեռնարկեցին այս անգամ ազգային Հայրենասիրական ուժերի հսկողության տակ գտնվող Մասլախ և Քարանթինա շրջանների վրա: Հարկ է նշել, որ խիտ ընակներում ունեցող այս շրջանում ապրում են հիմնականում արար աշխատավորական զանգվածներ, որոնք պատերազմի ամենաթեժ դեպքերի ժամանակ անցել էին առաջադիմական ուժերի և պաղեստինյան դիմադրական շարժման կողմը:

Նույն թվականի հունվարի կեսերին, կատաղի մարտերից հետո, աջերին Հաջողվեց զրավել այդ շրջանները: Նրանք սկսեցին աննկարագրելի ոճիրներ կատարել և դաման Հաշվեհարդար տեսնել խաղաղ ընակներության նկատմամբ: Զոհվեցին Հարյուրավոր մարդիկ, այդ թվում՝ կանայք ու երեխաններ: Զոհվածների և վիրավորների մեջ կային նաև Հայեր: «Լիրանանյան ճակատի» դրամիավորումներին Հրահանգված էր վայրագ գործողությունների դիմել՝ տրակտորներով քարուքանդ անել Քարանթինայի և Մասլախի բնակելի տները, դրանք Հավասարեցնելով գետնին: Շրջանում կողոպտվեց աշխատավորության արյունով և

քրտինքով ձեռք բերված ունեցվածքը այն «մեղքի» համար, որ նրանք «Համակրում էին ազգային Հայրենասիրական ուժերին, իրենց կարիքավոր եղբայրակիցներին՝ պաղեստինցիներին» (13): Շուրջ տասը Հազար քնակիչներ տեղահանվեցին Մասլախի և Քարանթինայի շրջաններից աջակողման ուժերի կողմից օգտագործված ամենարիտ միջոցներով:

Քարանթինայի և Մասլախի սահմանակից Հայաշատ թաղամասերի Հայ բնակչությունն անմիջապես օգնության ձեռք մեկնեց Հարձակումներից մաղապուրծ ազատվածներին և վիրավորներին:

Բոլոր Հոսանքների ղեկավարների որոշմամբ փրկված երեխաններին, կանանց ու ծերերին սկսեցին տեղափորել տեղի Հայկական դպրոցներում, ակումբներում և այլ ապահով շրջաններում: Հայկական թաղամասերում գործող դարմանատները գիշեր-ցերեկ ընդունում էին տասնյակ վիրավորների: Մեծ էր Հայ բժիշկների ցուցաբերած առաջին անհրաժեշտ օգնությունը վիրավորներին: Նրանք զգալի՝ աշխատանք կատարեցին նաև ծանր հիվանդներին մոտակա հիվանդանոցները տեղափոխելու գործում:

Հայ Համայնքի այս մարդասիրական վերաբերմունքը Քարանթինայի և Մասլախի արար բնակչության նկատմամբ բարձր գնահատականի արժանացագ տեղական մամուլում և առաջադիմական ուժերի կողմից: Լիրանանի Հանրապետության մուֆթի շեխն Հասան Խալեղը, չնորհակալության խոսք Հղելով լիրանանահայությանը, նշում է, որ «Հայերը ոչ մեկ ճիգ խնայեցին օգնություն փութալու Համար Մասլախի և Քարանթինայի աղետյալներուն» (14):

Հարձակումների ննթարկված շրջաններում աստիճանաբար ամրապնդեցին Հայերի ու առաջադիմական, ձախ Հայրենասիրական ուժերի միջն Հարաբերությունները: Հանդես գալով այդ ուժերի կողքին և պաշտպանելով Պաղեստինի դիմադրական շարժման իրավունքները, լիրանանահայությունը վճռականորեն Հավատարիմ մնաց դրական չեղոքության քաղաքականությանը: Այս Հանգամանքը Հակահայկական տրամադրություններ ստեղծեց փաղանգավորների մոտ և Հայկական թաղամասերի վրա նրանց կողմից զինված Հարձակումների սկսման պատճառ դարձավ:

Նույն թվականի փետրվար-մարտ ամիսներին լիրանանյան աջերի Հակահայկական արշավի կենտրոնները դարձան մայրաքաղաքի առևելյան շրջանի, Բուրջ Համուղի, Մին Էլ Ֆիլի և Նապայի թաղամասերը: Այդ շրջանների վրա արձակվեցին բազմաթիվ հրթիռներ և պայթեցվեցին ոռումքեր, որոնք մարդկային մեծ դուերի պատճառ դարձան: Հայ

Լրացնամարդ Հայ Համայնքը երկրու սութիւն-
ստեսացածն և բաղարական կյարության

երիտասարդները Հայկական թաղամասերում անմիջապես սկսեցին կաղմակերպել զինված խմբեր՝ ինքնապաշտպանության նպատակով: Հայկական քաղաքական չորսները ներկայացնող կուսակցությունները ակտիվ աշխատանքի անցան շրջանի Հայ աղքարնակզությանն անհրաժեշտ օգնություն ցույց տալու և նրա անվտանգությունը ապահովելու ուղղությամբ: Նկատի ունենալով քաղաքական կացության օրբտորե վատթարացումը և ելնելով Հայկական շրջանների ապահովությունը, մարտի 17-ին Հայկական կուսակցությունները Համատեղ նիստ գումարեցին Բուրջ Համուղում գտնվող դաշնակցություն կուսակցության կենտրոնատեղում և որոշեցին բանակցությունների մեջ մտնել Հակամարտ կողմերի, մի կողմից՝ առաջադիմական կուսակցությունների և պաղեստինյան դիմադրական շարժման, իսկ մյուս կողմից՝ փաղանգավորների ու Ազատական կուսակցության ղեկավարների հետ զինադադար կայացնելու մասին:

Նույն օրը, այդ ուժերի հետ մի շարք Հանդիպումներ ունենալուց հետո, Հակամարտ կողմերը Համաձայնության եկան Հայկական կուսակցությունների առաջարկի շուրջ: Այդ Համաձայնությամբ կովող կողմերը «Հայկական թաղերուն մեջ և անոնց շուրջը պիտի շկատարեն բացահայտ կամ զաղտնի զինվորական գործողությունները, վերջ պիտի տրվին առևանգումներու և Հակամառեանգումներու, շրջանի մեջ նախապես առեանգումները պիտի փոխանակվին Հայ կուսակցություններու միջոցով» (15):

Հայկական կուսակցությունների Համատեղ ջանքերի շնորհիվ ձեռք բերված Համաձայնությունը Հարաբերեց գոնե ինչ-որ շափով ապահովելով լիրանանահայության անվտանգությունը: Հատկանշականն այն է, որ չորս Հոսանքների միջն ստեղծված Համագործակցության ընթացքում յուրաքանչյուր կուսակցություն կարողացավ ներածին շափութակործել իր կապերը Հայության Փիղիկական ապահովություննը և ժողովրդի ունեցվածքը Հնարավոր կողոպուտից փրկելու Համար:

Այդ մժնակ շրջանում Հայկական կազմակերպությունները արեցին ամեն Հնարավոր՝ լավագույն կազմակերպելու Հայկական թաղերի պաշտպանության գործը: Կազմակերպվում էին Հավաքույթներ ու Հանդիպումներ Հայ երիտասարդների հետ, Հրապարակում Հայտարարություններ: Բացատրական աշխատանքներ էին տարվում շրջանի Հայ աղքարնակզության մեջ, լուսարանվում լիրանանյան Հակամարտության պատճառները, նրանց իրազեկ պահում ներքաղաքական ընդհանուր վիճակին, «գիտակցելով, որ քաղաքական աշխատանքը պատճառ դարձան:

կան նման պարագաներուն մեջ պիտի ունենար իր դրական և առաջնորդող դերը» (16):

Կոփիվների ամբողջ ընթացքում զգալի վնասներ կրեց լիբանանահայությունը: Միայն պատերազմի առաջին տարում՝ 1975-1976 թթ. «Լիբանանում 20.000 զոհվածներից մոտ 500-ը հայեր էին» (17), իսկ 45.000 վիրավորներից 2000-ը՝ Հայազգիներ, որոնք ոմբակոծությունների ժամանակ ստացել էին մարմնական ծանր վնասվածքներ: Նրանցից շատերը վիրաբուժական վիրահատությունների ենթարկվելուց հետո կարիք ունեին մեկնելու արտասահման՝ անհրաժեշտ բուժում և խնամք ստանալու համար: Բուրջ 30-35 հայ երիտասարդներ ամբողջովին դարձել էին Հաշմանդամներ: Հայարնակ շրջաններից ամենալատ վնասներ կրեցին Հատկապես Բուրջ Համուղի Հայկական թաղամասերը: Տեղատարափ ուղարկերի պայմանը, արձակված հրթիռները և գնդացիրների կույր կրակոցները աշ ու սարսափ էին առաջացրել տեղի Հայ ազգաբնակչության մոտ: Զեար Բուրջ Համուղի նախկին աշխույժ մթնոլորտը և եռուգեղոր: Նրա առևտրական կենտրոնները կորցրել էին իրենց նախկին հմայքը և դարձել էին Համարյա ամայի: Իսկ շրջանի թաղամասերում տիրում էր անբնական վիճակ:

Աչուի շափերի էին Հասնում նաև Հայության կրած նյութական վնասները: Համաձայն 1976 թ. Հոկտեմբերին ԱՄՆ-ի Հայ առարելական եկեղեցու ներկայացուցիչ արքեպիսկոպոս Գարեգին Սարգսյանի գլխավորությամբ Լիբանան այցելած պատվիրակության կազմած տեղեկագրի, Հայկական Հաստատություններին Հասցված «վնասները կազմել են ավելի քան մեկ միլիարդ երկու Հարյուր միլիոն լիբանանյան լիբա» (18): Հազարավոր Հայ անտուն ընտանիքներ արյունալի կոփիվների ժամանակ մեծ վնասներ են կրել: Նրանց ընակարանները, խանութները, ֆարբիկաներն ու բիզնեսի կենտրոնները վերածվել էին կամ փլատակների և կամ ամբողջովին կողոպտվել էին: Տեղեկագիրը հայտնում է, որ «ավելի քան 10.000 Հայ ընտանիքներ զրկվել են իրենց կանոնավոր գոյության միջոցներից և մնացել անգործ» (19): Գործադրկությունը Համակել էր շատ շատերին: Բուրջ Համուղի Հայ ընակչությունը, որի ջախճախիչ մեծամասնությունը պատկանում էր աշխատավորական խավին, գտնվում էր անասելի նյութական ծանր պայմաններում: Մննդամթերքի, վառելանյութի և կենսական այլ առարկաների գների հարածունքացումը լուրջ մտահոգություններ առաջացրեց Հայ աշխատավորության շրջանում:

Մի կողմից քաղաքական լարված իրավիճակը, որը կյանքի անապա-

Հոգության պատճառ էր դարձել, իսկ մյուս կողմից տնտեսական դժվարությունները, գործադրկությունը և այլն, խթանեցին լիբանանահայերի զանգվածային, բայց ժամանակավոր արտազաղթը: Մոտավոր Հաշվումներով 1975-1976 թթ. Լիբանանից մեկնել են չուրջ 30-35 հազար Հայեր (20): Արտազաղթողներից 22-25 հազարը ապաստան է գտնել Հարևան Սիրիայում, իսկ մնացածը հիմնականում ցրվել է Մերձավոր Արևելքի արարական երկրներում՝ Հորդանանուում, Եգիպտոսում, Քուվեյթում, Սաուդյան Արարիայում և այլ երկրներում: Որոշ լիբանանահայեր նախընտրեցին մեկնել Հեռավոր երկրներ՝ ԱՄՆ, Կանադա և Ավստրալիա:

Լիբանանահայության դժվարին ու անհույս օրերին Հայկական տարրեր կազմակերպություններ ու Հաստատություններ Համատեղ ջանքեր գործադրեցին կարիքավոր Հայ ընտանիքների օգնության գործը կաղմակերպելու Համար: Փաստական տվյալների համաձայն, «11.650 Հայ ընտանիքներ անցած տարվա (1975 թ. Ն.Զ.) ընթացքում կանոնավոր կամ ժամանակ առ ժամանակ մնունդ են ստացել Հայկական օգնության խաչի, ծենյան ֆոնդի, Կարազոյոյան Հաստատության, Շվեյցարիայի Հայ ընկերակցության և Հայկական կաթոլիկ սոցիալական ծառայության կոմիտեի կողմից» (21):

Վերոհիշյալ կազմակերպությունները օգնության ձեռք մեկնեցին նաև լիբանանահայ 250 որբերի, որոնց ծնողները զոհվել էին կոփիվների ժամանակ:

Լիբանանում քաղաքացիական պատերազմը սկսելուց մի քանի ամիս անց, Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի կոչով աշխարհացրիկ Հայությունն անցած լիբանանահայությանը օգնելու Համասիյուրյան Հանգանակության կազմակերպմանը:

Հարկ է նշել, որ Վազգեն Առաջինի կոչը լայն արձագանք գտավ ամենուրեք: Հանգանակության աշխատանքներն սկսեցին 1976 թ. սկզբներին: Սփյուռքի եկեղեցական կենտրոնների, Հայկական կազմակերպությունների և էջմիածնի Մայր Աթոռի տրամադրած գումարների միջոցով Հավաքվեց ավելի քան 300.000 ամերիկյան դոլար լիբանանահայ կարույալ ընտանիքներին Հատկացնելու համար:

Լիբանանի Հայկական քաղաքական բոլոր Հոսանքների ներկայացուցիչներից կազմվեց լիբանանահայ օգնության կոմիտե և նպաստարաշխիչ Հանձնախումբ, որոնք Հավաքված գումարների բաշխումը ընակչությանը սկսեցին նոյն թվականի մայիսին: Առաջին Հերթին օգնություն ցուց տրվեց Բուրջ Համուղի, Թրատ և Սիս թաղամասերի Հայ ազգաբնակ-

Հությանը, հաշվի առնելով այդ շրջանների գտնվելը ռազմական գործողությունների և բախումների սահմանագծում և Հարձակումների ժամանակ Հայերի կրած մարդկային և նյութական գգայի վսասների պարագան:

Օգնության գործը բավականին լավ էր կազմակերպված: Նպաստարաշխից հանձնախումբը, օգնության կարիք ունեցող ընտանիքների կողմից ներկայացված դիմումների և համապատասխան ցուցակների համաձյն, «յուրաքանչյուր ընտանիքի անդամին հատկացնում էր 25 լիրանանյան լիրա» (22):

Օգնության հանձնախմբի հաշվետվությունը ցուց է տալիս, որ Բեյրութի բոլոր շրջանների, այդ թվում՝ Ալեի, Զաւլեի ու Տրիպոլիի հայությունն ստացել է անհրաժեշտ օգնություն՝ «5.498 ընտանիքներ, այսինքն, 27 հազար 435 կարույաներուն վճարված է 685.375 լիր լիրա» (23): Բացի այս օգնությունից, Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի կարգադրությամբ լիրանանահայ դպրոցներին, ինչպես նաև մշակութային միություններին ու տարրեր կազմակերպություններին հատկացված է եղել լրացուցիչ օժանդակություն:

Լիրանանի ողբերգական դեպքերի զարգացմանը մեծ մտաշոգությամբ են հետևել Խորհրդային Հայաստանի ժողովուրդը ու պետական մարմինները: Հայաստանի աշխատավորությունը բազմիցս իր բողոքի ձայնն է րարձացրել և դատապարտել աջ ուժերի գործողությունները Լիրանանում:

Խորհրդային Հայաստանի կառավարությունը, լիրանանահայ դպրոցներին, մարդական կազմակերպություններին, մշակութային հաստատություններին ու Հարձակումների հետևանքով տուժած Հայերին գործնական օգնություն ցուց տալու նպատակով, որոշեց նյութական միջոցներ տրամադրել և իրականացնել այդ օժանդակությունը Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի միջոցով:

1977 թ. ամռան ամիսներին շորջ 130 լիրանանահայ երեխաներ հանգստանալու նպատակով մեկնեցին Հայաստանի պիոներական ճամբարներ: Բազմաթիվ լիրանանահայ հասարակական ու մշակութային գործիչներ կազդուրվեցին Հայաստանի լավագույն առողջարաններում ու Հանգստյան տներում:

Լիրանանահայ համայնքին օգնելու նպատակով Հանդես եկան Հայրենի շատ կազմակերպություններ՝ առողջապահության նախարարությունը, մարմնամարզության և սպորտի պետական կոմիտեն, Հայաստանի երիտասարդական կազմակերպությունների կոմիտեն, Կարմիր խաչի ընկերությունը և այլն:

1978 թ. Հունիսի սկզբին Հայաստանի կառավարության որոշմամբ մեծածավալ օգնություն ուղարկվեց լիրանանահայությանը՝ այդ թվում՝ «110 արկդ, ավելի քան 30 տոննա ծանրությամբ» (24): Այն պարունակում էր երաժշտական գործիքներ, դպրոցական լարորատորիաներ, արդի մանկավարժության ուսուցման հետ կապված լսատեսողական գործիքներ և բազմապիսի սարքավորումներ, մարզական պիտոյքներ, դասագրքեր ու գեղարվեստական գրականություն: Առարված օգնությունը նույն ամսին բաշխվեց լիրանանահայ դպրոցներին, մարզական ու մշակութային բոլոր կազմակերպություններին:

Հարկ է նշել, որ Խորհրդային Հայաստանի ցուցարերած օգնությունը մեծ ոգնորություն ու խանդագառություն առաջացրեց ինչպես լիրանանահայ համայնքում, այնպես էլ սփյուռքի Հայաշատ կենտրոններում: Այն դիտվեց որպես սփյուռքահայության հանդեպ Հայրենիքի ունեցած մշտական ուշադրության և հոգատարության վառ դրսերում:

Հայրենի կառավարության և բազմաթիվ կազմակերպությունների ցուցարերած օգնության նշանակության մասին է վկայում այն ուղերձը, որ օգնության լիրանանահայության բաշխից կոմիտեն հղել է Լիրանանում Խորհրդային Միության դեսպանին: Այնտեղ ասված է. «Լիրանանում տեղի ունեցած ողբերգական դեպքերի հետևանքով դպրոցական և մշակութային բոլոր հաստատությունները մեծապես տուժեցին: Եվ պատասխանատու կոմիտեներից գերմարդկային ճիգեր էին պահանջվում՝ այս նույն հաստատությունները վերակառուցելու և կյանքի կոչելու: Այսպիսի պայմաններում մայր նրակի ցուց տված նվիրատվությունը մեծ քաջալերանք և նյութական ու բարոյական օգնություն Հանդիսացագ պատասխանատու շրջանակներին, միաժամանակ Հայրենասիրական մեծ խանդագառություն ստեղծելով լիրանանահայության լայն զանգվածների մեջ: Մեր չնորհակալություններն ենք Հայտնում Ձեզ, պրն. գեսպան, և խնդրում ենք բարի լինել մեր երախտագիտական դգացումները փոխանցելու Ձեր կառավարությանը» (25):

Ինչպես սփյուռքի մյուս կենտրոնների, այնպես էլ մայր Հայրենիքի ցուցարերած օգնությունը Հակայական նշանակություն ունեցավ: Այն ցուց տվեց, որ լիրանանահայությունն իր ծանր ու դժվարին պայմաններում մենակ չէ, որ նրա կողրին կանգնած է ողջ Հայությունը, որը պատրաստ է իր բոլոր հարավոր միջոցներով օժանդակել նրան, որպեսզի կարողանա արագործեն վերագտնել իրեն ու վերականգնել իր կազմակերպված աղքային կյանքը:

* * *

Խնչակես անդրադանք վերեւում, քաղաքացիական պատերազմի առաջին տարվա ընթացքում Լիրանանի աջակողմյան ուժերի հարձակումները զգալի հաջողություններ բերեցին ազգային հայրենասիրական ու ժողովրդական ուժերի նկատմամբ: 1976 թ. կեսերին Լիրանանի հայրենասիրական ուժերը պաղեստինյան դիմադրական շարժման ջոկատների հետ միասին սկսեցին արագորեն կազմակերպել իրենց ուազմական գործողությունները աջնդի դեմ և պաշտպանողական մարտավարությունից անցնել հարձակողականի, նախաձեռնությունը վերցնելով իրենց ձեռքը: Շուտով, ձախ ուժերի հումկու հարվածներից հետո, աջերը կրեցին պարտություն պարտության ետևից, որի հետևանքով նրանց Հսկողությունից դուրս մնաց Լիրանանի տարածքի զգայի մասը:

Որքան էլ որ ազգային հայրենասիրական ու ժողովրդակարական ուժերը ձեռք բերեցին չոչափելի հաջողություններ փաղանգավորների ու շամունականների նկատմամբ, այնուամենայնիվ, վերջիններս չեն դադարեցնում իրենց հարձակումները: Նույն թվականի մայիսի վերջերին նրանք կատաղի գրուներ ձեռնարկեցին Բուրջ Համուղի առաջադիմական ուժերի և պաղեստինյան դիմադրական շարժման ջոկատների կենտրոնը Հանդիսացող Նարաայի վրա, որի շրջակայրում էին գտնվում նաև մեծամասնությամբ Հայերով բնակեցված Սին Էլ Ֆիլ, Սիս, Թրատ և նոր Կիլիկիա թաղերը:

Հարկ ենք համարում նշել, որ առաջադիմական զինված ուժերի և տեղի հայ ազգարնակչության հարաբերությունները նկատելիորեն ամրապնդվել էին և, կարելի է ասել, որ նրանց մեջ առկա էր ընդհանուր հասկացողության և փոխըմբռնման ողին: Այս հանգամանքը չէր կարող թշնամանք ու հակակրանք չակալացնել փաղանգավորների շրջանում, որոնք ամեն կերպ և տեսականապես փորձում էին խանգարել հայկական թաղամասերի անդորրությունը և նույնիսկ մշշում գործադրել դրանց պայտապանությունն ապահովող հայ մարտիկների վրա, որոնք արգելք էին հանդիսանում այդ ուժերի մուտք գործելուն հիշյալ թաղամասերը:

Մայիսին աջ ուժերի կատաղի հարձակումները Նարաայի և Հայկական թաղամասերի վրա մարդկային ու նյութական մեծ վնասներ պատճառեցին: Ռմբաշարումների ընթացքում Հայերից «սպանվեցան հինգ հոգի և վիրավորվեցան շուրջ երեսուն հայ մանուկներ, կիներ և երիտասարդներ» (26): Մեծ էր նաև Հայերին պատկանող բնակարաններին ու հաստատություններին հասցված վնասը:

Աջերի կողմից ձեռնարկված հարձակումների ժամանակ Նարաայի և նրա շրջակա հայկական թաղամասերի բնակչությունը աչքի ընկավ իր մարտունակությամբ ու ցուց տվեց դիմադրության բարձր կորով: Իրողություն է, որ աջ ուժերի հարձակումների ժամանակ հայերը մեծ օգնություն ցուցաբերեցին արարաներին և, փաստորեն, մնալով այդ թաղամասերում, նրանք իրենց բախտը կապեցին շրջանի արար բնակչության ճակատագրի հետ: Արա կողքին, ելնելով հայ ազգարնակչության ապահովության ընդհանուր մտահոգությունից, է՛լ ավելի էին ամրապնդվում հայշատ շրջանների հայ քաղաքական հոսանքների միջն պատերազմի ընթացքում ստեղծված համագործակցությունն ու փոխհարաբերությունները:

Լիրանանի քաղաքական բարդ իրադրության պայմաններում աստիճանաբար բացահայտվում են հարեսն Սիրիայի դերի ուժեղացումը և նրա ջանքերը բախտումների դադարեցման և հակամարտության լուծման խնդրում:

1976 թ. հունիսի 1-ին Լիրանանի նախագահ Սուլեյման Ֆրանժիկի հրավերով Լիրանան մտան սիրիական գորքերը, որոնց առաքելության նպատակն էր, ինչպես նշված էր պաշտոնական հայտարարության մեջ, վերջ տալ եղայրասպան պատերազմին ու արյունահեղությանը: Սակայն, սիրիական գորքերի մուտքը Լիրանան ոչ միայն շկասեցրեց արյունահեղությունը, այլև նոր բախտումների և հազարավոր զոհերի պատճառ դարձավ, մանավանդ Լիրանանի ազգային առաջադիմական ուժերի և պաղեստինյան դիմադրական շարժման շարքերից ներս: Սիրիական ուազմական միջամտությունը և աջակողմյան և հետադիմական ուժերի կողքին նրա դիրքորոշչելը (սկզբնական շրջանում) խստորեն դատապարտվեց Լիրանանի հայրենասիրական ուժերի, ինչպես նաև արարական ու աշխարհի շատ երկրների կողմից:

Խորհրդային Միությունը, կողմ լինելով լիրանանյան հակամարտության քաղաքական կարգավորմանը, պահանջեց անհապաղ այդ ուժերի հեռացումը երկրից:

Շարունակ զինված բախտումները և օտար ուժերի ուղղակի միջամտությունը Լիրանանի ներքին գործերին, ինչ-որ ձևով ձախողման էին մատնում հակամարտության լուծման ուղիները և այդ ուղղությամբ գործադրվող բոլոր ջանքերը:

Ապահովության վիճակի զգացումը էլ ավելի էր համակել երկրի բնակչությանը, ինչպես նաև հայ Համայնքին: Լիրանանահայության մեջ աստիճանաբար նշմարվում էին հուսահատություն առաջացնող:

երևոյթներ, խաղաղ ու բնականոն կյանքի վերահստատման նկատմամբ տարակուսանք: Նրանց մեջ արմատավորվել էր լիրանանյան ճգնաժամի դժվար լուծելի լինելու համոզումը: Դրան որոշակիորեն նպաստում էին զինված բախումները, հատկապես ուազմական գործողությունների կենտրոնում գտնվող Բուրջ Համուղի Հայաշոծ թաղամասում, ուր ընակություն հաստատած Հայ զանգվածները շարունակաբար մարդկային և նյութական կորուստներ էին ունենում:

Ներքաղաքական լարված իրավիճակը, երկրի տնտեսության օրըստոր վատթարացումը, ինչպես նաև իշխանության բացակայությունը անևլանելի ծանր դրություն ստեղծեցին ժողովրդի համար: Հայ աշխատավորը, լինելով լիրանանի աշխատավոր զանգվածի անբաժանելի մասնիկը, չէր կարող իր ուսերի վրա չկրել նաև առաջացած բազմապեսի դժվարությունները: Անգործության, Հավելյալ եկամտի բացակայության, սննդամթերքների ու ամենաանհրաժեշտ առարկաների գների աճի անսախաղեպ պայմաններում Հայ աշխատավորը, այլ ելք չունենալով, Հարկադրված էր Համակերպիկ ու ենթարկվել նյութական զրկանքներին, նույնիսկ չրավարարելով իր ընտանիքի ամենանվազագույն կարիքները:

Լիրանանահայության բարեսիրական կազմակերպությունները, որոնք պարբերաբար, բայց խորհրդանշական կերպով օգնություն էին ցույց տալիս Հայ կարույրաներին, ի վիճակի շէին նման օժանդակությամբ լուծելու հարցերը: Հայ համայնքում ստեղծվել էր այն կարծիքը, որ առաջացած զմնդակ պայմաններից ձերբագատվելու միակ ճիշտ ուղին պետք է փնտրել ճգնաժամի քաղաքական լուծման և առաջադիմական ուժերի ու կուսակցությունների կողմից առաջադրված բարեփոխումների ծրագրի գործադրման մեջ:

Հարազատ մասով իր ընտրած քաղաքական ճիշտ դիրքորոշմանը, լիրանանահայությունը շարունակում էր պահպանել ու համարձակորեն պաշտպանել իր որդեգրած դրական չեղորդության քաղաքականությունը:

Քաղաքացիական պատերազմի երեք տարիներին Հայ համայնքի ընդունած չեղորդությունը ցույց տվեց լիրանանյան Հայրենիքին, ինչպես նաև նրա ողջ ժողովրդին՝ առանց համայնքային խտրականության հավատարիմ մնայու իր ուղեգիծը:

Լիրանանահայության դիրքորոշումը ճիշտ էր ոչ միայն Հայկական տեսանկյունից, այլև իսկական լիրանանցի լինելու տեսանկյունից: Չեղորդության քաղաքականությունից ենելով, Հայ համայնքը գտնում էր,

որ պատերազմը կործանարար է լինում առաջին հերթին Լիրանանի համար, և Հայերը, որպես լիրանանյան քաղաքացիներ, պարտավոր են դեմ լինել այդ կոփիներին և առնվազն չմասնակցել դրանց և իրենց կարելին անել եղայրական համերաշխություն ստեղծելու համար լիրանանյան բռլոր համայնքների միջև: Հանուն Լիրանանի տարածքային ամբողջականության, ինքնուրույնության պահպանման և նրա ժողովրդավարության զարգացման: Լիրանանահայությունը սկզբից սեթ, Հրամարվելով մասնակցել կոփիներին, հետո ողականորեն մնաց երկրի ճգնաժամի լուծման կողմանակցը՝ քաղաքական փոխադարձ դիջումների, ժողովրդավարության հիմունքների և համերաշխության հաստատման ճանապարհով: Նա քաջ գիտակցում էր, որ քաղաքացիական պատերազմը չի կարող ծառայել ժողովրդի շահերին, որ երկիրը պետք է վերադառնա իր բնականոն կյանքին, վերագտնի իրեն, կարողանա վերականգնել իր քայլքայված տնտեսությունը և զարգացնել մշակույթը:

Փաստն այն է, որ լիրանանահայության դրական չեղորդությունը, որպես ճիշտ դիրքորոշում, արժանացավ ընդհանուրի հավանությանը ամբողջ պատերազմի ընթացքում, սակայն խոր դժգություն առաջացրեց միմիայն քրիստոնյաց հետադիմական կուսակցությունների փաղանգավորների ու շամունականների մեջ, որոնց առաջնորդները ջանք շինայեցին: Իրենց մնչումները ուժեղացնելու և հալածանքներ նախապատրաստելու հայերի դեմ:

1977 թ. վերջերից սկսած Լիրանանի աջակողմյան ուժերի պաշտոնաթերթերում սկսեցին երեալ անհիմն Հողվածներ և անպատասխանատու Հայտարարություններ ու վիրավորանքներ լիրանանահայության հասցեին:

Փաղանգավորների «Ալ Զարչա» շաբաթաթերթը իր 1978 թ. սեպտեմբեր ամսվա համարներում զետեղել էր դրապարտություններով լեցուն Հողվածներ, ուր Հայ համայնքի որդեգրած դրական չեղորդությունը գնահատվում էր որպես անտարերություն և Հայերը մեղադրվում էին «իսկական լիրանանցու» կեցվածք չունենալու մեջ:

Իր խմբագրական Հողվածներից մեկում, Հայերին «Հրավիրելով իրենց Հյուրընկալող Հողի հանդեպ հավատարիմ մնալու ձգտմանը», թերթը նշում է. «Մենք ուզում ենք Հայրենիքին (Լիրանանին - Ն.Զ.) հավատարիմ Հայեր, այլ ոչ նրա ավերումն ու Հրդեհը դիտողներ: Ուզում ենք, որ Հայերը վերադառնա իրենց խղճմտանքին և հանձնառու լինեն իրենց հանդեպ գորգուրացող լիրանանցիների ուղեգծին: Նրանցից պահանջում ենք լիրանանալ Հոգով ու սրտով» (27):

«Քրիստոնեության պաշտպան» ներկայացող թերթի մեկ այլ համարում փաղանգավորները, իրենց վիրավորված զգալով հայերի ընդունած դրական չեղորությունից և իրենց շմիանալու հանգամանքից, նշում են. «Հայերը, գալով Լիրանան, չբաժարվեցին իրենց ազգային խմբնությունից և մոտ չկանգնեցին քրիստոնյաներին և, որ ամենակարևորն է՝ նրանց կուսակցությունները միմյանց հետ համաձայնության եկան չհարելու կովող կողմերից որևէ մեկին հանուն իրենց սեփական շահերի և ունեցածքի պաշտպանության: Այս հանգամանքը խոր զայրույթ առաջացրեց նրանց նկատմամբ: Գաղտնիք է նաև, որ նրանք ամբաստանքում են պաղեստինցիների հետ գործակցելու և նրանց կողքին կանգնելու համար» (28): Եղրափակելով, թերթը ավելացնում է. «Մի՞թե ավելի ճակատագրական պահ կա, ինչի՞ են սպասում այս հյուրերը և եթե չեն ուղարկում իրենց զաղթականությունը կրկնվի, ապա նրանք պետք է զիտակցեն, որ այստեղ իրենց ներկայությունը կախված է Լիրանանի և լիրանանցիների գոյությունից» (29):

Անհերքելի ճշմարտություն է, որ լիրանանահայության դեմ փաղանգավորների կազմակերպած արշավը և անհիմն մեղադրանքները որոշակի նպատակներ էին հետապնդում: Խնչակ նշում է ն. Հովհաննիսանը, նրանց խնդիրն էր՝ «որորքովել ազգային կրքերը և ատելություն սերմանել արարական հետամաց խավերի մեջ հայերի նկատմամբ ինչպես լիրանանում, այնպես էլ արարական մյուս երկրներում, լիրանանյան կոնֆլիկտի մեջ արհետականորեն ազգային մոմենտ մտցնել, չեղել արարների ուշադրությունը ազերի կողմից կիրառվող հետադիմական քաղաքականությունից, որն ուղղված է լիրանանի և արարական մյուս երկրների ազգային շահերի դեմ, թաքցնել իրենց կապերը ամերիկյան իմաստերիալիզմի և խրայելական ազբեստների հետ» (30):

Եթե լիրանանահայությունը հրաժարվեր իր ընդունած դրական չեղորության քաղաքականությունից ու միանար փաղանգավորներին ու նրանց աջակցող ուժերին, ապա այդ քայլը վերջին հաշվով կարող էր ճակատագրական լինել նրա համար՝ նոր ու ավերիչ և ավելի արյունալի կոփների պատճառ դառնալ: Ահա թե ինչու հայ համայնքը պատերազմի ընթացքում զիտակցելով այդ ամենը, չգիտեց իր դիրքերը և չենթարկեց փաղանգավորների սպառնալիքներին:

Իրենց կամքը լիրանանահայությանը պարտադրելու փորձերը անհաջողության մատնվելուց հետո, փաղանգավորները սկսեցին իրենց ենթակա հայկական շրջաններում հայերի դեմ ուժ գործադրել և իր նախադեպը շունեցող ոտնձգությունների դիմել:

«Կանչ» շարաթաթերթի վկայակոչությամբ փաղանգավորները «ամսական պարտադիր տուգանքներ կը գանձեն հայերու տուներն ու խանութներեն, տասնյակ հազարավոր ոսկիներու մեծագումար տուգանքներ կը պարտադրեն Հայ առետրականներուն, աշխատանոցներուն ու գործատեղիներուն» (31):

Մարոնի համայնքի խոշոր առետրական ու ֆինանսական բուրժուազիայի շահերն արտահայտող Ազգային լիրերալ կուսակցության ղեկավար Քամիլ Շամունը «ապահանջել է Հայկական կուսակցություններից «Լիրանանյան ճակատին» վճարել 15 մլն. լիրանանյան լիրա որպես Հարկ նրանց անընդունելի չեղորության դիմաց լուր մնալու համար» (32):

1978 թ. Հոկտեմբերի 1-7-ը փաղանգավորների ու շամունականների ուժերը կատաղի հարձակումներ ձեռնարկեցին մայրաքաղաքի Հայարնակ շրջանների վրա: Նրանք, նախապես ունենալով հարձակման հստակ ծրագիր, մեծ ուժերով թափանցեցին խիտ բնակչություն ունեցող Բուրջ Համուղի, Դորայի, Մար Յուսեֆի, Նոր Հաջընի, Էջրեֆիեյի, Խալիլ Բաղավի և Մար Միայելի թաղամասերը:

Մանր օրեր ապրեց հատկապես Բուրջ Համուղի հայությունը: Այստեղ փաղանգավորների զինված ջոկատները բախումների մեջ մտան ըրջանի հայ զինյաների հետ: Տեղատարափ ուումբերի պայմանների հետևանքով զոհվեցին ու վիրավորվեցին շատ հայ բնտանիքներ, քարուքանդ եղան նրանց պատկանող բնակարաններն ու խանութները: Կողոպտվեցին համայնքի մի շարք հաստատություններ, խնչպես, օրինակ, Գարայողյան բարեսիրական հաստատությունը, Մեսրոպյան վարժարանը և այլն:

Բացի Բուրջ Համուղից, աջ ուժերի հարձակումների թիրախ դարձան նաև նոր Հաջընի, Խալիլ Բաղավի, Զալբայի, Էջրեֆիեյի, Նահր Էլ Մոթի և այլ հայկական շրջանները: Այս թաղամասերում ապրող հայերը մարդկային բազմաթիվ կորուստներ ունեցան, ենթարկվեցին առևանգումների: Հարյուրավոր հայ բնտանիքներ մնացին անտուն ու անօգնական:

Մեծ էր նաև Հայարնակ շրջաններին հասցված նյութական վնասը: Խնչպես գրում է Հայկական մամուլը, «քանդումներ կամ ծանր վնասներ կրած են նոր Մարաշի կամողիկ Մեսրոպյան փարժարանը, նոր Սիսի և կեղեցին, ինչպես նաև Արագածի, Սիս Էլ Ֆիլի, Թրատի, նոր Սիսի, Ամանոսի շրջաններու հայկական բնակարաններէն շատերը, Թրատ Թաղի Հայկական դպրոցը, Նահր Էլ Մոթի, Զեյրեյի, Ժել Էլ Գիրի, Ջալբայի և Անթիլիասի Հայկական որոշ բնակարաններ» (33): Ավերվե-

ցին Հայերին պատկանող մի շարք գործարաններ, մշակութային կենտրոններ, դպրոցներ ու եկեղեցիներ:

Ի դեպ, Հայկական թաղամասեր սողոսկած փաղանգավորներն ու շամունականները, Հայերի սեփականությունը Հանդիսացող խանութներն ու վաճառատները կողոպտելով հանդերձ, դիմում էին ավելի ստոր ուսնագությունների, բռնագրավելով Հայի և այլ մմնդամթերքների այն քանակությունը, որը ուղարկվում էր Բեյրութի արևմտյան շրջանից՝ արևելյան շրջանում ապրող Հայ աղետյաններին, ինչպես նաև Հրաժարվում էին Հայ վիրավորներին ընդունել հիմնադանոցներում:

Պաշտոնական աղյուսների Համաձայն, մինչև Հոկտեմբերի կեսերը, փաղանգավորների ու շամունականների Հարձակումների Հետևանքով, դուչել են ավելի քան 80 Հայեր և վիրավորվել մոտ 350 Հոգի (34):

Աջ ուժերի կողմից Հարձակումների նեթարկված շրջանների Հազարավոր Հայ բնակիչներ Հարկադրված դիմում էին փախուստի և ապաստանում ավելի խաղաղ և Համեմատարար ապահով շրջաններ, ինչպես Անթիլիասի Կաթողիկոսարանը, Քիրեյի «Թունոց բույնը», Զմադի փակը և Տրիպոլի քաղաքը:

Տրիպոլիի Հայերը, Հայրենասիրական բարձր ոգի դրսնորելով, անհրաժեշտ օգնություն ցուցաբերեցին չուրջ հինգ Հայուր փախստական Հայերի ու նրանց տեղափորեցին ինչպես տեղի Հայկական դպրոցների ու ակումբների շենքերում, այնպես էլ իրենց բնակարաններում: Այդ փախստականները «օգնություն և խնամք ստացան Հայկական բոլոր հոսանքներու ներկայացուցիչներէն բաղկացած գաղթականներու օգնության մարմինէն, ինչպես նաև Լիբանանի Ազգային շարժումէն» (35): Այս վերջինս աղետյանների օգնության ֆունդին Հատկացրել է շուրջ 35 Հազար լիբանանյան լիբա Բեյրութի արևելյան շրջանից փախած Հայ գաղթականներին օգնելու Համար:

Ազգային շարժման նախաձեռնությամբ, երկու Հարյուր Հայ ընտանիքների որպես օգնություն տրվեցին բազմաթիվ ծածկոցներ և անհրաժեշտ մննդամթերք, որոնք բաժանված են «արևմտյան Բեյրութի շրջանը, Այնձար, Ալեյ, Բէամդուն ապաստանած Հայ գաղթականներուն, ինչպես նաև արևելյան շրջանի մեջ գտնվող Հայ աղետյալ ընտանիքներուն» (36):

Բազմահազար Հայեր, աղատվելով մահվան ճիրաններից, Հարկադրված եղան ապաստան գտնել նաև Այնձարում (մոտ Հազար ընտանիք), Հալելապում (երկու Հազար ընտանիք՝ մոտ ութ Հազար մարդ), Լաթարիայում, ինչպես նաև Գամասկոսում:

Լիբանանյան «Ալ-Ամալ» թերթի վկայությամբ, «արտագաղթել են Հարձակումների ենթարկված Հայկական շրջանների բնակչության 30 տոկոսը» (37):

Անդրադարձություն Հայերի արտագաղթին, պետք է նշել մի կարևոր փաստ ևս. կոփսների թեժ շրջանում Հայերը մեծ բնդունելություն էին գտնում ամերիկյան իշխանությունների կողմից, որոնք «արտագաղթի գրասենյակների միջոցով դյուրացնում էին Հայերի մեկնումը երկրից, և շատերը ԱՄՆ-ի էմիգրացիոն գրասենյակից ձեռք էին բերում այսպես կոչված «Green Card», որը կրողին չնորում էր ԱՄՆ-ում կեցության և աշխատելու իրավունք» (38):

Այս գործարքը, որքան էլ որ Համարվելու լիներ «մարդկային», այնուամենայիվ, իր խորքում կազմակերպված դավադրություն էր՝ անմիջականորեն ուղղված Հայերի դեմ՝ նրանց արտագաղթի մղելու համար: Վիճակադրական տվյալների Համաձայն, 1978 թ. Հոկտեմբերին Հայկական շրջանների վրա կատարված Հարձակումների ժամանակ Հայերի կրած նյութական վնասները ավելի էին, քան պատերազմի շրոս տարիներին հասցված վնասը: «Քանդվել են Հայերին պատկանող 25 գործարաններ, կողոպտվել 800 և վնասվել ավելի քան 1200 բնակարաններ, ինչպես նաև մննդամթերքի, Հագուստի և տարրեր ապրանքատեսակների 27 մեծ ու փոքր, Հայերի սեփականությունը Հանդիսացող դպակ» (39):

Հայ Համայնքին հասցված վնասը, վերածելով դրամական արժեքի, «կազմել է շուրջ 600 մլն. լիր. Ըսկե՛ մոտավորապես 200 մլն. ամերիկյան դոլար» (40):

Ռմբակոծությունների ժամանակ ամբողջապես ավերվել էր Խանամիրյանի Հագուստի արտադրության Հաստատությունը, ուր աշխատում էին շուրջ 450 բանվորներ, որոնց մեծամասնությունը Հայեր էին: Նոյն ճակատագիրը ունեցան նաև Սալիխանի և Գաղանջյանի կողմիկ արտադրության, ինչպես նաև Մուրադյանի այլումինից պատրաստվող իրերի արտադրության Հաստատությունները: Բացի վերը նշածից, կային նաև կիսաքանդ և կողոպտված գործարաններ, ինչպես օրինակ, Արարյանի, Խմաստունյանի և Զաթալրաշյանի կաշվի գործարանները, որոնց աշխատողների ճնշող մեծամասնությունը Հայեր էին:

Հարկ է նշել, որ մինչև բաղաքացիական պատերազմը, Հայկական Հաստատությունների ջանքերով, տարեցտարի ավելանում էին արտադրության ծագալները, գգալի աճ ունենում կապիտալի այն մասը, որը ներդրվում էր արտադրության միջոցների կատարելագործման և

առավել արդիականացման համար: Միաժամանակ նկատվում էր նաև աշխատումի թվաքանակի աճ, բարեկավում էր արտադրության որակը և նոր թափ ստանում արտադրությունը:

Սակայն Լիբանանի քաղաքացիական պատերազմը եկավ ծանր հարգած հասցնելու երկրի արդյունաբերության զարգացմանը և նպաստավոր պայմաններ ստեղծեց բանվոր դասակարգի (որի մեջ զգալի տոկոս էին կազմում նաև Հայերը), գործադրկության աճին: Մի կողմից գործադրկությունից խոյս տալու մտահոգությունը, իսկ մյուս կողմից Հայ Համայնքի ղեմ աջակողմյան ուժերի որդեգրած թշնամական վերաբերմունքը պատճառ դարձան, որ Հայ աշխատավոր խավը շարունակաբար արտագաղթեր երկրից: Այս հանգամանքը չէր կարող շանհանստացնել նաև Լիբանանի արհմիությունների ղեկավարներին: 1978 թ. նոյեմբերի 3-ին Լիբանանի բանվորական արհմիությունների ղեկավարներից մեկը՝ Արդու Քերիմ Սեյֆէդինը, արհմիությունների տանը ունեցած մամուլի ասուլիսում, դատապարտելով Բեյրութի արևելյան շրջանում Հայերի ղեմ ձեռնարկված արշավը՝ նշել է. «Ճարտարվեստական բազմաթիվ հաստատությունների բանդումն է հետո հիշյալ գրգոռությունները առավել պատճառ մը կրնան Հանդիսանալ Հայ բանվորներու արտագաղթին, ինչ որ պիտի վնասէ Լիբանանի ճարտարվեստին ու տնտեսության, նկատելով, որ Հայերը մեծապես նպաստած են Լիբանանի տնտեսական զարգացման և արտադրության թափի Հավելման» (41):

Լիբանանի Հայ Համայնքի ներկայացուցիչները, ենելով այդ մտահոգությունից և զգալով աստիճանաբար մեծացող վտանգը, անհրաժեշտ էին Համարում միջոցներ գտնել՝ ստեղծված կացությունից դուրս զալու և վերականգնելու Հայկական արդյունաբերական կենտրոնները, քանի որ որոշ Հայ գործարանատերեր արդեն պատրաստվում էին լուծարի ենթարկել իրենց Հաստատությունները և Հեռանալ երկրից, ծանր դրության մասնելով բազմաթիվ Հայ աշխատավորների:

Լիբանանահայության համար ստեղծված աղետալի օրերին Մեծի Տան Կիլիկի վեհափոռ Հայրապետներ Խորեն Ա. կաթողիկոսը և Գարեգին Բ. աթոռակից կաթողիկոսը Հանդես եկան Համայնքի ուղղված կոչով, ուր անհրաժեշտ էին Համարում, որ Հայ Համայնքը կարողանա արագ վերագտնել իրեն և Համերաշխորեն ու միասնաբար վերացնի իր նախադեպը չունեցող աղետի հետևանքները: Այստեղ ասված է. «Կոչ կուղենք մեր ողջ Հայ ժողովրդին ուր ալ ապրի ան այսօր, մայր Հայրենիքի մեջ, թե ի ծագս աշխարհի, ինչ երկրի մեջ ալ որ Հասակ առած ըլլայ այն, ինչ երկնքի տակ ալ որ չնչէ ան, ինչ դավանանքի կամ

գաղափարականի ալ որ Հավատայ ան, ինչ ընկերային կամ դասակարգային խափի ալ որ պատկանի ան, որ՝ ինք իր տերն ու տիրականը զգա ինքզինք: Ինք՝ իր պաշտպանը: Ինք՝ իր ճակատագրին դարձնողը: Մեկ և անբաժանելի: Այս օրերուն մեր գոյության համար որքան հացն է կարևոր՝ նույնքան և ափելին մեր ազգի միությունն ու ամրողականությունը, որուն մեջ է մեր գորությունն ու հաղթանակի անհաջելի ուժը» (42):

Իր հերթին Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինը լիբանահայության ուղղված իր պատգամում նշում է. «Անհրաժեշտ է քովրովի գալ, Համախմբել րոլոր կենդանի ուժերը, որպեսզի լուրջ կերպով մտածվի և ծրագրված ձևով, կեղրուացված ձևով օգնության գործը կազմակերպվի հոգալու համար անմիջական կարիքները ու նաև առաջադրվի վերաշնությունը, վերականգնումը բոլոր քանդվածներուն, որունք կատարվեցան այդ չարարաստիկ տասը օրերու ընթացքին...» (43):

Իրողությունն այն է, որ լիբանանահայերը այդ ծանր օրերին, առանց դավանական, կուսակցական և գաղափարական պատկանելության, Համերաշխորեն Հանդես եկան ստեղծված վիճակը միասնաբար Հաղթահարելու ձգտումով և ամեն Հնարավոր միջոցի դիմեցին՝ կազմակերպելու համար իրենց իմքնապաշտպանությունն ու Փիղիկական ապահովությունը:

Հիշատակության արժանի է կոփսների օրերին Հայ երիտասարդության կարգապահ ու կազմակերպված լինելու փաստը, երբ «կոփսներու և խառնակությանց ամենածանր օրերուն, գիշեր-ցերեկ, ղենք ի ձեռին Հայ արի տղաք պահակ կեցան Հայ ժողովրդին: Հայկական թաղերու մուտքին, փողոցներու անկյուններուն, Հայ տուներու և աղգային Հաստատություններու առջև արիաբար կանգնեցան անոնք և թույլ չտվին, որ խառնակից, պառեհապաշտ ձեռքեր տեր դառնան իրենց ժողովրդի զավակներուն ձեռքերով շինված տունին ու գործին, ինչին ու ստացվածքին և իրենց ազգի հոգևոր, կոթական, մշակութային և աղգային Հաստատություններուն» (44):

Այս ժամանակ, երբ ոմքակոծությունների ենթարկված Հայկական թաղամասերի Հայ ազգաբնակչությանը ցույց էր տրվում անհրաժեշտ օճանդակություն, և սկսել էին վնասված ու քարուանդ շրջանների վերականգնման աշխատանքները, աջակողյան ուժերը նոր և ափելի ծանրակշիռ ոճիր գործեցին լիբանանահայության ղեմ:

1978 թ. Հոկտեմբերի 27-ին փաղանգավորներն իրենց ատելավառ

թշնամությունը հայերի դեմ արտահայտեցին Մեծ Եղեռնի նահատակների հիշատակը հավերժացնող բրոնզյա հուշարձանի պայմենով, որը գտնվում է նրանց բացարձակ տիրապետության տակ գտնվող ԲիբՓայայի մոտակա Ամիրիկ ըլուրի վրա: Այս սրբափեղ արարքը բողոքի և ցասման մեծ ալիք առաջացրեց ինչպես լիրանանահայության մեջ, այնպես էլ համայն սփյուռքում:

Նույն թվականի նոյեմբերի մեկին Բեյրութի արևելյան և արևմտյան շրջանների հայկական հաստատությունները հայտարարեցին համընդհանուր գործադուլ: «միասնարար բողոքելու համար հակահայ գրգությանց այն ալիքին դեմ, որուն վերջին ու ընդվեցուցիչ արտահայտությունը եղավ ԲիբՓայայի ապրիլյան նահատակված հուշարձանին դեմ գործած խափանարարական անարգ ոճիրը» (45):

Բեյրութի բնակչությունը ականատես եղավ մի յորաշատուկ գործադուլի, որը, «Հայության դրական չեղողության հանդեպ հարգանք պահանջելով մեկտեղ, հանդիսացավ ժողովրդային հրավեր մը՝ Հայրենիքը դուրս ըերելու համար միջնամայնքային գրգությանց և կաղմալուծումի ներկա անհեթեթ վիճակն» (46):

Գործադուլին իրենց համերաշխմությունը արտահայտեցին նաև մայրաքաղաքի հայկական կրթական հաստատությունները: Բեյրութի ամերիկյան համալսարանի հայ ուսանողները, Հայկադար քոլեջը, ի նշան բողոքի, Հայտարարեցին մեկօրյա դասադուլ, իսկ ամերիկյան համալսարանի ամրող ուսանողությունը որոշեց մեկժամյա ընդհանուր դասադուլ Հայտարարել:

Լիրանանահայերի համընդհանուր գործադուլը լայն արձագանք գտավ լիրանանահան մամուլում: Բարձր գնահատանքի արժանացավ նրա կաղմակերպվածությունն ու խաղաղ ընույթը:

Լիրանանի հայ համայնքի նկատմամբ փաղանգավորների գործողությունները բողոքի մեծ ալիք բարձրացրին ամրող սփյուռքում:

1978 թ. նոյեմբերի 11-ին Փարիզում տեղի ունեցավ ֆրանսահայ բոլոր քաղաքական հոսանքների ներկայացուցիչների ժողով՝ առաջնորդ Սերովք արքեպիսկոպոս Մանուկյանի նախագահությամբ: Ժողովը, լիրանանահայության վիճակը քննարկելուց հետո, որոշում ընդունեց բողոքի հեռագրեր ուղարկել Ֆրանսիայի նախագահ Ժիլստենին, Լիրանանի նախագահ Խլիաս Սարգսին, Միավորված պետքի կաղմակերպության գլխավոր բարտուղար Կուրդ Վալդայմին և մարոնիների պատրիարք Խրիստին: Հեռագրերում ֆրանսահայ համայնքը, դատապարտելով աշնորի բռնությունները հայերի դեմ, խոր մտահո-

գություն էր արտահայտում «Լիրանանի հայոց կացության առնչությամբ և ԲիբՓայայի նահատակած հուշարձանի ուժանակումին դեմ և կը պահանջեն անմիջական միջամտություն՝ առաջքը առնելու համար կացության վատթարացման» (47):

Նույն օրը, ի պաշտպանություն լիրանանահայության, նյու Յորքում Հայ համայնքը կաղմակերպեց խոչոր ցուց ՄԱԿ-ի լիրանանյան ներկայացուցության կենտրոնի առջև: Ցուցի կաղմակերպիչներից Հերտերյանը Հայտարարեց: «Երկար ժամանակէ ի վեր Լիրանանի մեջ մենք որդեգրած ենք դրական չեղողության կեցվածք: Մեր այդ դիրքորոշումը ուսնակոխվեցավ: Երևութապես հայերին դեմ կը գործվին հետևողական հարձակումներ» (48):

Հայերի նկատմամբ աշերի վայրագ գործողությունները մեծ վրդով-մունք առաջացրին նաև Լիրանանի համայնավար կուսակցության մեջ:

Նոյեմբերի 13-ին Լիրանանի համայնավարների պատվիրակությունը, ժորժ Հառիկի գլխավորությամբ և Հայ Հասարակական գործիչներ Հ. Մադեյրանի, Գ. Աղդարյանի և Պ. Երեցյանի մասնակցությամբ, հանդիպում ունեցավ Խորհրդային Միության դեսպան Ա. Սոլդատովի հետ: Պատվիրակության անդամները իրազեկ պահեցին դեսպանին Հայ համայնքի ընդունած դրական չեղողության, ինչպես նաև լիրանանյան դեպքերի հետ Հայությանը հուզող և մտահոգող հարցերի մասին: Նրանք խնդրեցին, որ լիրանանահայության ունեցած մտահոգության մասին տեղյակ պահեն Խորհրդային Միությանն ու Հայաստանի կառավարությանը:

Դեսպան Ա. Սոլդատովի հետ այդպիսի հանդիպում ունեցան նաև Լիրանանի խորհրդարանի չորս հայ պատգամավորներ՝ Մելքոն Էպլի-դաթյանը, Մեթր Խաչիկ Պապիկյանը, դոկտոր Անդրանիկ Մանուկյանը և Սուրեն Խանամիրյանը:

Լիրանանահայերի դեմ ձեռնարկված սանձարձակ գործողությունները կասեցնելու և կամայականությունները դադարեցնելու պահանջով հանդես եկավ Հայաստանի ժողովուրդը: Մայր Հայրենիքը չէր կարող անտարբեր անցնել իր Հայրենսակիցների մի սովար մասին վիճակված դառն իրողության կողքով:

Երևանի բաղմաթիվ գործարաններում ու ձեռնարկություններում տեղի ունեցան բողոքի բաղմամարդ Հանրահավաքներ, պահանջելով վերջ տալ Լիրանանի Հայազգի խաղաղ ընակչության դեմ շարունակվող վայրագ գործողություններին: Հայաստանի մամուլը խստորեն դատապարտեց փաղանգավոր ստահակների արարքները Հայության դեմ

և հրապարակեց Հանրապետության անվանի գրողների, գիտության ու մշակույթի գործիչների բողոքի ձայնը:

Բազմաթիվ Հանրահավաքներում, մամուլի ու տեղեկատվության մարմիններում ստացված նամակներում ու հեռագրերում հայրենի ժողովուրդը ցասումով նշանակում էր լիրանանահայության դեմ կատարված ուսնագույնները, պահանջում և հույս հայտնում, որ Լիրանանի օրինական իշխանությունները կապահենեն պահպանողականների կամայականությունները, խստորեն կպատճեն մեղավորներին:

Ասիայի և Աֆրիկայի երկրների համերաշխության խորհրդային կոմիտեն, արտահայտելով խորհրդային հասարակության կարծիքը, Հանդես եկավ համապատասխան հայտարարությամբ, ուր նշված էր. «Խորհրդային մարդիկ ամենայն վճռականությամբ դատապարտում են Լիրանանի խաղաղ ընակչության նկատմամբ բիրտ կամայականությունը, որին այս անգամ զոհ է դարձել Հայ համայնքը: Արտահայտելով խորհրդային մարդկանց մարդասիրական զգացմունքները, Ասիայի և Աֆրիկայի երկրների համերաշխության խորհրդային կոմիտեն անհրաժեշտ է համարում, որ բոլոր միջոցները մեռնարկվեն այդ կամայականությունը դադարեցնելու, Լիրանանում իրադրությունը նորմալացնելու համար» (49):

Ի պաշտպանություն լիրանանահայության, Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինը հեռագրեր ուղարկեց Հռոմի պապ՝ Հովհաննես Պողոս Երկրորդին և Եկեղեցիների համաշխարհային խորհրդի նախագահ դոկտոր Ֆիլիպ Պոտերին, խնդրելով «իրենց Հեղինակավոր խոսքը լսելի դարձնել լիրանանյան որոշ շրջանակներին, ի պաշտպանություն Լիրանանի Հայ կրոնական համայնքի ու Հավատացյալների» (50):

Հաղիկ էին կոփիները դադարել, երբ Հոկտեմբերի 23-ին Մեծի Տանն Կիլիկիո վեհարանում հրավիրվեց խորհրդակցություն լիրանանահայության բոլոր հարանվանությունների Հռոմոր պետերի, երկրի խորհրդարանի Հայ պատգամավորների և Հայկական քաղաքական բոլոր Հոսանքների ղեկավարների մասնակցությամբ, քննելու համար Հայ համայնքին հասցված ծանր հարվածը: Խորհրդակցության աշխատանքներին մասնակցում էին նաև Հայկական բարեգործական ընդհանուր միության և Հայ օգնության խաչի շրջանային մարմինները:

Ստեղծված վիճակից լիրանանահայությանը դուրս բերելու և ընականուն կյանք վերահաստատելու համար խորհրդակցության մասնակիցները որոշեցին ստեղծել մի կենտրոնական մարմին, որը կարողանա ինչպես Հարկն է կազմակերպել աղետի ենթարկված ժողովրդի կարիք-

ների բավարարման աշխատանքը, ինչպես նաև ավերված ընակարանների վերականգնման, կրթական, մշակության և ազգային հաստատությունների գործունեությունը վերսկսելու գործը:

Հոկտեմբերի 27-ին ստեղծվեց լիրանանահայության վերականգնման կենտրոնական մարմին՝ Խորեն Ա. Կաթողիկոսի և Գարեգին Բ. Աթոռակից կաթողիկոսի նախագահությամբ:

Պետք է նշել, որ վերոհիշյալ մարմինը, անմիջապես անցնելով գործի, առաջնահերթ խնդիր համարեց աշխատանքները Մայր Աթոռի հետ համակարգումը: Այդ նպատակով նոյեմբերի սկզբներին Սուրբ Էջմիածին մեկնեց Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության հատուկ պատվիրակությունը: Այն ուներ լիրանանահայության օգնության գործը համազգային տարողությամբ կազմակերպելու համար համատեղ ծրագիր ձակելու առաքելություն:

Խորհրդակցությունները Մայր Աթոռի ներկայացուցիչների հետ անցան արդյունավետ և որից հետո Հրապարակվեց համատեղ Հաղորդագրություն: Կողմները համաձայնության եկան իրենց թեմների մարմինների միջոցով ստեղծելու հանգանակություն կազմակերպող հատուկ մարմին, ինչպես Հայկական կրոնական բոլոր հարանվանությունների, այնպես էլ քաղաքական հոսանքների, բարեխրական և մշակությամբ:

Ըստ Համաձայնության, Հայաստանից և սփյուռքի բոլոր համայնքներից Հանգանակության միջոցով Հավաքվելիք գումարները կենտրոնանակություն էին թեյրություն և պետք է դրվեին վերականգնման կենտրոնական մարմինի տրամադրության տակ, որը «միակ իրավասուն է այդ գումարները հատկացնելու Լիրանանի Հայ աղետյալների կենսական կարիքները հոգալու, Եկեղեցական, մշակության հաստատությունները վերաշխնելու և տնտեսական կյանքը վերականգնելու գործին» (51):

Անմիջապես սկսվեցին Հանգանակության աշխատանքները լիրանանահայությանը օգնելու նպատակով: Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինը Հանդես եկավ կոչով՝ ուղղված սփյուռքահայությանը: Այնտեղ ասված է. «ՄԵնք վստահ ենք, թե բոլոր Հայ հավատացյալները անխտիր, բոլոր երկրներէն, մեկ սիրտ, մեկ հոգի դարձած, մեռքանորդի տված ոչինչ պիտի խնայեն իրենց նյութական լիրարուն օժանդակությունը հասցնելու Լիրանանի աղետյալներուն, մղված քրիստոնեական գութի և եղայրության ազնիվ զգացումներէ, դարձանելու համար աղետը, որ լիրանանահայության ընդմէջնեն կը հարվածէ Համայն Հայությանը և ամրող Հայաստանյաց Եկեղեցին» (52):

Որպես Հայրական հոգածության արտահայտություն և Համահայկական Հանգանակության սկիզբ, էթմիածնի «ԱՄԱՐ ԱԹՈՈՐ իր սեփական միջոցներից լիրանանահայ աղետյաներին տրամադրեց Հիսուն Հաղար դոլար» (53):

Հանգանակության աշխատանքները նախ սկսվեցին Լիրանանում, ապա և սիյուռի զանազան հատվածներից, մասնավորապես՝ ԱՄՆ-ից, Ֆրանսիայից ու Իրանից Լիրանանի վերականգնման մարմինը ստացավ զգալի գումարներ: Ըստ տեղի Հայկական աղբյուրների, Հանգանակության արդյունքը կազմեց չորրորդ միլիոն լիր. լիրա» (54):

Շոշափելի էր նաև Մայր Հայրենիքի օգնությունը լիրանանահայությանը: Հայ Համայնքի վերականգնման խնդիրը գտնվում էր Հայաստանի կառավարության ուշադրության կենտրոնում: Օգնության գործը կազմակերպելու համար 1978 թ. Հունվարին Բեյրութ ժամանեց Հայաստանի պատվիրակությունը՝ Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահ Վ. Համադասայանի գլխավորությամբ:

Հայրենի պատվիրակությունը տեղում քննեց լիրանանահայ կարիքավոր ընտանիքներին անմիջական օգնության, կրթական հաստատությունների ու մշակութային կենտրոնների կարիքների ապահովման, որքացած երեխաների ուսումը կազմակերպելու, քաղաքացիական պատերազմի ժամանակ վիրավորված Հայերի բուժումը Հայրենիքում իրականացնելու և այլ հարցեր:

Մտեղծվեց օգնության գործադիր մարմին, որը նախապատրաստական և կազմակերպչական աշխատանքներ տանելուց հետո պատրաստեց պահանջված կարիքների համապատասխան ցանկ: Նույն ժամանակում ստեղծվեցին նաև օգնության բաշխիչ հանձնախմբեր և կենտրոններ:

Նույն թվականի մարտին, կոիվներից տուժած Հազարավոր լիրանանահայ ընտանիքներ Մայր Հայրենիքից ստացան ուղարկված պատկառելի օգնություն, որը պարունակում էր սննդամթերք, Հագուստ, կոշիկ, ծածկոցներ, մաճճակալներ, ղեղորայք և այլն: Բացի այդ, մեծ քանակությամբ լաբորատոր սարքավորումներ, դասագրքեր, գրենական պիտույքներ և երաժշտական գործիքներ բաշխվեցին ՀԲԸՄ-ի Զարուհի Հակոբյան և Մխիթարյան վարժարաններին, Այնձարի ազգային Հառաջ և Հայ ափետարանական քոյեջներին՝ Ռուբինյան, Նուպարյան, Արգարյան, Բալըզնյան վարժարաններին և այլ Հաստատությունների:

Լիրանանահայությունը և նրա բոլոր կազմակերպությունները երախտագիտությամբ էին նշում և բարձր գնահատում այն արտակարգ

Հոգատարությունը, որ ցուցաբերեց Հայաստանի կառավարությունը: Մայր Հայրենիքի եղբայրական օգնությունը մեկ անգամ ևս հաստատեց, թե Հայրենի պետությունն ու ժողովուրդը ինչպիսի մեր ու գուրգուրանք են տածում սիյուռքահայությանը և այս պարագային Հատկապես լիրանանահայության նկատմամբ: Այդ օգնությունն ավելի ևս սերտացրեց Հայրենիք-սիյուռք կապերը և նոր թափ հաղորդեց լիրանանահայության պահպանման և գոյատևման պայքարին: Այդ առնչությամբ ռամկավարների «Զարթոնք» թերթը նշում է. «Յուրաքանչյուր լիրանանցի Հայ այսպիսով ավելի ևս գիտակցեցավ, թե ունի վերածնված Հայրենիք և հարազատ պետություն, որոնք ծանր օրերուն կանգնած են իր կողքին և օգնության ձեռք կը մնենն իրեն՝ Հաստատելով պատմական այն ճշմարտությունը, թե սիյուռքը անտեր չէ ու պիտի չմնա անտեր» (55):

Մայր Հայրենիքի օգնությունը է՛լ ավելի զորացրեց լիրանանահայության և ամրող սիյուռքահայության մոտ այն համոզումը, որ Հայաստանը նրանց ամենապատճեն հենարանն է Հանդիսանում:

Հայրենի պետության, ինչպես նաև սիյուռքի միասնական բողոքի ձայնը և նրանց ցուցաբերած նյութական, տնտեսական և բարոյական օգնությունը մեծապես նպաստեցին լիրանանահայ զաղթականների տունդարձին, վերստին գտնելու իրենց խաղաղ ու բարգավաճ կյանքը:

ԶՀԱՄՏՎԵԼՈՎ Հայ Համայնքի որդեգրած դրական չեղոքությանը, 1979 թ. սեպտեմբերին փաղանգավոր ուազմամոլները նոր Հալածանք սկսեցին Բեյրութի արևելյան շրջանի Հայ ազգաբնակչության դեմ: Նրանց հիմնական նպատակն էր իրենց ենթարկել քրիստոնյա բոլոր Համայնքներին, այդ թվում՝ նաև Հայերին և պարտադրել նրանց կովելու ինչպես Լիրանանի քրիստոնյա և մահմեղական ազգային ուժերի, այնպես էլ պաղեստիների ու սիրիական զորամիավորումների դեմ: Հայերին «Լիրանանյան ճակատին» ենթարկելու փորձերը ձախողություն կրելուց հետո փաղանգավորները ծրագրեցին տեղահանել Հայերին արևելյան լուսներից ու Հայկական մյուս թաղամասերից, խլել նրանց ձեռքից առևտորական ու արդյունաբերական կենտրոնները: Այլ խոսքով, նրանք մտադիր էին այդ շրջանում Հաստատել իրենց կուսակցության բացարձակ տիրապետությունը:

1979 թ. սեպտեմբերի 10-ին փաղանգավորների զինված ուժերը Հարձակում ձեռնարկեցին արևելյան Բեյրութի Բուրջ Համուղ և Նարաա թաղամասերի վրա:

Փաղանգավորների վերջին Հարձակումներից մեկ տարի էլ շանցած՝

Կրկին ծանր կացություն ստեղծվեց շրջանի հարյուր հաղարավոր հայրնակչության համար:

Փաղանգավորների ջոկատները վայրագ ոմբակոծության ենթարկեցին հայկական թաղամասերը, ակումբները, դպրոցները, հաստատություններն ու առևտրական ձեռնարկությունները: Նրանք առևանգեցին շուրջ քսան անմեղ հայերի:

Առեղծված պայմաններում, Հայ երիտասարդությունն անմիջապես անցավ շրջանի ազգարնակչության անվտանգությունն ապահովելու գործին:

Գտնվելով պաշտպանական դիրքերի վրա, Հայերին Հաջողվեց ուժեղ դիմադրություն ցույց տալ և պաշտպանել Բուրջ Համուղ-Նարաա լրջանի սահմանները: Ֆրանսիական մամուլի քաղած տեղեկությունների համաձայն, «Հայ մարտիկների թիվը անցնում էր Հազարից և ունենալով իրենց տրամադրության տակ միջին և ծանր գենքեր, նրանք անակնկալի բերեցին փաղանգավորներին, Հակառակ Հայերի նկատմամբ նրանց ունեցած ուժի գերակության» (56):

Հարկավոր է նշել, որ եռօրյա ինքնապաշտպանական մարտերի ժամանակ, շրջանը, փաստորեն, դուրս մնաց իշխանությունների պատասխանատվությունից և կառավարական ուժերը չմիջամտեցին ու շփորձեցին պաշտպանել այն փաղանգավորների Հարձակումներից: Խոյնիսկ Բուրջ Համուղ-Նարաայի շրջանը բանակային ուժերին Հանձնելու մասին խորհրդարանի Հայ պատգամավորներ Խաչիկ Պապիկյանի և Սուրեն Խանամիրյանի ղիմում-պահանջը Հանրապետության նախագահ Հիլիսա Սարգսին չտվեց որևէ դրական արդյունք: Այս Հանգամանքը, ինչպես նշվում է «Ան-Նիդա» շաբաթթերթում, Հայերին մղեց առավել վստահելու իրենց սեփական ուժերին, մանավանդ, որ իշխանությունը մերժում էր իր պարտավորությունների նվազագույնն իսկ ստանձնել» (57):

Արյունալիք կոփսների ժամանակ լիրանանահայերը տվեցին շուրջ 20 դուռ, կային նաև բազմաթիվ վիրավորներ: Այդ օրերին Համայնքի քաղաքական և Հոգևոր ներկայացուցիչները զգալի աշխատանքներ էին տանում, որպեսզի կանխեին Հայկական թաղամասերի վրա կատարվող Հարձակումները: Նրանց նախաձեռնությամբ, սեպտեմբերի 12-ին, բախումներին վերջ ղնելու անհրաժեշտության հարցը բննելու նպատակով, Անթիլիասի Մեծի Տանն կիրիկի վեհարանում կայացավ Հանդիպում Հայ համայնքի ներկայացուցիչների (Խորեն Ա և Գարեգին Բ կամողիկոսների, ինչպես նաև խորհրդարանի Հայ պատգամավորների

մասնակցությամբ) և փաղանգավորների պատասխանատու ներկայացուցիչների (շեյխ Պիևո Ժմայելի պլիսավորությամբ) միջև:

Բանակցությունների ժամանակ կողմերը Համաձայնության եկան կրակի դադարեցման և վերցված պատանդների փոխանակման խնդրի շուրջ: Հաջորդ օրն իսկ, սեպտեմբերի 13-ին, փաղանգավորներին վերադարձեցին Հայերի կողմից վերցված բոլոր պատանդները, իսկ Հայ բոլոր գերիներին, որոնք բացառապես երեխաններ, ծերունիներ, կանայք էին, փաղանգավորները անամօթարար հրաժարվեցին վերադարձնել:

Հակառակ կրակի դադարեցման շուրջ կայացած Համաձայնության, փաղանգավորները Համառորեն շարունակում էին իրենց Հարձակողական գործողությունները Հայկական թաղամասերում: Նրանք կողոպտում էին իրենց տիրապետության տակ գտնվող շրջանների Հայկական Հաստատություններն ու ձեռնարկությունները և անընդհատ սպառնալիք ստեղծում Հայության ինքնուրույն գոյության համար:

Այդ օրերին լիրանանահայ մամուլը՝ «Ազդակը», «Կանչը», «Ալրարատը», «Զարթոնքը», արտաշյատելով Հայկական քաղաքական կուսակցությունների միասնական ճակատի ուղեգիծը, մեծ գեր խաղաց լիրանանահայության բարոյական կորուս բարձրացնելու գործում:

Լիրանանահայ մտավորականության շատ ներկայացուցիչներ կոչ էին անում մողովրդին մնալ իրենց դիրքերում, միացյալ ուժերով բարձրացնել լիրանանահայության մարտական ողին, ավելի լավ կազմակերպել ինքնապաշտպանությունը և դիմադրությունը:

Հասարակական գործիչ և գրող Գառնիկ Աղդարյանը «Կանչ» թերթում իր բազմաթիվ Հոդվածներից մեկում գրում է. «Լիրանանահայությունը կրնա նյութական ծանր վնասներ կրել, ենթարկվել բազմաթիվ ու բազմապիսի ճնշումներու, բայց հիմնականին մեջ կմնա անընկանութիւնը ու անահանջ: Հայ ժողովրդի զավակները, առանց կուսակցական կամ քաղաքարական խորության, կը մնան պատնեշին վրա, մատները բլթակին, կը մնան պատրաստ զոհաբերելու ամենաթանկագինը՝ կյանքը, կյանքին համար իրենց ժողովուրդին» (58):

Փաղանգավորների Հարձակումները թեյրութիւն արևելյան շրջանի Հայկական թաղամասերի վրա խստորեն դատապարտվեցին Լիրանանի Հայրենահիրական ուժերի կողմից:

Սեպտեմբերի 12-ին, կրակի դադարեցման շուրջ կայացած Համաձայնության օրը, Ազգային շաբաթան կենտրոնական խորհուրդը նիստ գումարեց քննելու Համար Հայ ազգարնակչության դեմ փաղանգավորների անձագերծած Հարձակումների Հետևանքով ստեղծված վիճակը:

Աղքային շարժումը, դատապարտելով հայերի դեմ փաղանգավորների կազմակերպած ոճիրները, հրապարակեց հայտարարություն, ուր նշվում է, որ փաղանգավոր կուսակցության նպատակն է «արմատախիլ անել հայ ժողովուրդը, զայն հեռացնել իր բնական վայրերէն, զրկել իր ապրուստի միջոցներէն և վերջնականապես չքացնել անոր լիբանանյան ազգային ինքնությունը» (59): Բացահայտելով այդ հարձակումների վայրագությունը և դրանց վտանգավոր բնույթը, Աղքային շարժման կենտրոնական խորհուրդը կոչ էր անում զորավիր կանգնել ու օգնել հայ ժողովրդին և «վճռական դիրքորոշում մը կը պահանջնեն այն բոլոր կողմերէն, որոնք շահագրգուված են արդիելու և ձախողության մատնելու լիբանանյան հողը պատուելու և անոր ժողովուրդը բաժանաժաման ընելու ծրագիրը» (60):

Փաղանգավորների անմարդկային արարքների քննադատությամբ հանդես եկան մի շարք կուսակցությունների ղեկավարներ:

Լիբանանի խորհրդարանի պատգամավոր Ալբեր Մանսուրը, վարչապետ Սելիմ Հոսի Հետ Հանդիպում ունենալով, դատապարտել է աջ ուժերի հակահայկական գործողությունները և պահանջնել, որ «իշխանությունները միջամտեն պաշտպանելու համար անմեղներին և բանակը իշեցնել այդ շրջանը, ուր ապահովության տեսակետէն բացարձակ պարապություն կը տիրե» (61):

Լիբանանի հայ համայնքի պաշտպանությամբ հանդես եկավ նաև երկրի հայտնի դեմքերից մեկը՝ չեխի Մուհամեդ Սուեյդին, իր «Ճշմարտության խոսք ի խնդիր Հայերի» ուշագրավ հոդվածով, որը տապարզվել է «Աս-Սաֆիր» թերթում: Ցանկանում ենք մեջ բերել նրա Հոդվածում արծարծված հետաքրիդ որոշ մտքեր: Հեղինակը նշում է, որ Հայերը, հաստատվելով Լիբանանում, անտեղյակ տեղի լնգին ու սովորություններին, կարողացան առաջադիմել տարիների ընթացքում իրենց աշխատասիրության չնորհիվ և, հարմարվելով շրջապատին, նրանք լուրջ և արդյունավետ աշխատանքի Հոյակապ օրինակ հանդիսացան ու քաղաքացիական ճիշտ գիտակցություն ցուցաբերեցին: Քաղաքացիական պատերազմի ժամանակ, - նշում է Մ. Սուեյդին, - Հայերը չուղեցին մասնակցել նրան ու մասցին չեղոք դիրքերի վրա և իրենց բարգոր հրարերությունները պահեցին բոլոր կողմերի Հետ, Հակառակ իրենց դեմ կատարվող ճնշման ու աշարեկչական բոլոր փորձերի: Հայերը տեղի ունեցած դեպքերը համարեցին որպես մարդկային արժեքների ուսնակոխում և խորթ՝ ճշմարտության, պարկելության, անկեղծության և հավատարմության սկզբունքների վրա հիմնված իրենց սովորություն-

ներին ու ավանդույթներին: Սակայն այդ դիրքորոշումը, Հակառակ իր ողջամտության, գրգռեց պատերազմի և զենք բարձրացնելու ջատագովներին, որոնք սկսեցին շեղել Հայերին: Ոտնձգություններն ու խմբությունները Հայորդեցին իրար ու վտանգավոր բնույթ ստացան, որովհետեւ աջերի կարծիքով նա, ով իրենց հետ չէ, իրենց դեմ է: Այս պարագան նրանց ղեկավարության մեջ ուրվագծեց տեղահանության ծրագիրը: Եվ ինչո՞ւ իրենց մեջ պահել մարդկանց, ովքեր մարոնի Հայերնիքին չեն համար չեն գործում: Այդպես սանձազերծվեց պատերազմը Հայերի դեմ: Ավարտելով իր մեկնարանությունը, չելիս Մ. Սուեյդին հաստատում է. «Հայերի դեմ սանձազերծված պատերազմը աղաղակող պացապույց է փաստելու, որ պատերազմի ջատագովների և հրձիգների տրամադրությունները հեռու են բարի լինելուց, և որ դավադրությունը տակավին շարունակվում է» (62):

Լիբանանահայության վարած հետևողական չեղոք դիրքորոշման պաշտպանությամբ հանդես եկան Լիբանանի հասարակական ու քաղաքական հայտնի շատ գործիչներ: Առանց վարանելու կարելի է ասել, որ այդ քաղաքականությունը ըստ արժանվույն գնահատվեց զրեթե բոլոր շրջանակների կողմից: Մի բան պարզ էր, որ փաղանգավորները ձգտում էին իրենց գործողությունների չնորհիվ երկրում ստեղծել անկայուն ու լարված վիճակ, նպաստակ ունենալով Հարգածել բոլոր նրանց, ովքեր հանդես էին զալիս լիբանանյան ճգնաժամի արագ ու ճիշտ լուծման, նրա միասնականության, Հողային ամրողջականության, ազգային նկարագրի ու ժողովրդագրական զարգացման պահպանման պաշտպանությամբ:

Հայարնակ թաղամասների վրա կատարված արյունուտ նախահարձակումները, առեանգումներն ու ավերածությունները ոչնչով չօգնեցին փաղանգավորներին: Հայ համայնքը, չնորհիվ իր համախմբվածության, կարողացավ պաշտպանվել ու մասլ կանգուն: Փաղանգավոր ղեկավարության կազմակերպած զինված Հարձակումները չկարողացան ընկճել ու ենթարկել Հայերին իրենց կամքին՝ հրաժարվելու ընդունած դրական քաղաքական դիրքորոշումից: Երկրի քրիստոնյա բոլոր համայնքներին իրենցից կախման մեջ զնելու ծրագրեր մշակելով, փաղանգավորներն այն կարծիքին էին, որ «Հայեկական համայնքի վերացումը և իրենց տիրապետության հաստատումը արևելյան թերութի Հայկական թաղամասների վրա կարևոր քայլ կ'անդիսանար իրենց հեքմոնիստական ծրագրերի իրականացման ճանապարհին, կընդարձակեր նրա տիրապետության տակ գտնվող շրջանների աշխարհագրական

սահմանները և կրարձրացներ նրանց քաղաքական աղդեցությունն ու կշիռը Լիրանանում» (63):

Փաստորեն, այդ ծրագրի ձախողումը բարոյական ու քաղաքական մեծ հարված էր փաղանգավորներին:

Լիրանանահայության մեջ ստեղծվել էր մի ընդհանուր կարծիք, որ Համայնքը իր համերաշխությամբ և ազգովին ի վիճակի է պաշտպանվել ու զինված դիմադրություն ցույց տալ նոր Հարձակումներին, Հավատացած լինելով, որ իր կողքին կանգնած են Լիրանանի Ազգային շարժումը ներկայացնող բազմաթիվ ուժերը և, որ արարական ու միջազգային հանրային կարծիքը ուղղված է ի նպաստ Հայերի:

Լիրանան չայ զայաւար արկրի ստիճանության և բարության կամաց արագ առաջարկությունների մեջ առաջ է գտնվում:

ՎԵՐՋԱԲԱՆ

1980-ական թվականները դարձան Լիրանանը տագնապեցնող նոր փոթորիկների շրջան:

1982 թ. իսրայելական ուսումնամունքը ներխուժեցին մայրիների երկիր, որի հետևանքով Լիրանանը մտավ ընկերային-տնտեսական ու քաղաքական խոր ճգնաժամի մեջ: Իսրայելական ներխուժումը մեծ աղեցություն գործեց Լիրանանի տնտեսության, մշակութային, կրթական և այլ հաստատությունների գործունեության վրա: Երկրի Հարավային շրջաններում և մայրաքաղաքի զանազան արվարձաններում գտնվող բոլոր ֆարբիկաներն ու գործարանները գրեթե մատնվել էին անգործության: Կրատավել էր բազմաթիվ ձեռնարկությունների արտադրողականությունը, զգալի վնասներ էր կրել արդյունաբերությունը և Համարյա կանք էր առել գյուղատնտեսության զարգացումը: Իմրակոծությունների հետևանքով ավերվել էին շատ մշակելի Հողատարածություններ, իսկ ճանապարհների շրջափակման և փոխադրական միջոցների բացակայության պատճառով ոչնչանում էին մեծիմասամբ գյուղատնտեսական արտադրանքները:

Լիրանանի տնտեսության օրըստօրե ծանրացող վիճակը և դրա աղեցությունը Հավասարապես տարածվում էին երկրի բազմահամայնք Հասարակության աշխատավոր խավերի վրա: Այդ վիճակը իր ժմատական անդրադարձը ունեցավ նաև Հայ Համայնքի վրա: Ամրող երկրի նման, լիրանանահայ Համայնքի ընկերային, մշակութային և տնտեսական կառույցները ենթարկվեցին լուրջ ցնցումների: Սակայն, Հակառակ այդ վայրիվերումներին ու դժվարություններին, կառույցները փուլ չեկան, այլ, Հարմարվելով ստեղծված կացություններին, դրանք շարունակեցին գոյատեսել ու գործել, մնալով միշտ պատնեշի վրա:

Անդրադարձական լիրանանի բազմամյա տագնապի տարիների ընդհանուր իրավիճակին, Համայնքի մտագորականության ներկայացուցիչները իրավացիորեն նշում են, որ «լիրանանահայ գաղութը հաճախ ապացույցը տվավ իր գոյատեսելու կամքին և կենսունակ ներկայության: Առաջին մեկ-երկու տարիներու հասկնալի խուճապին Հաջորդեց նոր՝

պայմաններու լույսին տակ վերակազմակերպվելու շրջանը, սպառնացող վտանգները դրական գործունեությամբ շրջանցելու և կամ՝ չեղոքացնելու անխախտ որոշումով» (1):

Քաղաքացիական երկարատև պատերազմի շրջանում հաճախակի կրկնվող դեպքերը, չնայած դարձել էին լիրանանահայության առօրյայի մի մասը և հակառակ արտագողթի երևույթին ու տնտեսական ոժվարություններին, համայնքը ջանք ու եռանդ չէր խնայում գոյատելու և կառչած մնալու լիրանայան հողին:

Պատերազմի տարիներին Լիրանանից Արևմուտքի երկրներ արտագողթած շատ հայերի, հասկանալի պատճառներով, վիճակված չէր ընտելանալ ու հարմարվել տեղի պայմաններին ու բարքերին և, հետքնարար, ստվար զանգվածների մեկնումը կրում էր ժամանակավոր բնույթ, համոզված լինելով, որ Լիրանանում քաղաքական իրավիճակը կարգավորվելուց հետո արտագողթած հայության մեծ տոկոսը կրկին կվերադառնա իր համար հարազատ դարձած Լիրանան:

Լիրանանցիները, որոնք չուրջ ուժ տասնամյակ է, ինչ հյուրընկալել են հայությանն իրենց երկրում, միշտ խոր հարգանք են տածել լիրանանահայերի նկատմամբ, և նման վերաբերմունքը շարունակվում է մինչև օրս:

Լիրանանի հանրապետության նախագահ Ամիլ Ժմայելը բարձր է գնահատել հայ համայնքի դերը երկրի կյանքում: Նա, անդրադառնալով քաղաքացիական պատերազմի ժամանակ Լիրանանի գոյատեման հանդեպ հայության աննկուն հավատքին ու լավատեսությանը, իր ելույթներից մեկում նշել է, որ հայերը «տագնապի ամենեն մութ օրերուն իսկ իրականացուցին ընկերալին ծրագիրներ, կառուցելով ընկերային կեդրոններ, օջախներ և փանքեր, լավագույն փաստը տալով հայ համայնքի կենսունակության և հանձնառության ոգիին, համայնք մը, որ իր վրա հրավիրած է անխտիր բոլոր լիրանանցիներուն համակրանքն ու սերը» (2):

1986 թ. հունիսին, երբ Լիրանանի խորհրդարանի նախագահ Հուսեյն Հուսեյնին կարճատև այցելությամբ գտնվում էր երևանում, հանդիպումներից մեկի ժամանակ, անդրադառնալով Լիրանանում հայերի խաղացած նկատելի դերին, նշել է հետեւյալը. «Լիրանանահայ համայնքը հատուկ դրվատիքի արժանացնողը այն վերին աստիճանի արտացավ, անկեղծ ու հայրենասիրական կեցվածքն է, որ լիրանանահայությունը ցույց տվակ և կը շարունակե վկայել մեր ներքին ճգնաժամի պայմաններուն մեջ» (3):

Քաղաքացիական պատերազմից տարիներ անց, 1999 թ. նոյեմբերին, Լիրանանի անկախության 55-րդ տարեդարձի առիթով, ելույթունենալով երևանում, Հայաստանի Հանրապետությունում Լիրանանի հանրապետության արտակարգ ու լիազոր դեսպան Թոնի Բադավին, Հայ-լիրանանյան բարեկամությանը անդրադառնալով, արձանագրել է, որ «Լիրանանն իր պետությամբ և ժողովրդով կարևորում է երկու երկրների միջև գոյություն ունեցող հարաբերությունները բազմաթիվ պատճառներով: Դրանցից ամենակարևորը՝ մարդկայինն ու քաղաքակրթականն է Լիրանանում գոյություն ունեցող շատ կարևոր համայնքի պատճառով, որը շատ աշխատյէ է: Այս համայնքը լիրանանյան հասարակության անբաժանելի մասն է տնտեսական, մշակութային, քաղաքական բնագավառներում» (4):

Այսօր Լիրանանը շարունակում է պահպանել սփյուռքահայության կարևորագույն կենտրոններից մեկի իր կոչումը:

Մանոթագրություններ

Առաջարկ

- Ն. Գ. Դովիաննիսյան, Լիբանանի ճգնաժամը և Լիբանանի հայ համայնքի դիրքորոշումը, Երևան, 1982 թ.:
- Հ. Լ. Վոլնով, Լиван: Էխօ ագրեսիս, Մ., 1984 թ.:
- Հ. Լ. Վոլնով, Լիվանի դնեվնիկ, Մ., 1980 թ.:
- «Սերծավորության մասին պատճենահանումներ», հ.6, Երևան, 1974 թ.:
- Օ. Մ. Գորբատօվ, Լ. յ. Չերկասկու, Բօրբա ՀՀ Հայաստանի պատճենահանումների համայնքի առաջարկը, Երևան, 1980.
- Պ. Գ. Սարգսյան, Արարական Արևելքի կոմունիստական և առաջադիմական ուժեղի պայքարը դեմոկրատիայի և սոցիալ-տնտեսական վերափոխությունների համար, Երևան, 1986 թ.:
- Լ. Ի. Մեծեդկո, ... Էտու Բլիյնի բորբական Վոստոկ, Մ., 1985 թ.:
- Ջ. Խ. Թոփուզյան, Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների պատմություն, Երևան, 1986 թ.:
- Կ. Լ. Ղալաքյան, Լիբանանահայ դեմոկրատական մամուլի պատմությունից, Երևան, 1964 թ.:
- Ո. Գ. Վարժապետյան, Դայերը Լիբանանի մեջ, ԴՐ Ա-դ, Բեյրութ, 1951 թ. 1981 թ. Ֆեբրվար, 1983 թ.:
- Ջ. Ռ. Սահեմյան, Դայության ազգային և քաղաքական հարցերու մասին, Բեյրութ, 1974 թ.:
- صالح زهر الدين ، الدرمن سعيب و تقسيمة ، بيروت ، ١٩٨٨
- R. B. Betts, Christian in the Arab East. A Political Study, London, 1979.
- R. D. Mc Laurin, The Political Role of Minority Groups in the Middle East, N. Y., 1979.
- «Կամչ», Բեյրութ, 1970-1980 թթ.:
- «Արարատ», Բեյրութ, 1970-1979 թթ.:
- «Զարդոնք», Բեյրութ, 1970-1979 թթ.:
- «Ազգակ», Բեյրութ, 1970-1980 թթ.:
- «Ազգակ շաբաթօրյակ», Բեյրութ, 1972-1973 թթ.:
- «Դասկ» հայագիտական տարեգիր Մեծի Տանը Կիլիկիո կաթողիկոսության, Անդիլիս, Լիբանան, 1983-1984 թթ.:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻ

Լիբանանի հայարենական կենտրոնները և հայ համայնքի թվաքանակը

- Ջ. Խ. Թոփուզյան, Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների պատմություն, էջ 169:
- Դայերի արտագաղթը սկսվեց Եգիպտոսից Սիրիայի հետ միասնության շրջանից

- 1958-1961 թթ., երբ Երկրում ծավալվում էր ընկերվարական միջոցառումների լիանացնամ լայն արշավ, Իրաքից 1959 թ., իսկ Սիրիայից հիմնականում 1965 թ.:
- «Ազգակ շաբաթօրյակ», Բեյրութ, 1981 թ., № 25, էջ 541:
 - Նույն տեղում, էջ 543:
 - Ս. Գ. Վարժապետյան, Դայերը Լիբանանի մեջ, հատոր Գ., 1981 թ. էջ 442:
 - Նույն տեղում, էջ 460:
 - «Ազդակ», 14.02.1974:
 - Նույն տեղում:
 - «Դասկ» հայագիտական տարեգիր, 1983-1984 թթ., A. K. Boudjikanian, Les Arméniens de L'agglomération de Beyrouth, էջ 419:
 - «Ազդակ», 1.11.1971:
 - Նույն տեղում, 10.08.1963:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Լիբանանի հայ համայնքի ընկերային-տնտեսական և իրավական վիճակը

- Ա. Քաղաքարքնակ հայ աշխատավորների ընկերային-տնտեսական դրույթունը
- Պ. Գ. Սարգսյան, Արարական Արևելքի կոմունիստական կուսակցությունների և առաջադիմական ուժեղի պայքարը դեմոկրատիայի և սոցիալ-տնտեսական վերափոխությունների համար, էջ 174:
 - Նույն տեղում, էջ 176:
 - «Դասկ», 1983-1984, էջ 386:
 - Նույն տեղում, էջ 387:
 - Նույն տեղում:
 - «Կամչ», 10.02.1973:
 - «Դասկ», 1983-1984 թթ., էջ 400:
 - Նույն տեղում:
 - «The Armenian Review», Boston, 1979, vol. 32, No 2-126, p. 132.
 - Ս. Վարժապետյան, Դայերը Լիբանանի մեջ, հատոր Դ., էջ 289:
 - «The Armenian Review», 1979, vol. 32, No 2-126, p. 132.
 - «Կամչ», 14.05.1977:
 - Նույն տեղում, 9.02.1974:
 - Նույն տեղում, 27.05.1972:
 - Նույն տեղում, 3.06.1972:
 - Նույն տեղում, 18.08.1973:
 - «Ազդակ», 13.07.1971:
 - «Կամչ», 06.1972:
 - Նույն տեղում:
 - Նույն տեղում, 9.02.1974:
 - «النادي ، ، ، بيروت ، ١٩٨٠ . / ٢٠ . ،
 - «Կամչ», 12.01.1980:
 - Նույն տեղում, 29.03.1980:
 - Նույն տեղում, 14.07.1979:

Բ. Լիբանանի հայ գյուղացիությունը

1. «Կանչ», 12.02.1972:
2. Նույն տեղում:
3. Պ. Յ. Սարացյան, Արարական Արևելքի ... էջ 178:
4. Նույն տեղում:
5. Նույն տեղում:
6. «Կանչ», 12.01.1972:
7. Նույն տեղում, 29.01.1972:
8. «Այգ», Բեյրութ, օգոստոս, 1967:
9. «Կանչ», 29.01.1972:
10. Նույն տեղում, 12.02.1972:
11. Նույն տեղում:

Գ. Լիբանանի Ազգային իշխանությունը,

նրա գործունեությունը և հայ համայնքի իրավական դրությունը

1. R. D. Mc Laurin, The Political Role of Minority Groups in the Middle East, p. 157.
2. Տես «The Armenian Review», Vol 32, June, 1979, No 2-126, p. 121, R. B. Betts, Christian in the Arab East, A. Political Study, p. 56.
3. Մեծի Տաճար Կիլիկիո կարողիության Ազգային կենտրոնական վարչության քարտարական ժողովի (15 նոյեմբեր 1968 - 22 հոկտեմբեր 1972) կազմած տեղեկագրի համաձայն, Լիբանանի թեմն ունեցել է 14 եկեղեցներ, ուր պաշտոնավարել են 22 հոգևորականներ: Թեմին պատկանել են 18 ազգային նախակրթարաններ, մեկ միջնակարգ վարժարան և երեք քոլեջներ: Աշակերտության ընդհանուր թիվը կազմել է վեց հազար: Լիբանանի թեմում գործում են զանազան հայրենակցական, մշակութային, մարմնամարդական և բարեսիրական միություններ ու կազմակերպություններ), «Ազգակ», 3.11.1972:
4. 1929 թ. ի վեր Լիբանանի թեմը գտնվել է Կիլիկիո կարողիության իրավասության ներքո:
5. «Ազգակ», 31.12.1971:
6. Նույն տեղում:
7. Նույն տեղում:
8. Նույն տեղում, 26.01.1972:
9. Նույն տեղում:
10. Նույն տեղում, 31.12.1971:
11. R. B. Betts, Christian in the Arab East, A. Political Study, p. 189.
12. «Ազգակ շարաբոյակալ», Բեյրութ, 1972, No 23:
13. Լիբանանի խորհրդարանում 99 տեղերը բաժանված են հետևյալ կերպ. քրիստոնյանները գրադարձնում են 54 տեղ (այդ թվում մարոնի համայնքը 30, հոյս ուղափառները 11, մելքիթները 6, հայ առաքելական եկեղեցին 4, հայ կառողիկետ, ավետարանական և մյուս հարանվանությունները մեկական):

Մահմետականները գրադարձնում են 39 տեղ (որից 20-ը սուննիները, 19-ը շիանները), իսկ դրուզները՝ 6:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

1975 թ. քաղաքացիական պատերազմը Լիբանանում և հայ համայնքը

1. «Ազգային ուխտի» համաձայն, Լիբանանի նախագահը պետք է լինի քրիստոնյան մարդուի համայնքից, վարչապետը՝ մահմեդական սուննի, խորհրդարանի նախագահը՝ մահմետական շիա, իսկ պաշտպանության նախարարը՝ դրուզ համայնքից:

2. R. D. Mc Laurin, The Political Role of Minority Groups in the Middle East, p. 178.

3. Ն. Դովիաննիսյան, Լիբանանյան ճգնաժամը և Լիբանանի հայ համայնքի դիրքորոշումը, էջ 9:

4. «Սովետական Դայաստան», 3.11.1979:

5. «Կանչ», 18.10.1975:

6. Լ. Լ. Վոլնով, Լիվանսկի դնեվնիկ, стр. 33.

7. R. D. Mc Laurin, The Political..., p. 183..

8. «Կանչ», 18.10.1975:

9. Ն. Դովիաննիսյան..., էջ 51:

صالح زهر الدين ، الدر من سبب وحقيقة ، بيروت ، ١٩٨٤ ص ٤٩

11. A. Der Karabetian and A. Prouadian-Der Karabetian, Ethnicity and Civil War: The Lebanese-Armenian Case, University of La Verne, California, p. 5.

صالح زهر الدين ، الدر من سبب وحقيقة ، بيروت ، ١٩٨٤ ص ٤٤

صالح زهر الدين ، الدر من سبب وحقيقة ، ص ٢٠

14. Լ. Լ. Վոլնով, Լիվանսկի դնեվնիկ, стр. 43.

15. «Կանչ», 7.02.1976:

16. Նույն տեղում, 20.03.1976:

17. Նույն տեղում, 14.02.1976:

18. Նույն տեղում, 10.04.1976:

19. «The Armenian Review», Vol 29, No 2-114, 1976, p. 194.

20. Նույն տեղում:

21. Նույն տեղում, էջ 195:

22. Նույն տեղում:

23. «Կանչ», 22.05.1976:

24. Նույն տեղում, 18.06.1977:

25. Նույն տեղում, 22.07.1978:

26. Նույն տեղում:

27. Նույն տեղում, 7.06.1976:

28. الجالية ، بيردلت ، ١٩٧٨ / ٢ / ٢ .

29. Նույն տեղում, 11.09.1978:

30. Նույն տեղում:

31. Ն. Դովիաննիսյան, էջ 35:

32. «Կանչ», 16.09.1978:

صالح زهر الدين ، الدر من سبب وحقيقة ، ص ٢٠٣

ԲՈԼԱՇԳԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ

5

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Լիբանանի հայարնակ կենտրոնները
և հայ համայնքի թվաքանակը

13

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Լիբանանի հայ համայնքի ընկերային-տնտեսական
և իրավական վիճակը

Ա. Քաղաքաբնակ հայ աշխատավորների
ընկերային-տնտեսական դրույթունը

23

Բ. Լիբանանի հայ գյուղացիությունը
37

Գ. Լիբանանի Ազգային իշխանությունը,
նրա գործունեությունը և հայ համայնքի
իրավական դրույթունը

45

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

1975 թ. քաղաքացիական պատերազմը
Լիբանանում և հայ համայնքը

53

ԿԵՐՁԱԲԱՆ

91

Ծանոթագրություններ

94

34. «Կանչ», 14.10.1978:
 35. Սույն տեղում:
 36. Սույն տեղում, 27.12.1980:
 37. Սույն տեղում, 21.10.1978:
 38. ۱۹۷۸ / ۲۰ / ۲۹ «**د الأهل**»، ۱۹۷۸ / ۲۰ / ۲۹، یروت، صلاح زهر الدين، الارمن شب و مقية من ۴۰۴
39. ۱۹۷۸ / ۲۰ / ۲۹ «**د الأهل**»، یروت، صالح زهر الدين، الارمن شب و مقية من ۴۰۴
40. «**«**د الأهل**»، ۱۹۷۸ / ۲۰ / ۲۹، یروت، صالح زهر الدين، الارمن شب و مقية من ۴۰۴»**
41. «Դամառոտ պատկեր լիբանանահայության տագնապին և վերականգնումի կամքին ու ջանքին», Ամրիլիս, 1978 թ., էջ 6:
42. «Կանչ», 11.11.1978:
 43. «Դամառոտ պատկեր լիբանանահայության...», էջ 34:
 44. Սույն տեղում:
 45. Սույն տեղում, էջ 9:
 46. Ս. Գ. Վարժապետյան, Դայերը Լիբանանի մեջ, Բ բաժին, էջ 356:
 47. «Կանչ», 4.11.1978:
 48. «Ազդակ», 15.11.1978, «Կանչ», 18.11.1978:
 49. Սույն տեղում, 13.11.1978:
 50. «Սովետական Դայաստան», 24.11.1978:
 51. «Կանչ», 25.11.1978:
 52. «Դամառոտ պատկեր լիբանանահայության...», էջ 43, «Կանչ», 18.11.1979:
 53. «Կանչ», 4.11.1978:
 54. Սույն տեղում, 25.11.1978:
 55. Ս. Գ. Վարժապետյան, Դայերը Լիբանանի մեջ, Դ բաժին, էջ 367:
 56. «Զարդում», 2.6.1979:
 57. ۱۹۷۹ / ۲۰ / ۱۶ «**د الأهل**»، ۱۹۷۹ / ۲۰ / ۱۶، یروت، د الأهل
58. Սույն տեղում:
 59. «Կանչ», 6.10.1979:
 60. Սույն տեղում, 15.09.1979:
 61. Սույն տեղում:
 62. Սույն տեղում:
 63. ۱۹۷۹ / ۹ / ۲۴ «**السفير**»، ۱۹۷۹ / ۹ / ۲۴، یروت، د الأهل
64. Ն. Դովիաննիսյան, Լիբանանյան ճգնաժամը..., էջ 73:

ԿԵՐՁԱԲԱՆ

1. Ժ. Ղանիելյան, Լիբանանահայ տպագրությունը պատերազմի տարիներուն, 1975-1984, Բեյրութ, 1986, էջ 6:
 2. «Դայերնիք», Բուստի, 11.01.1983:
 3. «Արարտ», 8.08.1986:
 4. «Դայաստանի Դանապետություն», Երևան, 22.11.1999

Նուբար Շալիստ ԶԱԼՀՄՅԱՆ

Լիբանանի հայ համայնքը երկրի
սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքում
(1970-ական թթ.)

(Ուսումնասիրություն)

Nubar D. CHALEMIAN

*The Armenian community in Lebanon
in social-economic and political life of the country
(in seventies)*

(Study)

Դրամ. Խմբագիր Միքայել Մի՛րիջանՅԱՆ
Զեավորումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ
Սրբագրումը՝ Նարինե ՍԱՍՈՅԱՆԻ
Մուտքագրումը՝ Անուշ ՍԱՐՈՒԻՆՅԱՆԻ
Անահիտ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ

ՄՇԱԿՈՒԹՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՖՈՆԴ
Երևան, Գր. Լուսավորչի 15

«ԻՐԱՎՈՒՆՔ» տպագրատուն
Երևան, Արշակունյաց 2

9(47. 925)
Q-15



Հ

Նուբար ՉԱԼԵՄՅԱՆՆ ավարտել է Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետը գերազանցությամբ: Մասնագիտությամբ արևելագետ պատմաբան է: Ասպիրանտուրան անցել է Դայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտում:

1982 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը՝ նվիրված միջարաբական հարաբերությունների խնդիրներին:

1978-1985 թթ. գործուղվել է Լիբիա և Սիրիա:

Դեղինակ է գիտական հոդվածների, հանդես է եկել գիտական գեկուցումներով ԱՍԽ-ում:

1985-1991 թթ. աշխատել է գիտությունների ազգային ակադեմիայի Սփյուռքահայ համայնքների պատմության և մշակույթի բաժնում, զբաղվել հայ սփյուռքի խնդիրներով:

1991-1992 թթ. աշխատել է Դայաստանի արտաքին գործերի նախարարությունում, իսկ այնուհետև՝ 1992 թվականից ՀՀ-ում Զինաստանի ժողովրդական Դանրապետության դեսպանատան:

Դասախոսում է Երևանի պետհամալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետում: